Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ
ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ
ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵՒԱՑԻ
ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ
ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԷՐ
ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

ԳԱՆՁԱՍԱՐ
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԵՐԵՒԱՆ 1997

Նուիրում է Հայաստանում
քրիստոնէութիւնը
պետական կրօն հռչակելու
1700-ամեակին
301-2001

ԴՏՀ 23/28
ԳՄԴ 86·37
Հ 730

Խմբագիր՝ Մեսրոպ քահանայ Արամեան

Հ 730 *Հոգեւոր կեանքի մասին.–Եր.–: Գանձասար, 1997.– 104 էջ:*

Ժողովածուն ընդգրկում է հայ հայրերի եւ նշանաւոր վարդապետների բարոյա-խրատական բնոյթի երկեր, որոնց զգալի մասը լոյս են տեսել «Գանձասար» աստուածաբանական կենտրոնի առանձին հրատարակութիւններով: Ա.Ն. Նարեկացու «Խորհուրդների մասին», «Խրատ խոնարհութեան մասին» եւ Գր. Վկայասէրի «Խոստովանութեան, զղջման եւ ապաշխարութեան մասին» խրատների արեւելահայերէն թարգմանութիւնը ընթերցողի ուշադրութեանն է յանձնւում առաջին անգամ:

Հ $\frac{0403000000}{846(01)-97}$ 97 ԳՄԴ 86·37

© «Գանձասար» աստուածաբանական կենտրոն, 1997

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Ա
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. ՊԱՐԳԵՒ
ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՅ

Ի յիշատակ
ԿԱՐՊԻՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ՝
Մեկենասութեամբ
Լիոնաբնակ բարեկամների

L'Ouvrage édité avec le
Concours des Amis Lyonnais
à la Mémoire de
GARBIS MANOUKIAN

ՄՈՒՏՔ

Ներկայացուող հայրաբանական երկերի զգալի մասը լոյս են տեսել «Գանձասար» աստուածաբանական կենտրոնի առանձին հրատարակութիւններով: Անանիա Նարեկացու «Խորհուրդների մասին», «Խրատ խոնարհութեան մասին» եւ Գրիգոր Վկայասէրի «Խոստովանութեան, զղջման եւ ապաշխարութեան մասին» խրատները ընթերցողի ուշադրութեանն են յանձնւում առաջին անգամ[*]:

Նիւթերի ընտրութիւնը կատարելիս մենք բացառապէս նկատի ենք ունեցել մեր հայրերի եւ նշանաւոր վարդապետների բարոյախրատական բնոյթի գործերը, այսինքն՝ ինչ են ուսուցանում մեր հաւատքի ուսուցիչները, ինչ շեշտադրումներ են կատարում՝ ներանձնական կեանքի մասին խօսելիս: Անշուշտ, «Հոգեւոր կեանքի մասին» վերնագիրը շատ աւելի լայն է, քան ներկայացուող հրատարակութեան ընդգրկումը: Մեր նպատակն է եղել ընթերցողին ծանօթացնել քրիստոնէական կեանքի մի շարք կարեւոր սկզբունքների եւ առաքինութիւնների հետ՝ ըստ Հայ Եկեղեցու վարդապետութեան:

Փրկութեան ճանապարհով ընթանալիս՝ քրիստոնեան անընդհատ կալիք է զգում հոգեւոր գիտելիքների, որպէսզի կարողանայ քննել իր սեփական փորձառութիւնը եւ գտնել երկնային վերընթացի իրեն հայազատ ուղիները: Այս առումով շատ կարեւոր է անդրադառնալ

---

[*] Անանիա Նարեկացու «Խորհուրդների մասին», «Խրատ խոնարհութեան մասին» եւ Գրիգոր Վկայասէրի «Խոստովանութեան, զղջման եւ ապաշխարութեան մասին» երկերի քննական բնագրերը հրատարակութեան են պատրաստւում «Հայ աստուածաբանական մատենադարան» շարքով՝ ըստ Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի հետեւեալ ձեռագրերի. Անանիա Նարեկացի «Խորհուրդների մասին» ՄՄ 2680 (321բ-322բ), ՄՄ 5707 (330ա-331ա), ՄՄ 2711 (136ա-138ա), Անանիա Նարեկացի «Խրատ խոնարհութեան մասին» ՄՄ 2680 (320ա-321բ), ՄՄ 2335 (165ա-165բ), ՄՄ 641 (23բ-26բ), ՄՄ 2711 (138ա-139բ), ՄՄ 5707 (328ա-329ա), Գրիգոր Վկայասէր «Խոստովանութեան, զղջման եւ ապաշխարութեան մասին» ՄՄ 8029 (50բ-54բ), ՄՄ 7248 (402բ-406բ), ՄՄ 8030 (192բ-198բ): Այս բնագրերն էլ հիմք են ծառայել ներկայացուող թարգմանութիւնների համար:

մեր Հայրերի կողմից աւանդուած Հարուստ աստուածաբանական ժառանգութեանը, որն արդիւնք է նրանց աստուածամերձ կեանքի եւ հանաչողական զարմանալի խորութեան: Յաւօք, այդ ժառանգութիւնը մնում է գրեթէ չուսումնասիրուած, ուստի եւ հնարաւոր չէ որեւէ լուրջ պատկերացում ձեւք բերել հայ հոգեւոր գրականութեան օրինաչափութիւնների եւ առանձնայատկութիւնների մասին: Յուսով ենք, որ այս գրքոյկը օգտակար կլինի բոլոր նրանց համար, ովքեր ունեն հոգեւոր փնտրտուքներ եւ փորձում են մօտենալ իրենց Հայրենի աւանդութեանը:

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այսուհետ սկսենք նաեւ խօսքով ճառել մարտիրոսների մասին, որպէսզի պատուենք նրանց յիշատակը եւ երանի տանք նրանց ճշմարիտ վկայութեան եւ սիրոյ համար եւ նրանց բարեխօսութեամբ բազում վարձք ստանանք մեզ համար: Այլեւ սաղմոսներով, օրհնութեամբ եւ հոգեւոր երգերով մատուցենք Աստուծոյ պաշտօնը[1] սուրբ սրտով գովելով անսկիզբ էութիւնը եւ ամենազօր Տէրութիւնը, որպէսզի արժանի դարձնի մեզ սուրբ ժառանգութեան բաժնին, [արքայութեան] խոստումներին՝ Տէրութեան լոյսի եւ փառքի մէջ: Եւ բոլոր մարդիկ, որ հաւաքւում են սուրբերի յիշատակութեան ժամանակ, թող հաւատքով եւ սուրբ սիրով ճանաչեն նրանց նահատակութեան հանդէսը: Եւ նրանց բարեխօսութեամբ [պէտք է] աղաչել Աստծուն՝ ջերմեռանդ արտասուքներով, սուրբ սրտի պաղատանքներով օր ու գիշեր հսկելով, որպէսզի առաքինասէր վարքով զերծ պահի մեզ այս աշխարհի չարից: Այն սուրբերի պէս, որոնց յիշատակը կատարւում է ի փառս Աստուծոյ, նաեւ [նրանց պէտք է] իրենց մաերմութեան հանդէսը ցոյց տալ բոլորի Տէր եւ արարիչ Աստծուն, որ նրանց այնպիսի ղաղթութիւն տուեց բռնաւորների եւ ճշմարտութեան հակառակորդների հանդէպ: Որպէսզի մեզ էլ տայ շնորհներ՝ յաղթելու մեզ վրայ բարձրացող երեւելի եւ աներեւոյթ բոլոր ճակատամարտերի դժուարութիւնները եւ երկրպագութեամբ փառաբանութեան պաշտօն ընծայելու Աստծուն:

Քանզի այս իսկ է սուրբերի կամքը, որ ժողովուրդը նոյնպէս նրանց բարեխօսութեամբ Աստծուց յորդորուի պաշտօն [մատուցելու], եւ այսպէս աշխատութեան փոխարէն [վարձք] են Ամենասուրբ Երրորդութիւնից: Քանզի Պօղոսը եւ Բառնաբասը Տէր Յիսուս Քրիստոսի անուամբ նշաններ գործեցին՝ ի ծնէ կաղին բժշկելով, եւ զարմացրին բոլորին, մինչեւ որ քուրմերը նրանց երկնքից իջած եւ մարդու կերպարանք ստացած աստուած համարեցին: Ուստի զոհելով կամենում էին

[1] Աղօթքների, ընթերցուածների, հոգեւոր երգերի որոշակի կանոն է: Այժմ կատարւում է Պատարագին նախորդող Դիշերային ժամերգութեան ժամանակ ննջեցեալների յիշատակի համար:

պատուել նրանց որպէս աստուածների: Եւ այս պատճառով [նրանք] պատառեցին հանդերձները եւ ազաղակելով ասում էին. «Մենք ձեզ նման մարդիկ ենք՝ ծառաներ բարձրեալ Աստուծոյ, որ արարեց երկինքը եւ երկիրը եւ նրանց արարածներին. եւ սա Նրա անունո՛վ բժշկուեց»: Այսպէս ասելով՝ հազիւ լուեցրին ամբոխին, որովհետեւ աւելի լաւ համարեցին մեռնել, քան Աստուծոյ պատիւն իրենց վերագրել եւ փառաւորուել մարդկանցից [տե՛ս Գործք ԺԴ 7-17]:

Նման բան արեց սատանան, որովհետեւ Աստուծոյ պատիւն իրեն վերագրեց եւ բաժանուեց Իր Արարչի խնամքից, ընկաւ հրեշտակային դասերի փառաւորեալ կարգերից, յոյսի փոխարէն դարձաւ խաւար եւ գեհենի պատժի ժառանգորդ: Քանզի Աստուծոյ ծառաներ սուրբ առաքեալներին, մարգարէներին եւ ճշմարիտ վարդապետներին անարգում էր, քանզի գիտէին սատանայի վայր ընկնելու մասին՝ հպարտութեամբ ամբարտաւանելու եւ ամբարհաւաճելու պատճառով, եւ՝ խոնարհների ու հեզերի՝ ընկածների տեղերը բարձրանալու մասին: Մանաւանդ Քրիստոս, քանզի ըստ տնօրէնութեան առաւել յայտնի կերպով ցոյց տուեց Իր անճառ խոնարհութիւնը, որի մասին էլ ասում է. «Սովորէ՛ք Ինձանից, քանզի հեզ եմ եւ խոնարհ սրտով, եւ հանգիստ կգտնէք ձեր անձերի համար» [Մատթ. ԺԱ 29]:

Եւ բոլոր սուրբերն իրենց առաջնորդութեամբ, ճշմարիտ խոնարհութեամբ բոլոր Աստծուն հաւատացողներին ուղեկցում են դէպի բարձունքները՝ Տիրոջ մօտ, որպէսզի սուրբերի բարեխօսութեամբ փրկութեան եւ սխալանքների քաւութեան արժանանան բոլորի Փրկչից եւ այլեւս չվերադառնան դէպի սատանայի դժնդակ վարքը: Այլեւ [պէտք է] լսել իւրաքանչիւրի նահատակութեան եւ առ Աստուած կատարեալ սիրոյ մասին, [իմանալ], որ նրանց համբերութեան յոյսն Աստուծոյ նկատմամբ է, եւ նախանձախնդրութիւն ձեռք բերել Քրիստոսով: Որ հրով ու ցրտով, ջրով ու սառնամանիքով, քերանքներով[2] ու հարուածներով, բանտերով ու կապանքներով, սովով ու ծարաւով, սրով ու մահով, սպառնալիքներով ու ողոքանքներով[3] [փորձուեցին], որպէսզի երկչոտը զարհուրի, եւ արին փափկի: Այլ այսպիսի կարիքների, չարաչար տանջանքների վշտերը, նեղութիւնները եւ

2 քերանք- մաշկը քերելու տանջանքի գործիք

3 ողոքանք- անուշ խօսքեր. յորդորանք. աղաչանք

մարմնի տանջանքները ոչնչով [չկարողացան] քակտել ու խզել սուրբ սէրն Ամենասուրբ Երրորդութեան նկատմամբ: Եւ Աստուծոյ սիրոյ առաւելութեան պատճառով համարձակութիւն ստացան բարեխօսելու Տիրոջը: Քանզի բազում համբերութեամբ հակառակորդներից ընդունեցին այս ամէն տեսակ դժնդակ տանջանքները՝ Նրա երախտաւոր սուրբ սիրոյ համար, որ սիրեց մարդկանց, որ հրաւիրեց ու կանչեց:

Արդ, սուրբ սիրով սուրբերի հետ հետեւենք Կանչողին, այստեղի աշխատութեամբ, ջերմեռանդ շնորհալից արտասուքներով փնտրենք այնտեղի հանգիստը, Սուրբ Հոգու հրով հանգցնենք ցանկութեան հուրը, չար խղճմտանքից սրբենք մեր անձերի երեսների գգայարանները եւ աներեւոյթ հոգու շարժումները: Որպէսզի, առ Աստուած սիրով ճշմարտապէս հաստատուած, կարողանանք սուրբերի ժառանգութեանը, [արքայութեան] խոստումներին արժանանալ այս աշխարհի կեանքի վախճանից յետոյ: Որպէսզի այսպէս հաղորդակցուենք սուրբերի ժողովին եւ տեսնենք [նրանց յիշատակն] ի փառս ամենակալ Աստուծոյ, որ յաղթութիւն տուեց նրանց չար բռնաւորների նկատմամբ. եւ յաւիտենապէս փառաւորուեցին երկնքում եւ երկրի վրայ:

Այսպէս [պէտք է] յուսալ եւ հաւատալ սուրբերի ժողովին եւ բարեխօսութիւններին՝ որպէս քահանաների, որ կանգնած են Նրա առջեւ, որ նստած է Հոր աջ կողմում. եւ թող իւրաքանչիւրին աղօթքով պատարագ ընծայեն՝ կենդանի եւ վախճանուած հաւատացեալ ժողովրդի կամաւոր եւ ակամայ սխալանքների հաշտութեան համար: Եւ իրենց ճշմարիտ հաւատով, հանգիստաւոր ճգնութեամբ, առաքինասէր վարքով, արդար, սուրբ եւ ճշմարիտ բազձանքով, շնորհալից սիրով, արտասուագոչ պաղատանքով թող հաւատան, որ բոլորի Փրկչից կստանան խնդրելին՝ ըստ հաւատացեալ ժողովրդի յոյսի, մանաւանդ՝ փրկական Խորհուրդի սրբապէս կատարումով ի Քրիստոս Յիսուս:

Այսպէս պէտք է իմանալ սուրբերի բարեխօսութիւնը հաւատացեալ ժողովրդի համար: Քանզի իրենց մտերիմ վաստակներով, իսկ որոնք իրենց մարմինները երկրի վրայ որպէս անուշահոտութիւն պատարագեցին Աստուծոյ անուան համար, նաեւ նրանց սուրբ հոգիները հոգեւոր բարեխօսութեամբ Աստծուն մղում են ողորմելու աշխարհին: Եւ նրանց ոսկորների նշխարները փրկութեան շնորհ են ընծայում հաւատացեալների ժողովին, ինչպէս քաջ յայտնի է բոլորին, որպէսզի

Նրանց նշխարներում բնակուող Աստուծոյ սէրը երեւայ եւ նշաններով իմացուի երկրի վրայ:

Իսկ արդ, [սուրբերն] իմանալիներով ունեն յուսացած բաների հաստատութիւնը եւ Աստուծոյ մերձաւորութեան ներկայութիւնը, բարեխօսութեան համարձակութիւնը, որ անտեսանելի է մարմնաւորներիս. իսկ [մենք] նրանց նշխարների եւ սուրբ ժողովների մէջ [գործող] Աստուծոյ շնորհատուր զօրութեան երեւելի [նշաններով] պէտք է իմանանք աներեւոյթները՝ [որպէս] առաւելագոյն այցելութիւն Տիրոջից: Քանզի հոգիները, ասում է, առաւել են, քան մարմինները ե՛ւ Արարչի, ե՛ւ արարածների համար: Քանզի այստեղ՝ երկրի վրայ, եւ երկնքում Արարչից այսպիսի շնորհներ տրուեցին առաքեալներին, մարգարէներին, մարտիրոսներին եւ բոլոր ընտրեալ սուրբերին: Որպէսզի նրանց առաջնորդական վկայութիւններով եւ առաքինասէր վարքով հաճոյ լիննենք Աստուն, եւ նրանք իրենց մշտատեւ բարեխօսութեամբ պատճառ լինեն մեր փրկութեան եւ կեանքի: Եւ մենք երանի տանք Աստուց փառաւորուածներին, որ Աստուծոյ սիրոյ համար իրենց անձերը չարչարանքների ու մահուան մատնեցին եւ անմահ Թագաւորից ստացան անապական պարգեւներ եւ պատիւ: Այլեւ Աստուծոյ բոլոր սուրբերի վկայութեան յիշատակներին Ամենասուրբ Երրորդութեանը պաշտօն եւ փառաբանութիւն մատուցենք: Քանզի այսպէս է բոլորի Տիրոջ եւ Նրա բոլոր սուրբերի կամքը, քանզի Նա՛ է արժանի փառքի եւ պատուի բոլոր սուրբերից եւ արարածներից այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՅՈՐԴՈՐԱԿ

ԽՈՍՏՈՎԱՆԱԿԱՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Մեծ են Տիրոջ պատուիրանների մեծապատուութիւնները, եւ անբաւ՝ բարերար Աստուծոյ շնորհները, քանզի որոնց նախապէս ճանաչում էր, նրանց էլ կանչեց դէպի անվախճան կեանքի յոյսը եւ արդարացրեց ու փառաւորեց: Ովքեր հաւատքով ու երկիւղով պահեցին Նրա պատուիրանները եւ՝ հնազանդուեցին Նրա ամենախնամ սուրբ սիրուն, ընդունեցին կեանքի խօսքն իրենց անձերի մէջ եւ պտղաբերեցին ու աճեցին առաքինութեան վաստակներով, որոնց վարձքն անփոփոխ պահւում է հանդերձեալ կեանքում: Իսկ ծոյլերն ու անհնազանդները, որոնք արհամարհեցին ճշմարտութեան խօսքը եւ խափանեցին արդարութեան պտուղը, չարաչար սերմերն ընդունեցին թշնամուց եւ, մոլորուած ուղիղ ճանապարհներից, մեղանչեցին ճշմարտութեան աւանդի եւ խնամակալ սիրոյ առջեւ, նրանց վախճանը կորստեան վիհի մէջ է:

Սակայն բարերար Աստուծոյ խնամքը չի անտեսում նրանց, ովքեր դառնում են դէպի Նա: Բացում է ողորմութեան շնորհի դռները, ընդունում է գթութեամբ, երախտաւոր սուրբ սիրով եւ յանձնանում Նրա գթութեանն ապաւինածներին: Եւ երբ սգաւորը զղջում է ճշմարիտ խոստովանութեան խոնարհուած ու փշրուած սրտով, Փրկիչը գթում է նրան, ողորմում եւ այցելում: Քանզի ծածկուած դառը մաղձը դուրս փսխեց եւ ցոյց տուեց, թէ՝ «Ատեցի մեղքերը եւ անարգեցի, սիրեցի Քո օրէնքները» [տե՛ս Սաղմ. ՃԺԹ 113]՝ առողջանալու, սրբուելու եւ արդարանալու:

Եւ, ըստ ունակութեան, ցաւերի համար մարդասէր բժշկից թող ընդունի առողջութեան դեղերը, [այսինքն]՝ արդարութեան վարքը՝ ընդդէմ իր ունեցած մեղքերի եւ դժնդակ ցաւերի, որպէսզի այլեւս չընկնի նոյնի մէջ. եւ [գուցէ] այլեւս չգտնի մարդասէր Բժշկին:

Քանզի Տիրոջ խօսքը ծանրաբեռնուածներին խոստովանութեամբ դէպի ապաշխարութիւն է կանչում, մեղքերով խաւարածներին՝ դէպի արդարութեան լոյսը, մոլորուածներին՝ դէպի ճշմարտութեան գիտութիւնը, արդարութեան ճանապարհներից շեղուածներին ուղղութեան

բերում՝ խոստովանութեամբ մահարեր վարքը վերստին նորոգելու կեանքի մէջ եւ սատանայի բոլոր խարդախութիւնները յուծարելու: Քանզի «կամենում է, որ ամէն մարդ ապրի,- ասում է առաքեալը,- եւ ճշմարտութեան գիտութեանը հասնի ամենագիտ սիրոյ տեսչութիւններով» [տե՛ս Բ Պետր. Գ 9, Ա Տիմ. Բ 4]:

Քանզի խոստովանութիւնը, ասում է մարգարէն, մեծ վայելչութիւն է Աստուծոյ եւ Նրա քահանաների առաջ [Սաղմ. Դ,Ե 6]. ահա թէ ինչու՝ «Ասացի, թէ ինքս կպատմեմ իմ մեղքերը, եւ Դու կներես իմ մեղքերի բոլոր ամբարշտութիւնները» [Սաղմ. Լ,Ա 5]: Որովհետեւ վէրքերն է բանում եւ ցաւերը յայտնում, զղջմամբ վրան է դնում բժշկութեան զեղը՝ ապաշխարութիւնը՝ հոգեւոր եռանդով, հանապազորդ արտասուալից աղօթքների մէջ՝ օր ու գիշեր անդադար: Եւ [ապաշխարողը], մարմինը պահքով ճնշելով, [պէտք է] խղճալի կերպարանք ստանայ, որպէսզի Աստուծն բազմախնամ շնորհներով գթալու խոնարհեցնի՝ մեղքերի թողութեան համար: Որովհետեւ ապաշխարութիւնը ոչ թէ մի բանով է կարգւում, այլ բազում իրերով է շինւում եւ արդարութեան որոշակի չափի կանոնեցնում ընկածին ու յափշտակուածին:

Ապաշխարութեան ժամանակ նախ, առաջինը, [պէտք է] զզջալ, յանցանքները խոստովանել, անձն արտասուքի ընդունարան դարձնել անդադար աղօթքներով, աքնութեամբ ու միշտ պահքով եւ մեծ ապաշաւանքով հանապազ սգալ գործած յանցանքները: Երկրորդ՝ ըստ բոլոր վնասների ատել մեղքերն ու մեղքերի գործակիցներին եւ կշտամբել միաբն ու զգայութիւնները, որոնք զէպի չարը հակամիտեցին եւ չպահեցին հոգեւոր օրէնքները, որոնք նրանց աւանդուեցին Արարչից: Երրորդ՝ սիրել արդարներին ու առաքինիներին եւ նրանց գործակիցներ դարձնել առ Աստուած աղօթքներով ու բոլոր բարի գործերում, որ յորդորում են զէպի ճշմարտութեան կարգերի աւանդները: Չորրորդ՝ յանցաւորներից խորշել մտքով, խօսքով, ամօթով ու պարկեշտ տեսութեամբ, աւելի լաւ համարել նեղութիւն կրել արդարների հետ, քան հանգիստ՝ անիրաւների հետ: Հինգերորդ՝ Տիրոջ ահի ու երկիւղի մէջ կրթուել, մտքից բաց չթողնել վախճանի օրը, այլեւ մեղաւորների պատիժները, եւ մեղանել անդամները կրքերով ու ցանկութիւններով [հանդերձ] [տե՛ս Գաղ. Ե 24]: Վեցերորդ՝ օր ու գիշեր հսկել անձի փրկութեան համար, թէ ինչպէս կարելի է մեղքերը խափանել եւ փրկուել բարկութիւնից, որ գալու է չապաշխարողների վրայ: Եօթերորդ՝ չմոռանալ սեփական անձի անկումը, չպղերգանալ բարեպաշտութեան ճգնութիւններում, չվերադառնալ նոյն վնասին՝ չկարենալով վերստին բժշկուել: Ութերորդ՝ առողջացած, զգաստացած, սրբուած՝ ճանաչել ներքին ու արտաքին մարդուն եւ ճշմարիտ ապաշխարողներին խոստացուած աւետիսների յիշատակները: Իններորդ՝ ըստ հոգեւոր օրէնքի եւ Քրիստոսի Աւետարանի կատարելով բոլոր հրամայուածները՝ վերստին նորոգման սպասել քաւութեան Պատարագի միջոցով: Տասներորդ՝ երեւելի եւ աներեւոյթ [առաքինութիւններով] աճելով բոլոր բարեգործութիւնների մէջ, հոգու եւ մարմնի մեղքերի սպիները ջնջելով եւ ապաշխարութեան հանդէսում յաղթող դառնալով՝ կարենալ համարձակութիւն ունենալ մեղսաքաւիչ, կենդանարար Խորհրդի հանդէպ եւ հաղորդակից, մարմնակից ու կցորդ լինել անճառելիներին: Եւ այնուհետեւ վերինը խորհել, ուր Քրիստոս է նստում, Նրա հետ նաեւ՝ սուրբերը՝ [որպէս] երանութեան առհաւատչեայ:

Ճշմարիտ խոստովանողներն ու ապաշխարողներն ազատւում են Քրիստոսի փրկաւէտ Մարմնով ու Արեամբ: Քանզի դա է մեր յոյսն ու քաւութեան առիթը, եւ զրանով են լինում ազատութիւն եւ մուտք դէպի արդարների ուրախութիւն ու ժառանգութիւն՝ Քրիստոսի սուրբ սիրոյ երախտիքներով, որն արդարացնում է ապաշխարող մեղաւորներին: Որովհետեւ ինչպէս [երբ] սուրբ հատում է մարմինն ու վտանգ հասցնում անձին, [վերջինս] բժշկի կարիք է ունենում, որպէսզի որոշ դեղերով վերացնի վտանգները՝ առողջացնելու համար, այդպէս նաեւ ցանկութեան հարուածներն ու աղտեղի յիշողութիւններն ապաշխարութեան դեղերով [են բուժւում], վէրքերը ջերմեռանդ արտասուքով լուացւում եւ անարատ սրբութեամբ բժշկւում: Քանզի արտասուքի դռներ են նեղութիւնների վշտերն ու ախտերի ցաւերը, վնասների կսկիծները, հոգիների տագնապները, շահից վրիպումները, թշուառ պատահարները, բռնաւորների կողմից վտանգները, յանկարծահաս տնանկութիւնը, սիրելիների կորուստը, դժնդակների անտանելի պէսպէս ցաւերը եւ սրանց նման այլ [չարիքներ]: Իսկ հոգու շարժումները, չար դեւից յափշտակուելով ամէն տեսակ ցանկութիւնների մէջ, վշտացնում են միտքը դժնդակ, ապերախտ խորհուրդներով, որոնք չունեն արդարութեան կայաններ:

Ուստի պէտք է արտասուալից պաղատանք [մատուցել] Փրկչին, որ զերծ պահի այդքան մեղաներից։ Եւ վրէժխնդրութեան հետ հոգեւոր [կեցուածքով] նայել նրանց, առաքինութեան դէնքերով վայր կործանել նրանց եւ զօրավիգ ունենալ մեր կեանքի ապաւէն Յիսուս Քրիստոսին։ Եւ այստեղից, բարիքների ցանկութիւններով, Աստուծոյ այցելութիւնը ստանալ, հաւատքով ընտանիների հանդէպ՝ գութը, Աստծուն սիրող հեռաւորների կարօտը, հոգեւոր գիտերի մտերմութեան ծարաւը, սուրբերի հանդէպ փափագումը, խաղաղութեան քարոզը, խոնարհութեան խոկումը, խրատների քաղցրալից խօսքերը, որոնք կարծրացած միտքը յորդորում են առաքինութեան։ Բոլորին օգտակար [յանձնել] փրկութեան սիրոյ խնամքին եւ [յորդորել] դէպի հոգեւոր [բարիքների] լրման եւ բարի վայելքների օգուտները եւ նեղութեան մէջ համբերելու՝ վայելելու համար շնորհների պարգեւները, որ տրւում են կեանքի յստակ Աղբիւրից։ Ուստի ամբողջ սրտից մտերմութեամբ [կատարուող] աղօթքներն ու խնդրուածքները շնորհներով տանում են դէպի Նաւահանգիստ։

Եւ միտքն արտասուքով զղջմամբ ճնշելով խոստումների յիշատակներով՝ խնամալից պաղատանքով, եւ անդադար խանդաղատանքով [պէտք է] շնորհալից արտասուք հեղել՝ մաքրելու միտքն ու մարմինը, որոնք իրրեւ անմաքրութիւն ստացել էին չար ու այսեղի ցանկութիւնները։ Քանզի արտասուքը մեղքերի հարուածների դառնութիւնը սրբում ու ողջացնում է, խոտանը դէն նետում մտքից ու զգայութիւններից, եւ [զղջացողը] Փրկչի նախախնամական սիրոյ հովանու ներքոյ է լինում եւ յոյսով ստանում [Տիրոջ] մխիթարութիւնը։ Արտասուքը միտքը շարժում է դէպի Աստուած, մեղքերի թմրածութիւնից, ասես քնից, արթնացնում եւ հոգեշահ օգուտների սիրով վառում զգաստութեան զգուշութեան համար։ Արտասուքը խմեցնում է հոգեւոր լմպելիքը՝ սուրբ սիրոյ խնամքով, Բաբելարի անսչութեան քաղցր կամքի յիշատակների գութով՝ բխած շնորհալից աղբիւրից՝ ապատութեան եւ յաւիտենական կենդանարար յոյսի ժառանգութեան համար։

Այսչափ են օգուտները արտասուքով զղջումից, որոնք [մարդկային] հոսանուտ բարքը շարժում են դէպի փրկութեան գիտերն ու Աստուծոյ կամքի պահպանութիւնը եւ միտքն ամփոփում Աստուծոյ հաճութեան մէջ։ Եւ որքան բարիքների շահ [կայ] սրանցից, այնքան առաւել մնաս [կայ] ծուլութիւնից եւ սրտի խորքից առաջ եկող՝ արտասուքի [հանդէպ] արհամարհանքից։ Եւ պղերգութիւնից արգելափակուած՝ չարի ազդման պատճառով դժոխակների մուտք է լինում, որոնք միտքն ու անդամները շարժում են դէպի ամէն տեսակ չարիքները, եւ զղջումն ու արտասուքը հեռանում են ծուլութիւնից ու խստացած, ամբարտաւան սրտից, որը քամահրում է շնորհների զեղջն ու չի հոգում նրա համար, ինչից զրկուեց։ Եւ բարիքների փոխարէն ընդունում է չարիք, արհամարհութիւն, ամբարտաւանութիւն, ապիրատութիւն, յամառութիւն, ամբարշտութիւն, անափառութիւն, ագահութիւն, որկորստութիւն, ցանկութիւն եւ չարի այլ ներմուծութիւններ։ Եւ սրանցից բռնուածը դժուարութեամբ է բժշկւում։

Սակայն մարդասէր Բանն անյոյս չի թողնում [նրանց], ովքեր զղջում են, հնազանդւում Աստուծոյ ահով եւ ընդդէմ մեղքերի ցոյց տալիս ուղղութիւն, [ընդդէմ] անիրաւութեան՝ իրաւունք, [ընդդէմ] անսրբութեան՝ սրբութիւն, [ընդդէմ] ամբարտաւանութեան՝ խոնարհութիւն, [ընդդէմ] բարկութեան՝ հեզութիւն, [ընդդէմ] որովայնամոլութեան՝ պարկեշտութիւն, [ընդդէմ] հեղգութեան՝ պնդութիւն, [ընդդէմ] ստութեան՝ միշտ ճշմարտութիւն, [ընդդէմ] անհնազանդութեան՝ հնազանդութիւն, [ընդդէմ] ագահութեան՝ չափաւորութիւն, [ընդդէմ] կեղծաւորութեան՝ պարզամտութիւն, [ընդդէմ] երդմնահարութեան՝ չերդուելը, [ընդդէմ] մախանքի՝ բարերարութիւն, [ընդդէմ] ոխակալութեան՝ անոխակալութիւն, [ընդդէմ] խստութեան՝ քաղցրութիւն, [ընդդէմ] ատելութեան՝ միշտ սուրբ սէր, [ընդդէմ] անզղջութեան՝ արտասուքով զղջում, [ընդդէմ] առանց խղճմտանքի անխոստովանութեան՝ մեղքերի ինքնայանդիմանական խոստովանութիւնը, [ընդդէմ] անյուսութեան՝ ճշմարիտ յոյսը, [ընդդէմ] թերահաւատութեան՝ ճշմարիտ հաւատքի հաստատումը [սեփական] անձում եւ ճշմարտութեան քարոզումն ուրիշներին։

Այս է ապաշխարութեան ստոյգ աւանդների դէմքը. գործել [այն] ամէնը, ինչ հակառակ է մեղքերին՝ բոլոր տեսանելի եւ անտեսանելի արդարութիւնները՝ ստոյգ ապաշխարողների մտերիմ խորհուրդներով ու խոստումների յիշատակներով եւ դարձեալ՝ ամենքի Տիրոջ կողմից չապաշխարողներին [սպասուող] սպառնալիքներով։ Սրանցում [պէտք է] զգուշանալ եւ Տիրոջ ահով պատրաստ լինել [այն ամենին, ինչ] հաճելի է Աստծուն՝ Աստուծոյ անվրէպ գիտութեան [եւ] Դատաստանի Օրը (երբ խորհուրդներից, խօսքերից ու գործերից ոչինչ

չի ծածկուելու) արդար Դատաւորի հաշիւ պահանջելու յիշատակներով:

Քանի որ առաքինիների ու պղերգների, հաւատացեալների ու անհաւատների ընտրութիւն եւ ըստ արժանիքների հատուցում [պիտի լինեն]: Պատիւները, մեծարանքներն ու երանութիւնները յաղթողներինն են, ովքեր մարտնչեցին ընդդէմ մեղքերի ու հակառակորդի եւ յաղթեցին ու պսակուելով փառաւորուեցին: Այլեւ [նրանցն են], ովքեր ճշմարտապէս ապաշխարեցին իրենց յանցանքները: Իսկ տանջանքների ահաւոր սպառնալիքը պաշարում է անիրաւներին ու ամբարիշտներին [եւ տանում] դէպի պատիժների տոչորումը, որովհետեւ չապաշխարեցին: Եւ ապաշխարութեան կարգի տակ խոնարհուածներին ու հնազանդուածներին, ըստ Իր բազում ողորմութեան, ընդունում է կեանքի օթեւանները՝ ըստ մաքրման արժանաւորութեան: Այսպէս, նեղուածներն ու վտանգուածներն ինչ-ինչ սխալանքների համար արտասուքով ու բարի շարժումներով ողորմելու են դարձնում մարդասէր Տիրոջը:

Եւ ինչպէս մանուկներն են, որ չգիտեն պէտք եղած բաները խօսքով ստանալ մայրերի խնամքից, այլ դրանք խնդրում են արտասուքով ու ստանում սիրոյ խնամքից, որովհետեւ չեն դադարում լալուց, մինչեւ մայրական ողջ խնամքը չի կատարւում, ապա դադարում են [լալուց], զուարճանում ու հանգստանում, այսպէս էլ մե՛զ պէտք է լինել բարեգութ Տիրոջ հանդէպ, որ մեզ աներեւութապէս խնամում է արարչական սիրով, նատում անարուեստ Աթոռներին եւ Իր բարերարութեամբ խնամում արարածներին: Որ նախահայրերի միջոցով յայտնի դարձրեց աստուածգիտութիւնը եւ մարգարէների միջոցով ցոյց տուեց ապաշխարութեան հանգամանքները [նրանց], ովքեր դարձի են գալիս: Իսկ Իր գալստեանը բացեց ողորմութեան դուռը եւ ասաց. «Զեկայ կանչելու արդարներին, այլ՝ մեղաւորներին ապաշխարութեան» [Ղուկ. Ե 32]՝ խոստովանութեամբ, արարչական խնամակալ սիրով: Որպէսզի, աւետիսների կոչմանը փութալով, պարգեւներ ստանանք ապաշխարութեամբ քաւութիւն Շնորհողից, որ բժշկում է անբուժելի հոգիներն ու երեւելի զգայարանները:

Հաւատացեալների թողութիւնը նախ Աւազանից է՝ Ամենասուրբ Երրորդութեան ճշմարիտ խոստովանութեամբ: Որովհետեւ ասում է աշակերտներին. «Գնացէ՛ք, մկրտեցէ՛ք հաւատացեալներին յանուն Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու եւ սովորեցրէ՛ք պահել Քրիստոսի բոլոր պատուիրանները» [տե՛ս Մատթ. ԻԸ 20]: Որովհետեւ «ովքեր ի Քրիստոս մկրտուեցին, Քրիստոսով զգեստաւորուեցին» [Գաղ. Գ 27] եւ վերստին ծննդեամբ դարձան լուսոյ որդիներ ու արքայութեան ժառանգներ: Քանզի շնորհներով դառնում են ցերեկուայ որդիներ գիշերային ծննդից՝ ազատուելով խաւարի իշխանութիւնից, եւ Բարերարի օգնականութեամբ ապրում են երկրի վրայ լուսաւոր վարքով: Եւ ըստ Նրա շնորհների արուեստների՝ հեռաւորները դառնում են մերձաւորներ, եւ օտարացածներն ընտանենում են ճշմարիտ հաւատքով ու անբիծ սիրով: Եւ սատանայի կողմից մեղքերի՝ ու մեղքերի պատճառով մահուան մէջ բռնուածներին [Տէրն] արդարացնում, կենսագործում եւ հրաւիրում է դէպի Իր արքայութիւնն ու փառքը, որ պատրաստեց [Իրեն] սիրողների համար:

Դարձեալ՝ մեղաւորների համար ցոյց տուեց նաեւ ապաշխարութեան պարգեւները եւ յայտնի դարձրեց առաջին [արդարների օրինակներով]: Ինչպէս լսում ենք Դաւթի մասին, որ մեղանչեց, դարձաւ խոստովանեց ու ապաշխարեց. նա լալիս էր ողջ գիշերն ու խմելիքն արտասուքով խառնում Տիրոջ բարկութեան պատճառով, նրա աչքերից արտասուքի վտակներ էին հոսում, որովհետեւ Տիրոջ պատուիրանը չպահեց, եւ ցանկասէր աչքերն էր մաշում արտասուքով՝ եւ սրբուեց մեղքերից: Նոր [Կտակարանի] մէջ էլ Պետրոսն է, որ ուրացաւ եւ չյիշեց Տիրոջ նախապէս ասածը, մինչեւ որ, աքաղաղի ձայնից սթափուելով, յիշեց եւ «ելնելով,- ասում է [աւետարանիչը],- դառնապէս արտասուեց» [Մատթ. ԻՁ 75]: Եւ ջերմ արտասուքի համար թողութիւն ստացաւ, եւ առաքելական շնորհները վերստին մնացին, ինչպէս Դաւթի մարգարէական [շնորհները]: Էլ չեմ ասում Հին եւ Նոր [Կտակարանների] այլ մեղանչածների ու ապաշխարածների մասին (ինչպէս պատմում է աստուածային Գիրքը), որոնք ցոյց են տալիս ստոյգ ապաշխարութեան օրինակներ:

Եւ այսպէս, ապաշխարութեան կեանքի դուռը չի փակուելու մինչեւ աշխարհի վախճանը: Որպէսզի [ապաշխարութեան] աւազանի հանապազորդ արտասուքով լուանանք ու սրբենք հանապազորդ սխալները, որովհետեւ ամէն օր մեղանչում ենք՝ թէ՛ խորհրդով, թէ՛ խօսքով, թէ՛ լսելով, թէ՛ տեսնելով [եւ] թէ՛ որեւէ շարժմամբ: [Ուստի] թող հանապազորդ աղօթքներն ու արտասուքի լուացումները չպակասեն:

Քանզի, որ մեղքերը կտակով են, այսինքն՝ օրէնքի ներքոյ, նրանց համար ժամանակ է սահմանւում, հեռացնում են Եկեղեցուց, ժողովրդից ու Սեղանից, որովհետեւ մեծ վնասների դիմաց նաեւ մեծ ջանք ու աշխատութիւն են հարկաւոր: Եւ ովքեր քիչ սխալներ ունեն, բժշկութիւնն է արտասուքով սրբելը: Իսկ եթէ սրտի խորքում աղտ կայ, ապականուած է անդամներով, այնտեղ արտասուքի վտակներ, հոգու հուր ու եռացում են հարկաւոր, որ [աղտը] սրբում, հալեցնում ու հեռացնում են: Եւ ով ակամայ վրիպած քիչ սխալներ ունի, [պէտք] է զղջայ, հառաչի եւ արտասուքով իսկոյն կսրբուի:

Ում մեղքերի վէրքերը սաստիկ են, եւ ինքնակամ է բռնուել [նրանցից], որ օրէնքով ունի Տիրոջից տրուած [քրիստոնէութեան] անունն ու կարգը, [այդպիսին] ունի սպառնալիքների հանգամանքներ: [Ուստի], ըստ յանցանքների [չափի], թող մեծ ջանք, ջերմեռանդ արտասուք, սրտի փշրուածութիւն ձեռքբերի՝ որոշակի ժամանակով հեռացուելով [Եկեղեցուց]՝ խափանելու համար խիստ մեղքերի դժնդակ ձմեռը: Որպէսզի Հոգու հարաւային տաք քամու փչմամբ ժամանի հոգեւոր գարունը, սաստիկ անձրեւի պէս վերից [թափուէն] արտասուքի հոսանքները, որ թարմ հողը ծլեցնի բոյսեր ու ծաղիկներ, տունկերը սաղարթաւորուեն ու պտուղներ [տան], որոնք վայելելով՝ թագաւորներն ու ռամիկները զուարճանում են: Սոյնպէս էլ ով Հոգու ջերմութեամբ հեղում է արտասուքի հոսանքներ եւ խզում ձմեռային մեղքերի կապանքները, առաքինութեան բոյսեր են արձակւում, եւ արդարութեան տնկիները պտուղներ [են տալիս], որով երկնաւորներն ու երկրաւորներն ուրախանում են Աստուծոյ փառքի համար:

Ապաշխարողներն այսպիսի միտք եւ բարք պէտք է ստանան, որպէսզի ազատուեն գեհենի անշէջ հրի եւ անմահ որդերի հարուածների պարտքից: Եւ հաստատուելով արտասուքի աւազանով՝ ստոյգ ապաշխարութեամբ՝ արքայութեան ժառանգաւորներ լինեն՝ հագնելով սրբութեան լոյսով ճառագայթող, առաքինութեան վկայութիւններով [զարդարուած] պատմուճանը՝ սուրբերի հետ պսակուելու եւ վայելելու անվախճան երանութիւնների մէջ:

Ապաշխարութիւն է սեփական անձն ամբաստանելը եւ վնասակար ու չար ցանկութիւններից հրաժարուելը: Եւ ամէն չարիքի փոխարէն ընդդէմ դնել արդարութիւնը, որպէսզի խափանի մեղքերը եւ սուրբ սիրով ու արտասուալից աղօթքներով աճեցնի արդարութեան [գործերը], պահքով ցամաքեցնի գիշերութեան պղտոր, անժոյժ[4] բխումը, որն ապականութիւն է անդամներում: Որովհետեւ [ինչպէս որ] աղբիւրների ջրերն ու անձրեւների սրսկումները հանգցնում են երեւելի հուրը, [նմանապէս] եւ Աստուծոյ հանդէպ սէրն ու ջերմեռանդ արտասուքը հանգցնում են ցանկութեան հուրը եւ խափանում մարմնի կամքն [ու] ինքնագործութեան շոշափելիքներով աղտեղի շարժումների հոսումները: Եւ այլեւս չմերձենա՛լ ախտերի նոյն գարշութիւններին, այլ մաքուր մտքով ստանալ մաքրութիւն: Որպէսզի անսրբութեան սպառնացող պատուհասը վրայ չհասնի այն օրը, երբ չգիտի, եւ այն ժամին, երբ չի կարծում, եւ ըստ վնասների վրէժխնդիր լինի:

Այլ [պէտք է] սիրել սրբութիւնը, որ բնակւում է Տիրոջ եւ սուրբերի մէջ: Իսկ անսուրբերի մասին ասում է. «Նրանց որդը չի մեռնում եւ հուրը չի հանգչում. եւ խայտառակութիւն կլինի բոլոր մարմնաւորների համար» [Ես. ԿԶ 24]: Եւ մեղքի բոլոր մթերումները [պէտք է] թօթափել մտքից եւ մարմնից, մինչեւ որ կարողանայ ասել. «Գալիս է այս մեղսասէր աշխարհի իշխանը եւ իմ մէջ մեղքի նշոյլ չի գտնի, այլ [միայն]՝ Քրիստոս՝ ըստ Աւետարանի կեանքի, որ վերստին նորոգեց մեզ ստոյգ խոստովանութեամբ եւ արտասուքով, ապաշխարութեամբ եւ տնանկների հանդէպ գթով՝ ամենայն աստուածահաճ եւ առաքինասէր վարքով»: Եւ [պէտք է] ճշմարտութեան այգու մշակներ լինել հաւատքի եւ ուղիղ վարքի գլխաւորութեամբ, որով ապրում է երկրի վրայ եւ առաքինանում: Եւ ելնելով այս աշխարհից՝ իր հետ է տանում բոլոր արդարութիւնները՝ երեխայութեան անմեղութիւնը, մանկութեան անարատութիւնը, երիտասարդութեան անբծութիւնը, ծերութեան մաքրութիւնը՝ ըստ իւրաքանչիւր տարիքի դասելով բոլոր առաքինութիւնները. եւ ժամանակների փոփոխման համաձայն, ըստ իւրաքանչիւր վաստակի, հաւատքի այգու մշակները վարձք են ստանալու ամենքի Տիրոջից: [Պէտք է] յորդորել դէպի վերին կոչումը, ուր Քրիստոս նստում է Աստուծոյ աջ կողմում՝ Վերին Երուսաղէմում, որ բոլորի մայրն է. ուր նաեւ նախապէս ամբարուեցին բարի առաքինութիւնների գանձերը, ուր հաստատուած է մեր յոյսը՝ անմահ երանութիւնները, անսպառ վայելչութիւնները, անվախճան ուրախութիւնը, անզեղջ բարիքները՝ Քրիստոսի հետ վայելելու: Միահաւա՜ն խնդու-

4 անժոյժ - անժուժկալ, անկարգ, անսանձ

թիւն երկնաւորների եւ երկրաւորների, երանութի՛ւն Քրիստոսի փառքի մէջ՝ սուրբ սիրոյ բարերար երախտիքների գործակցութեամբ: Որ [մեզ] որդեգրութեան ընծայեց Հօրը, յանձնեց Սուրբ Հոգու խնամքին եւ Իր արքայութեան ժառանգորդներ դարձրեց: Որ այստեղ արդարացրեց եւ այնտեղ, թագով պսակելով գլուխը, փառաւորում է աստուածային խրախճանքներում, մշտապէս [հաստատում արքայութեան] հրճուանքներում, Ամենասուրբ Երրորդութեան բարիքներում: Քանզի Նրան վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԱՍԱԾ ԱՂՕԹՔԸ, ԵՐԲ ՄԷԿԸ ՈՐՈԳԱՅԹԻ ՄԷՋ Է ԸՆԿՆՈՒՄ[5]

Օրհնեա՛լ է Քո անքաւ մարդասիրութիւնը, Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս. ինչո՞ւ ես ինձ լքում: Եթէ մեղքերի համար՝ Դո՛ւ ես միայն առանց մեղքերի, եւ Քո անունն անոխակալութիւն եւ մարդասիրութիւն է յայտնում: Գթա՛ ինձ, քանզի Դո՛ւ ես միայն մարդասէր: Փրկի՛ր ինձ՝ մեղքերի մէջ ընկածիս, քանզի Դո՛ւ ես միայն առանց մեղքերի: Հանի՛ր ինձ իմ անօրէնութեան տիղմից, որպէսզի յաւիտեան չընկղմուեմ: Փրկի՛ր ինձ իմ թշնամուց, քանզի ահա առիւծի պէս մռնչում է՝ կամենալով կլանել ինձ: Արդ, Տէ՛ր իմ, շողացրո՛ւ Քո փայլատակումները եւ կործանի՛ր նրա զօրութիւնը. թող երկնչի եւ խաւարի Քո երեսից, քանզի տկար է եւ անզօր՝ կանգնելու Քո եւ Քեզ սիրողների առջեւ: Տեսնում է Քո խաչի նշանի զօրութիւնն ու զարհուրում եւ ամաչելով դուրս հալածւում նրանցից, որ կանչում են Քեզ: Այժմ, Տէ՛ր, պահպանի՛ր ինձ եւ փրկի՛ր, քանզի Քեզ ապաւինեցի. հանի՛ր նեղութիւնից իմ անձը, որպէսզի ծածուկ հնարներով ինձ հետ մարտնչող նենգաւորն իսպառ չկործանի ինձ: Որ խորհուրդների Տէր ես եւ քննում ես սրտերն ու երիկամները, սրբի՛ր իմ սիրտը եւ խորհուրդները զազիր ու պիղծ խորհուրդներից, որպէսզի իսպառ չկորչեմ յաւիտենական կորուստով: Որ Կարողդ ես ամէն ինչի մէջ, ողորմի՛ր ինձ, Աստուա՛ծ իմ. մեղաւոր հոգուս արտասուքի շնո՛րհ տուր, որպէսզի լուանամ մեղքերի բազմութիւնը՝ փրկուելու անողորմ հրեշտակների ձեռքից, որոնք գեհենի հուրն են գցում ամբարշտին: Երանի՛ թէ լայի հանապազ՝ աղաչելով Քեզ, Աստուա՛ծ, որպէսզի անարժան չգտնուեմ այն ժամին, որ գալու ես: Լսե՛մ ահաւոր ձայնը, թէ՝ հեռո՛ւ գնա, մշա՛կդ անօրէնութեան, չգիտեմ որտեղից ես: Բարձրեա՛լ Աստուած՝ միա՛կդ առանց մեղքերի, այն օրը շնորհի՛ր ինձ՝ մեղաւորիս, Քո բազում գթութիւնը, որպէսզի իմ ծածուկ անօրէնութիւնները չյայտնուեն տեսնող հրեշտակներին եւ հրեշտակապետերին, մարգարէներին, առաքեալներին եւ արդար սուրբերին: Փրկի՛ր ինձ՝ ամբարշտիս, Քո ողորմութեան շնորհով, ընդունի՛ր ինձ փափուկ դրախտի մէջ կատարեալ արդարների հետ, ընդունի՛ր Քո մեղաւոր ծառայի աղօթքները Քեզ հաճելի դարձած սուրբերի բարեխօսութեամբ, Յիսո՛ւս Քրիստոս, Տէ՛ր մեր, որ օրհնեալ ես Հօր եւ Սուրբ Հոգու հետ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

5 Այս աղօթքը զետեղել էինք «Գանձասար» մատենաշարով լոյս տեսած «Աղօթագրքում» (Երեւան, 1992, էջ 236-239), զետեղուած այս աղօթքի բնագիրը զգալիօրէն տարբերւում է «Ցաճախապատումի» հնագոյն ձեռագրի բնագրից, որը լոյս է տեսել Վենետիկում 1954 թ.: Ուստի պատշաճ նկատուեց նոր թարգմանութիւն կատարել՝ ըստ վերոյիշեալ հրատարակութեան:

Ս. ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ

«ՀԱՅՐ ՄԵՐ» ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

[Այս աղօթքը] բնոյթով պարզ է եւ խօսքի առաւել վեհութիւն ունի. դէպի վեր հայել տուեց եւ Աստծուն Հայր [անուանել] սովորեցրեց բոլորին. որդիներին անձկալի գութի համար ստիպում է դիմել Հօրը, եւ կարօտութեան կամքը Հօրը մղում է ողորմութեան գութի: Որդիներն էլ Հօր կամքի համաձայն պէտք է լինեն, ապա եւ Հայրը որդիների կամքի համաձայն նրանց կարիքները կհոգայ եւ Իր ողջ հարստութեանը ժառանգորդ կդարձնի նրանց: Հայր անունը մէկ է թէ՛ հոգեւորների եւ թէ՛ մարմնաւորների համար, [սակայն] տարբերւում են միմեանցից [նրա] գործածութիւնները՝ բաժանուելով [հոգեւոր եւ մարմնաւոր] մասերի: Երկրաւոր հայրերին մարմնի ցանկութեան ախտերը դրդեցին որդեծնութեան՝ ըստ ախտաւոր յղութեան ախտաւոր որդիներ ծնելուն: Փոփոխական է [մարմնաւոր] հայրութիւնը. երբեմնի որդին դարձաւ հայր. նա հեռացաւ այս աշխարհի կեանքից, եւ նրանից վերցուեց հայրութիւնը, նրա տեղը եկաւ որդին եւ հայր դարձաւ եւ նոյն ճանապարհով գնաց: Այսպէս, փոխանորդութեամբ, աշխարհն իր վախճանին է հասնելու:

Մի է ճշմարիտ Հայրը եւ Արարիչը ողջ աշխարհի, որ առանց ախտերի՛ յղացաւ եւ առանց ցաւերի՛ ծնեց բոլոր երեւելիները եւ աներեւոյթները: [Եւ] Նա, Ով ծնեց, գալով սովորեցնում է որդիներին՝ դիմել երկնաւոր Հօրը, որպէսզի աշխարհը մշտապէս խանձարուրների եւ օրրոցների մէջ չմնայ՝ կաթնածուծների եւ ջամբակերների պէս՝ թաթախուած ու թաղուած գարշելի ախտերի մէջ, որոնցից ձանձրացան մայրերն ու ստնտուները, եւ դէմքերը շրջեցին դայեակներն ու սնուցիչները: Եւ սրանք օրէնքը եւ մարգարէներն են. ծովում լուացին եւ չկարողացան սրբել, գետերով անցկացրին եւ չողողուեցին, օճառ գործածեցին, լուացուեցին բորակով եւ չսրբուեցին, իրենց վրայ վերցրին, սակայն գցեցին ու հեռացան:*

* ջամբակեր - մանկիկ, որ կերակրւում է ձեռքով

Գթաց երկնաւոր Հայրը, խոնարհուեց երկնքից երկիր, տեսաւ բոլորին արնաշաղախ, կռապաշտութեան մեռելոտի զոհաբերութեան մէջ: Վերցրեց, լուաց, հագցրեց երկնաւոր հանդերձը եւ վերստին մոտեցրեց նոյն որդեգրութեանը: Սովորեցրեց հայրենի վարդապետութիւնը, որպէսզի դիմեն սիրելի երկնաւոր Հօրը: «Երբ,- ասում է,- աղօթքի կանգնէք, տղայաբար շատախօս չլինե՛ք» [տե՛ս Մատթ. Զ 7], [քանզի] Աստուած սրտի խորհուրդները լսող է եւ բարի գործերի փոխարէն՝ բարին հատուցող: Բերանով այսքան վկայելը բաւական է. ***«Հա՛յր մեր, որ երկնքում ես, թող սուրբ լինի Քո անունը»:***

Մեծ է այս պարգեւը մարդկանց տրուած բոլոր պարգեւներից առաւել՝ Աստուծոյ՝ Հայր լինելը մարդկանց: Այս ասելու իշխանութիւնը չունեն հրեշտակները. թէպէտեւ հզօր են եւ հոգեւոր, [սակայն] սպասաւորներ են եւ ոչ՝ որդիներ: Ո՛վ մարդ, զգուշացի՛ր քո անձի համար, [տե՛ս, թէ] ինչպիսի պատուով մեծարուեցիր՝ մինչեւ իսկ Աստծուն քեզ Հայր անուանելու իշխանութիւն ստացար. ուստի այս բա՞նը եւս խորհիր, որ Հօր պատուի համաձայն նաեւ քեզ պահես, որպէսզի իմանան վերինները եւ ստորինները, թէ, արդարեւ, Աստուծոյ որդի ես դու: Աստուած խօսքով է ծնում մարդուն. թէպէտեւ խօսքով չես կարող, մարմնիդ կամքով մի՛ թաւալուիր երկրի վրայ. կտրի՛ր եւ հեռացրո՛ւ քեզանից աւելորդ ցանկութիւնները: Շատ եւ բաւական՝ համարիր քեզ անհրաժեշտ կերակուրները, չափը մի՛ անցիր եւ մի՛ շուայտացիր: Գիրութիւնից ճարպակալում է մարդը, եւ առատ ճարպից անօրէնութիւններ են ելնում, ինչպէս արբեցողութիւնից՝ պիղծ գիճութիւններ. այդպիսին Աստծուն Հայր անուանել չի կարող: Ահա ինքդ չվկայեցի՞ր՝ ասելով. ***«Սո՛ւրբ թող լինի Քո անունը»:*** *Աստծուն ո՞վ կարող է անուն դնել. սուրբ ասել՝ ա՛յս է Աստուծոյ ճշմարիտ անունը: Սուտ աստուածների անունները սուրբ չեն. մէկը՝ գող, մէկը՝ մարդասպան, մէկը՝ շուն, եւ բոլորը՝ իրենց յատուկ չարչարելի ախտերով. մանաւանդ՝ գոյութիւն իսկ չունեն, ոչ էլ պիտի գոյութիւն ունենան: Մարդիկ, որ նրանց աստուած անուանեցին, նրանք Աստուծոյ ճշմարիտ որդիները չեն: Ում սովորեցնում է Աստծուն դիմել եւ հրամայում է աղօթքի կանգնել Հօր առաջ, նրանցով է բացում դուռը բոլորի համար, որպէսզի ամէնքը դէպի այդ դուռը դիմեն՝ մտնելու, նոյն աղօթքը սովորեն՝ աղաչելու Աստծուն եւ ասելու* ***«Հա՛յր մեր, որ երկնքում ես, սո՛ւրբ թող լինի Քո անունը»:*** *Երբ սովորեն աղօթելիս ճշմարտախօս*

լինել, աշխարհում էլ ճշմարտագործ կլինեն եւ այնժամ կարող են լքել ու թողնել սուտ աստուածներին: Ովքեր քարին ու փայտին հայր եւ մայր էին անուանում եւ հեռացան նրանցից ու հրաժարուեցին իրենց անառակ գործերից, նրանց միտքը սրբուեց իմաստութեան գիտութեամբ, եւ նրանց բերանները բացուեցին՝ համարձակ բարբառելու եւ ասելու. «Թող գա՛յ Քո արքայութիւնը, թող Քո կա՛մքը լինի ինչպէս երկնքում, այնպէս էլ՝ երկրի վրայ»:

Երբ Աստուած թագաւորեց ամէն բանի վրայ, Նրա արքայութիւնը [հաստատուեց] Իր կամարարների վրայ: «Միայն,- ասում է,- թող գա՛յ Քո արքայութիւնը»: Սա նման է այն խօսքին, թէ՝ «Կծագի Յակոբի աստղը, եւ մի այր կելնի Իսրայէլից եւ կգայ ու կկործանի Ամաղէկի զօրութիւնը» [տե՛ս Թիւք ԻԴ 17]: Աստղը ծագեց, եւ այրը ելաւ, հարուածեց եւ կործանեց սատանային, որը հեթանոսների զօրութիւնն էր: Սա՛ էր Աստուծոյ կամքն ի սկզբանէ, եւ այն կատարուեց մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալստեամբ: Այս աղօթքը պարտաւոր ենք խօսքով սովորել եւ հաւատքով յուսալ Նրա երկրորդ Գալստեանը, երբ մեր աղօթքի համաձայն նաեւ մեր գործերը կերեւան ստուգութեամբ:

«Թող գա՛յ Քո արքայութիւնը»: Ինքը՝ Արքայութիւնը, սովորեցնում է Իր մասին խօսել. «Աշխարհի մէջ էր, եւ աշխարհը Նրանով եղաւ եւ աշխարհը Նրան չճանաչեց» [Յովհ. Ա 10]: Սովորեցնում է ասել Հայր, որպէսզի միայն Նրան ճանաչես [որպէս] Արարիչ աշխարհի, Արարիչ ամենայնի, որ որդեգրութիւն շնորհեց միայն մարդուն: Նա, որ արարեց, նոյն Ինքը եւ Արքայ է, եւ [Նրա հետ] եկաւ նաեւ Իր արքայութիւնը: Նա, որ բնութեամբ մեր Աստուածն է, նոյն Ինքը մեր Հայրն է՝ Իր Աստուածութեան շնորհներով: Եթէ Աստուած ամենքի Հայրն է, ապա Քրիստոս Եղբայրն է բոլոր նրանց, ովքեր գործում են Նրա կամքը: Արքայ էր եւ եղաւ քո Եղբայրը: Սրանք աւելի մեծ են, քան առաջին արարչութեան պարգեւները. այնժամ ըստ Աստուծոյ պատկերի ասուեց՝ թող լինի մարդը [տե՛ս Մնունդ. Ա 26], որպէս թէ ըստ օրինակի կերպաւորեց՝ հոգեղէնը կամենալով այս հողեղէնի համար տիպ դարձնել, որպէսզի սա էլ սովորի առաքինութեամբ Նրան նմանուել: Երբ չկարողացաւ միաբանուել Նրա հետ, Ինքն իսկ առաւ նրա տիպը, ինչպէս որ Ինքը գիտէ. Ինքը ձեւաւորեց անխախտելի եւ անքակտելի որպիսութիւնը՝ անհասանելի եւ անասելի, միայն հաւատալի եւ յուսալի, եւ Ինքը միայն՝ արժանի սիրոյ, որ մեր [բնութեամբ] խօսում է մեզ հետ եւ սովորեցնում. խօսում է [մարդկային] ազգակցութեամբ եւ աներեւոյթ Աստուածութիւնն ուսուցանում է երեւելիներով, որպէսզի աներեւոյթ Աստուածութիւնը երեւելիներով ճանաչես: Որով եկաւ, նոյնով եւ երկրորդ անգամ պիտի գայ: Այժմ վարդապետութիւնն աշակերտներին որդիներ անուանեց, ծառաներին տէր դարձրեց եւ մահկանացուներին անմահութեան է հրաւիրում՝ ասելով. «Թող գա՛յ Քո արքայութիւնն» [այժմ]՝ զգուշութեամբ պատրաստուելու, իսկ յետոյ՝ իւրաքանչիւր գործի հատուցման համար: Որչափ որ կարողանաս եւ հաղորդ լինել արքայութեանը, այդչափ ըղձական է աղօթքդ եւ մեր բնութիւնից վեր պարգեւներ է խոստանում:*

*«Թող,- ասում է,- Քո կա՛մքը լինի»: Աստուծոյ կամքը մարդու սրբութիւնն է, քանզի բաժնեկից դարձրեց Իր արքայութեանը, որպէսզի ոչ թէ անկարող լինենք այդ բաժինը ձեռք բերել, այլ որպէսզի մեր յոյսի համար դիւրութեամբ համբերութիւն ստանանք նրանց նման, որոնց** սովորեցրեց [այս] աղօթքը. եթէ նրանք հասան ըստ իրենց աղօթքների, ուրեմն մենք էլ կարող ենք. միայն հաւատա՛, յուսա՛ եւ սիրի՛ր եւ շուտով կհասնես խնդութեամբ: Եւ եթէ տրտմութեամբ չարչարակից լինես Քրիստոսին, Ինքն Աստուած կզօրացնի համբերութեամբ, եւ եթէ [նման] կարողութիւն չլինէր, Աստուած այդպիսի աղօթք մեզ չէր սովորեցնի: Առաջիններին նայեցէք եւ քաջալերուեցէ՛ք, որ միայն չարչարանքները բաւական չհամարեցին իրենց հաւատքի համար, այլեւ մեռնելը [նախընտրեցին] ապրելուց: Նահատակադիրին*** նայեցին եւ նահատակուեցին: Խօսքով նրանց գովաբանող լինենք եւ գործով մեր անձերը նոյն նահատակութեամբ աւարտենք: Աստուած Հայր է հաւասարապէս բոլորին, [ուստի] պարտաւոր ենք բոլորս հաւասար որդիներ լինել, քանի որ մի է այն ժառանգութիւնը, որ բաշխեց բոլորին:*

«Թող Քո կա՛մքը լինի ինչպէս երկնքում, այնպէս էլ՝ երկրի վրայ»: Թէեւ Աստուած կարող է բոլոր մարդկանց երկնաւորներ դարձնել, մեր կամքին է յանձնում աղօթելը, որպէսզի մենք՝ երկրաւորներս, ինքներս կարողանանք երկնաւոր դառնալ: Վերին զօրքերն

---

* այսինքն՝ տեսանելի, իրական մարմնով

** Ի Հկատի ունի առաքեալներին:

*** այսինքն՝ Քրիստոսին

ամբողջապէս Նրա կամքին են սիրով հնազանդւում եւ, միաբանութեամբ լծուած, փառաւորում են Աստծուն եւ Նրա ահաւոր փառքից ծածկում ոտքերն ու դէմքերը, որպէսզի իրենց ներսում սիրեն Աստծուն: Աչքով տեսնելու փոխարէն իրենց ներսում բաւական են համարում սէրը, եւ նրանց սիրուց [դրդուած]՝ Աստուած էլ նրանց հանդէպ սիրով կատարեց Իր կամքը: Չշտապենք մարմնաւոր աչքով տեսնել Աստծուն, որպէսզի ժամանակից շուտ չկործանուենք: Մեզանից թող սէ՛րը պատգամաւոր լինի Նրա առաջ, եւ Նրա սիրով Իր կամքը թող կատարուի մեր մէջ: Ինչ որ սովորեցրին մեզ մարգարէները, դրանով ջանանք ընթանալ, քանզի նրանք խօսքով ասացին եւ գործով կատարեցին: Նրանց վարդապետը ոչ այլ ոք էր, եթէ ոչ՝ Նա, Ով քեզ սովորեցրեց աղօթքը: Դու էլ խօսքով սովորի՛ր աղօթքը եւ գործով շտապի՛ր կատարել: Հեռու չես հրեշտակներից, այլ նրանց հետ ես աղօթքով, որպէսզի նրանց հետ փառաւորես Աստծուն: Ինչպէս որ դու նրանց միաբանուես, նոյնպէս էլ նրանք քեզ հետ երգակից կլինեն աղօթելիս եւ օրհնելիս: Համարձակ բաց ես անում բերանդ եւ ասում. «Թող Քո կա՛մքը լինի ինչպէս երկնքում, այնպէս էլ՝ երկրի վրայ»: Այս [ասելու] իշխանութիւնն աւելի մեծ է, քան առաջին օրհնութիւնները. այնտեղ միայն երկրին տիրել [արտօնուեց] իշխանութեամբ [Մնուն. Ա 28], այստեղ ասում է՝ երկնքում եւ երկրի վրայ:

«Մեր հանապազօրեայ հացը տո՛ւր մեզ այսօր»: Երկրաբոյս հացն Աստուած առանց աղաչելու հաւասարապէս շնորհում է բոլորին: «Մարդկանց եւ կենդանիներին Դու ես ապրեցնում, Տէ՛ր» [տե՛ս Սաղմ. ԼԵ 7]: Եւ ինչպէ՞ս կարելի է ասել, [չէ՞ որ] նոյնիսկ սա հանապազօրեայ չէ. մանկութիւնն արգելում է, հիւանդութիւնը՝ քչացնում, կարօտութիւնը խափանում է, մահը՝ բաժանում եւ հեռացնում: «Ձեր հայրերն անապատում կերան մանանան եւ մեռան: Այս է ճշմարիտ Հացը, որ երկնքից է իջնում. ով որ այս Հացից ուտի, յաւիտեան չի մեռնի» [տե՛ս Յովհ. Զ 49-50]: Լսում էին Նրանից այս խօսքը եւ չէին կարողանում անմիջապէս հասկանալ, ուստի կրկնում եւ երեքկնում է նոյն խօսքը, որպէսզի հեշտութեամբ լսեն եւ հաւատով ընկալեն այդ խօսքի զօրութիւնը. «Ես եմ,- ասում է,- կենդանի Հացը, որ երկնքից է իջել. ով որ ուտի այս Հացը, մահ չի ճաշակելու» [տե՛ս Յովհ. Զ 51-52]: Այս Հացի մասին է աղօթքի մէջ սովորեցնում հանապազ խնդրել Աստծուց: Եթէ լաւ խորհես, [կհամոզուես, որ] նա, ով այս Հացը

սրբութեամբ է ուտում եւ սրան արժանի կերպով է պատրաստում իր անձը, նա անկարօտ է այս երկրաւոր արքայութեանը: Մահկանացու ձեռքին անմահ Հացը դնելով՝ դրանից ձեռքն անմիջապէս անմահացաւ եւ, այս ուտելով, մարդն ամբողջովին՝ շնչով, հոգով եւ մարմնով, հոգիացաւ ու բաժնեկից դարձաւ Քրիստոսին. միայն թէ զօրութեան սկիզբը մինչեւ վախճանն անարատ պահի: Զկան երկրաւոր չարչարանքներ, որ նրան յաղթեն, նրա առաջ արհամարհուած է արծաթը, եւ ոսկին ատելի է նրա աչքին, ցաւ է համարւում այս աշխարհի հարստութիւնը, քանի որ իր խորհուրդները սրբուեցին երկնաւոր ազատութեամբ՝ անմահ Հացով յագենալով: Նա ամէն բանի եղաւ բաւարար. եթէ երեխայ է, կատարելահասակ երեւաց, եթէ տկարացաւ ցաւերից, Աստուծոյ զօրութիւնը բնակուեց նրա մէջ, եթէ այս աշխարհի կեանքից հեռացաւ, անմահ կեանքն իր հետ տարաւ առ Աստուած: Այս էր սովորեցնում մեր Տէրը՝ աղօթքի մէջ աղաչել Իրեն. մեր հացն օրըստօրէ տո՛ւր մեզ ոչ երկրից, այլ՝ Տիրոջից. եւ յայտնի է՝ ոչ էլ երկնքից, այլ [նկատի ունի] ամենքի Տիրոջը, [քանզի] ասում է. «Ա՛յս է Իմ Մարմինը եւ ա՛յս է Իմ Արիւնը» [Մարկ. ԺԴ 22]: Թէպէտ եւ անփշրելի էր, քո սիրոյ համար փշրուեց եւ քեզ, որ քո կամքով փշրուեցիր, անփշրելի Աստուածութեամբ դէպի Ինքը բարձրացրեց. «Իմ անձը չես թողնի դժոխքի մէջ եւ Քո սուրբին չես տայ տեսնել ապականութիւն» [տե՛ս Սաղմ. ԺԵ 10]: Ուրբաթ օրը խաչուեց՝ մահը փշրելու համար եւ միաշաբաթի օրը հաւաքեց Ադամի փշրուած ոսկորները եւ յարութիւն տուեց անմահութեամբ. եւ [Իրեն] ցոյց տուեց շատերին՝ ճշմարտութեամբ եւ ոչ՝ առ աչօք: Մի օր հացացաւ Վերնատանը եւ հանապազ հացանում է Եկեղեցում սուրբ Սեղանի վրայ: Նախ Ինքն Իրեն ճաշակեց եւ ապա մեզ ճաշակակից դարձրեց Իր չարչարանքներին: Նա այսուհետեւ չարչարանքների մէջ չէ, այլ հայրենի փառքի մէջ փառաւորւում է հրեշտակներից եւ մարդկանցից եւ մեր բոլորի չարչարանքները վերացրեց Իր անչարչարելի Աստուածութեամբ: Մեր հաւատքի այս յոյսը որպէս հաստատուն խարիսխ պահենք մեր հոգիների եւ մարմինների մէջ. ինչպէս որ սիւնը շէնքի կայունութիւնն է, հաւատքն էլ մարդու անքակտելիութիւնն է Աստուծոյ հետ, որով եւ համարձակութեամբ կարող է բարբառել եւ ասել. «Ների՛ր մեր մեղքերը, ինչպէս որ մենք ենք ներում մեր պարտապաններին»:

Այս է ճշմարիտ, բանական եւ գործնական աղօթքը. երբ դու պարտքդ չես պահանջում ընկերոջից, այնժամ Աստուած էլ քո բոլոր պարտքերը քեզ է շնորհում, որ անմեղ լինես: Ակա՞նջ դիր Պետրոսին, թէ ինչպէս սովորեց Տիրոջից. նա եօթ անգամ կամեցաւ ներել եղբօր յանցանքը, իսկ մեր Տէրը եօթանասուն անգամ եօթ ասաց [տե՛ս Մատթ. ԺԸ 23]: Պետրոսն իբրեւ մարդ սահման դրեց, իսկ մեր Տէրը սահման չդրեց Իր Աստուածութեան մարդասէր բարերարութեանը: Հանապազ մեղանչում ենք մեր խօսքերով ու գործերով, եւ Աստուած տեսնում է ու զանց առնում, որպէսզի Իր համբերութեամբ մեզ ապաշխարութեան յորդորի: Ամեղանչելն իսկ մարդու համար կատարեալ արդարութիւն է, իսկ եթէ իբրեւ մարդ յանցանք գործեց, թող շտապի զղջալ՝ ապաշխարելու: Բաց են Նրա ողորմութեան դռները, եւ չի փակում ապաշխարողների առաջ: Մանաւանդ՝ ովքեր գիտեն հաւատքով աղաչել, նրանք նաեւ առաքինութեամբ կարող են ճգնել հոգեւոր վաստակների համար. նրանք ոչ միայն ներում են իրենց ընկերների պարտքերը, այլեւ՝ իրենց ունեցուածքը բաշխում կարօտեալներին: Աստուծոյ զօրութիւնն է, որ նրանց ճգում է դէպի առաքինութիւն, ինչպէս եւ առաջիններն էին անում. «Ովքեր,- ասում է,- գիւղերի, ագարակների եւ ստացուածքի տէր էին, վաճառում էին ողջ ունեցուածքը եւ բերում-դնում առաքեալների ոտքի տակ» [տե՛ս Գործք Դ 34-35]: Մեր Տէրը նրանց առաքեց [Աստուծոյ] խօսքի քարոզութեան համար: Նրանք խօսքի քարոզիչներ էին եւ պէտքերի մատակարարողներ: Խօսքի ձայնն ականջին է հասնում, իսկ Վերնայինի սէրն առանց խօսքի էր առատաձեռնութիւն սովորեցնում. ո՛չ՝ որովհետեւ ուզում էին աղքատանալ, այլ՝ որպէսզի այլ հարստութեան հասնեն՝ երկնաւորին: Բայց դու, երբ ներում ես քո ընկերոջ պարտքը, նրա համար չէր, որ դու ատում էիր քո իրերը, այլ՝ որպէսզի քո արած փոքր ողորմութեամբ Աստուած ների քո ունեցած բազմապատիկ պարտքերը: Այս խօսքին հետեւիր [եւ կտեսնես, որ] երբ ներում ես քո ընկերոջը, դու եւս արժանանում ես ներման:

Համարձակութեամբ բաց ես անում բերանդ եւ ասում. **«Մի՛ տար ինձ փորձութեան, այլ փրկի՛ր չարից»**: Աստուած չի կամենում մարդուն փորձութեան տանել, այլ՝ ազատել փորձութիւնից եւ փրկել մահուանից: Քանզի Նա, Ով Իր Որդուն չխնայեց, այլ մեր բոլորի համար մահուան մատնեց, Նրանով շնորհում է ամէն տեսակ բարիքներ բոլոր

նրանց, ովքեր խնդրում են Իրենից: Թէպէտ մենք ի վիճակի չենք փոխհատուցել Աստծուն, չծուլանանք, որչափ որ մեր կարողութիւնն է. մեր սակաւապետութիւնը որպէս պահք է դիտում, չափաւոր ըմպելը՝ գինեհատութիւն, միջին հանդերձը՝ համեստութիւն եւ անհրաժեշտ ստացուածքը՝ աղքատութիւն: Երանութեան համար հեզախօս լինենք եւ [դրանով] ընկերոջը խոնարհութիւն սովորեցնենք: Եթէ անքուն մնալ չենք կարող, [գոնէ] ողջ գիշերը քնելուն չնուիրենք, որպէսզի ամբողջովին չմոռանանք սաղմոսները եւ օրհնութիւնները: Եթէ աղքատների կարօտութիւնն [ամբողջովին] բաւարարել չենք կարող, մի պատառի եւ բաժակի կարօտ չթողնենք նրանց: Մեր ստացուածքների մէջ որբերից եւ այրիներից յափշտակուած որեւէ բան թող չգտնուի: Ինչ որ ունենք, Աստծուն նուիրուած թող լինի: Այնժամ մեր անձերն էլ Նրան հաճելի եւ ընդունելի պատարագ կլինեն: Բոլորին վայել է փութաջան լինել Աստուծոյ պատուիրանները պահելու եւ գործելու մէջ՝ տղամարդկանց եւ կանանց, ծառաներին եւ ազատներին, քանի որ մեր Տէրը բոլորի թողութեան համար եկաւ, եւ Նրա մարդասիրութեանը վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ս. ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Ա
ԹՈՒՂԹ ՅԱՆՑԱՒՈՐ ՎԱՐՔԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ովքեր ունեն Սուրբ Հոգու ցանկութիւնը եւ աստուածային սիրոյ բաղձանքը, [նրանք] սպասում են Աստուծոյ Որդու գալստեանը եւ փափագում անմահ փառքը, միշտ խորհում վերինի մասին եւ հանապազ տենչում այնտեղի ուրախութիւնը, ուրանում, արհամարհում աւրօրէական բաները եւ օրըստօրէ վեր բարձրանում ոչ միայն հաւատքի ճշմարտութեամբ, այլեւ վարքի առաքինութիւններով, միշտ հսկում սրտի սրբութեամբ եւ հանապազ պատրաստ լինում հոգիների անարատութեան համար. նաեւ ընթանում եւ ապրում են աշխարհում ոչ ըստ այս աշխարհի հաճոյքների, այլ ինչպէս այլ աշխարհի օտարականներ, թափառականներ եւ մանուկներ նեղւում ու մաշւում են բազում կարիքներից, [բայց] զօրանում այն յոյսով, թէ՝ «Ուր ես եմ, այնտեղ եւ Իմ պաշտօնեան կլինի» [Յովհ. ԺԲ 26]: Այսպիսին են հոգեւորների պատիւները եւ աստուածասէրների պարգեւները:

Իսկ ես չարի բազում նետերից վիրաւորուեցի եւ յաղթուելով պարտաւորուեցի. խոստովանում եմ [իմ] պարտութիւնը եւ ծանուցում իմ ամբարշտութիւնը, պատմում եմ իմ անթիւ մեղքերը եւ ողբում իմ ահեղ անօրէնութիւնները: Քանզի վէրքերիս ցաւերը հարկադրում են ինձ պատմել, եւ իմ աղէտների վարանումները ստիպում են ինձ պարզատել, վէրքերիս դեղ որոնել եւ հանապազ արտասուքի վտակներ խնդրել, որով մեղքերս լամ եւ վէրքերս բժշկեմ: Որը մեծ բաղձանքով հանապազ ցանկանում եմ եւ ըղձալի տենչանքով յարաժամ հայցում ողբալու այն մարգարէական [խօսքերով], որպէսզի, նրա հետ ձայնակցելով, ողբայի եւ արտասուելով միշտ բարբառէի գորովի աղերսալի ձայնը՝ ասելով, թէ՝ «Մէկն իմ գլուխը բազում ջրերի շտեմարաններ դարձնէր եւ աչքերս՝ արտասուքների յորդ աղբիւրներ» [Երեմ. Թ 1]. եւ միշտ օր ու գիշեր անդադար լաց լինէի՝ դառնապէս արտասուելով իմ ամբարշտութեան համար, վարանելով իմ չարիքների համար, լալով իմ անօրէնութիւնների բազմութեան համար, միշտ ողբալով իմ մեղքերի համար, հեծելով իմ անբաւելի յանցանքների համար, հառաչելով

իմ անթիւ պղծութիւնների համար, կոծելով իմ ահեղ կործանման համար եւ դառնապէս ողբալով տանջանքների աղէտների համար: Քանզի յանցանքներիս խղճմտանքը հանապազ հեղձում է ինձ, եւ չարիքներս յարաժամ չարչարում են ինձ, երբ նայում եմ իմ անթիւ մեղքերի բազմութեանը եւ ահաւոր ախտերի անօրէնութեանը, որ միշտ մաշում է մարմինս, խարշատում[1] ոսկորներս, ճմլում սիրտս, գալարում որովայնս, եւ իմ անձը դողում է երկիւղով, եւ բոլոր անդամներս հանապազ հալչում են: Քանզի վարանում եմ իմ վէրքերի ցաւերի համար, եւ իմ միտքն ապշած յամառում է, քանի որ գիտեմ բարին եւ անում եմ չարը, իմանում եմ արդարութիւնը եւ գործում անօրէնութիւնը, խօսում եմ արդարութեան եւ խորհում անիրաւութեան մասին, սուրբ եմ երեւում եւ մերձենում աղտեղութիւնների, ճանաչում եմ ճշմարտութիւնը եւ մոլորութեան յարում, տեսնում եմ լոյսը եւ փափագում խաւարը:

Արդ, ո՞վ պիտի լաց լինի ինձ համար եւ ո՞վ պիտի ողբայ մեղքերով մեռածիս եւ անօրէնութեամբ կործանուածիս, ամբարշտութեամբ խաւարի խորքերի եւ անդունդների մէջ ընկածիս համար, քանզի չարիքներս չարչարում են ինձ, եւ պղծութիւններս՝ սպանում: Եւ արդ, ի՞նչ կերպով լաց լինեմ կամ ինչպէ՞ս ողբամ իմ անթիւ մեղքերի բազմութեան համար, որ հիւանդացել եմ այս յանցանքներից եւ իմ ծուլութեամբ ցաւահարուել: Քանզի ինձ անմահութիւն խոստացաւ, իսկ ես մնում եմ այս մահուան մէջ. հրաւիրեց դէպի վեր՝ երկինք, իսկ ես իջնում եմ դժոխքի անդունդները. պատրաստեց փափագելի դրախտը, իսկ ես ընտրեցի խոցոտիչ փուշը. նաեւ [պատրաստեց] մշտնջենաւոր կեանքը եւ փառքը. իսկ ես ինձ մեղքով սպանեցի: Եւ արդ, այս ամենի համար ի՞նչ սուգ բաւական կլինի կամ ողբալու ի՞նչ ողբեր, արտասուքների ինչպիսի՞ լալում կամ պաղատանքների ինչպիսի՞ հառաչանքներ. ինչպիսի՞ աշխատութիւններ կամ առաքինութեան ի՞նչ ջանքեր կբժշկեն իմ վէրքերը, քանզի անթիւ ու անհամար են: Եւ իմ անձը հեղգում է ծուլութեամբ, թուլանում՝ ահեղ մեղքերի բազմութիւնից լքուած եւ, գեհենի անշէջ հրից սարսելով, սարսափում, քանզի յիշելով Ահեղ Դատաստանի մեծ Օրը եւ Բեմի սոսկալի արհաւիրքները՝ հոգիս դողում է երկիւղով, եւ միտքս ահով սարսափում, սիրտս

1 խարշատել - չարաչար խաշել, այրել

ողբալ է պահանջում, եւ աչքերս արտասուքներ են բաղձում. ահեղ Ատեանի ահը շտապեցնում է ինձ ապաշխարել, իսկ չարի պատրանքները հանապազ ինձ ծուլացնում են: Եւ ահա նեղուած եմ երկու կողմից եւ ամբողջութեամբ տագնապած, քանզի օրերս միշտ մեղքերի մէջ անցկացրեցի եւ կեանքս անօրէնութեան մէջ ծախսեցի, մէկին չարաբեցի բարին եւ երբէք չստացայ արդարութիւնը, այլ, ապականելով բոլոր անդամներս, կորստեան մատնեցի բազմադիմի յանցանքներում: Բերանս պղծեցի բամբասանքներով եւ լեզուս աղտոտեցի դատարկ խօսքերով. ունկս [տուեցի] ի լուր չարութեան, աչքս՝ նայելու աղտեղիների, սիրտս՝ զազիր խորհուրդներով եւ իմ անձը հանապազ վարեցի անպարկեշտ ընթացքով, մարմինս ամենեւին առողջ չպահեցի, սիրտս՝ ճշմարիտ, քանզի մեղքերով ցաւերի մէջ եմ եւ յանցանքներով՝ հիւանդութիւնների: Ցանկանում եմ զղջալ, խոստովանել, իսկ թշնամին յապաղեցնում է. ցանկանում եմ մտնել ապաշխարութեան վարքի մէջ, իսկ թշնամին ծուլացնում է. ցանկանում եմ Աստուծոյ առաջ ընկնել, իսկ թշնամին հեռացնում է. ցանկանում եմ պաղատել, աղերսել, աղաչել, իսկ թշնամին կարծրացնում է. ցանկանում եմ ողբալ ու արտասուքներով լալ, իսկ թշնամին ցամաքեցնում է. ցանկանում եմ ողորմել աղքատին, իսկ թշնամին յիշեցնում է իմ աղքատութիւնը. ցանկանում եմ մաշել ինձ պահքով, իսկ թշնամին յիշեցնում է ինձ մարմնով տկարանալը. ցանկանում եմ խոնարհուել եւ հնազանդուել եղբօրը, իսկ սիրտս խստանում է ամբարհաւաճութեամբ. քանզի ինչով որ կարող եմ մեղքերս քաւել, նրա դէմ պատրաստուած եմ գտնում թշնամու չար որոգայթները:

Եւ արդ, բոլորովին նեղուած եմ, եւ հոգիս հանապազ հեծում է. յիշելով մեղքերիս բազմութիւնը՝ երկիւղով դողում եմ եւ վարանում խորհուրդներիս զազրութիւնից. անսրբութիւններս տեսնելով՝ ողբում եմ հանապազ, եւ [իմ] անօրէնութիւնները յիշելով՝ ինձ վրայ են հասնում տարակուսանքների արհաւիրքները, եւ վշտերի ցաւերն են ինձ զարկում: Քանզի միշտ տեսնում եմ ահեղ Ատեանի ահը եւ մեծ եւ ահաւոր Բեմի արհաւիրքները, փողի ահեղ հնչումը, հրեշտակապետի ահազդու բարբառումը, ծովածաւալ հրի բորբոքումը եւ ծաւալումը ողջ երկրով մէկ, արդարների վեր ելնելը եւ մեղաւորների մնալը, բոլոր մեղաւորների հաւաքուելը եւ գործերի ու խօսքերի հաշիւ տալը, Դատաւորի սոսկալի դէմքը, Դատաստանի աննկարելի Օրը, մեղաւորների չար

ամօթը եւ դառն, անվախճան յաւիտենական տանջանքները: Եւ այս ամենի պատճառով հեծում ու դառնապէս լալիս եմ՝ անդադար ողբալով իմ մեղքերը, քանզի յոյժ ահեղ եմ տեսնում գեհենի արհաւիրքները եւ սոսկալի՝ աղէտների տեսչութիւնը, ուր չեն օգնում ո՛չ ունեցուածք, ո՛չ էլ՝ որեւէ աղաչանք, օգուտ չեն տալիս ո՛չ լաց, ո՛չ էլ՝ արտասուքներ, պէտք չեն ո՛չ հեծութիւններ, ո՛չ էլ՝ հառաչանքներ. ո՛չ արդարներն են աղերսում, ո՛չ էլ սուրբերը բարեխօսում մեղքով ընթացածների համար: Ծանօթներին անծանօթ ես, մերձաւորներից՝ հեռու, սիրելիների համար ատելի ես եւ բարեկամների համար՝ թշնամի, ամենեւին ամայի ես եւ օտար՝ բոլորին: Ոչ մէկի չես կարող աղաչել, ոչ մէկը քեզ չի ճանաչում. ողբում եւ ողորմագին լալիս ես, եւ ոչ մէկը քեզ վրայ չի խոնարհւում. ծարաւից չորացած՝ տապակւում ես, եւ մէկը քեզ չի ողորմում. հանապազ այրւում ես եւ ամենեւին հնար չես գտնում խորովումից [փրկուելու]. միգապատուած ես հնոցների կրակի մէջ եւ աղջամղջով պատուած՝ աննշմարելի գեհենի մէջ, գարշահոտ եւ որդեռաց խաւարային գուբերում եւ ներքին տարտարոսներում, ներքեւից՝ հրով բորբոքուած, իսկ վերեւից՝ ահեղ հրահոսանքներ, որ յորդալով իջնում են հրեղէնների յորդահոս գետերից, ուր շոշափելի խաւարն է: Եւ ամենեւին չես կարող տեսնել որեւէ մէկին, քանզի մթապատուած ես սեւաթոյր մէգով եւ գցուած՝ կայծակների մէջ. անդադար լալիս ու ողբում ես եւ միայն քո վարանումներն ես կոծում, քանզի ահեղ աղէտների ցաւերի պատճառով միայն քեզ ես համարում չարչարանքների տանջանքների մէջ: Հանապազ հեծում ես եւ դառնապէս լալիս՝ անհանգիստ ու անմխիթար. վշտեր, նեղութիւններ, մշտնջենաւոր տառապանքներ, անդադար տանջանք եւ աննկարելի տագնապում, անպատում ցաւեր եւ աննման կսկիծներ, ամէն ինչից վարանումներ եւ միայն տարակոյսներ: Քանզի այնտեղ միայն ճիչ ու վայ է լսւում, այնտեղ թախանձանքներ ու աղերսներ են, միայն լսում ես հեծեծանքներ ու հառաչանքներ. հեծել ու տագնապել, անդադար լալ ու ողբալ եւ ողորմութիւն չգտնել, այլ միշտ խաշւում ես վշտերի մէջ, հանապազ մաշւում կարօտութեան մէջ արտասուքներով ու պաղատանքներով հանդերձ, որոնք ոչ ոք չի լսում, եւ ոչ էլ պաղատանքներն են ընդունւում, քանզի ուշ է արդէն: Այլ այստեղ է [պէտք] լալ եւ ողբալ, այստեղ է [պէտք] հեծեծել ու հառաչել: Այստեղ է [պէտք] աղաչել, աղերսել ու թողութիւն խնդրել, քանզի այստեղ են արտա-

սուքների շահը եւ աղօթքի օգուտը, ողորմութեան սերմերն ու ապաշխարութեան պտուղը, հառաչելու եւ ողորմութիւն խնդրելու ժամանակը:

Եւ արդ, այստեղ մարմնական սուղ նեղութիւնները փոխանակենք անսպառ տանջանքների ցաւերի հետ, որպէսզի սակաւ պահքի, այս աշխարհի ջանքերի միջոցով փրկուենք գեհենի ահեղ կայծակներից եւ բորբոքուած բոցից. աղօթքի փոքր-ինչ տքնութիւնների միջոցով փրկուենք հրեղէնների յորդահոս գետերից, սուղ տրտմութեամբ փրկուենք ահեղ հնոցներից եւ կրծող չարաժանիք որդերից. այստեղ հեծեծելով ու հառաչելով՝ այնտեղ փրկուենք դառը տանջանքներից եւ անն՝ոյլ խաւարից, այստեղ մի փոքր լալով եւ արտասուելով՝ այնտեղ փրկուենք միշտ լաց լինելուց եւ հանապազ ողբալուց եւ այստեղի մի ապաշխարութեան փոխարէն այնտեղ փրկուենք միգապատ խաւարից, դառը մահից եւ յաւիտենական ամօթից:

Եւ արդ, այս ամէնը խորհրդածելով, ո՛վ անձ իմ բազմամեղ, հեղգ մի՛ եղիր պահքից, մի՛ ծուլացիր աղօթքից, մի՛ դադարիր զղջալուց, մի՛ ուշացիր խոստովանութիւնից, մի՛ վհատուիր ապաշխարութիւնից, մի՛ յոգնիր ողորմութիւնից, մի՛ դադարիր լաց լինելուց, մի՛ հանգստացիր ողբալուց, մի՛ սպասիր վախճանին, մի՛ յուսա ծերութեան վաստակի վրայ, մի՛ համարիր, թէ աշխարհում բազում տարիներ ես [անցկացնելու], մի՛ կարծիր, թէ յետոյ կապաշխարես, [քանզի] գող է թշնամին եւ խաբող. խաբում է քեզ եւ այսպէս ուշացնելով կործանում: Ասում ես՝ այժմ կգործեմ, ապա կապաշխարեմ. ասում ես՝ մանկութեանս տարիներին կհանգստանամ, իսկ ծերութեանս տարիներին կապաշխարեմ. ասում ես՝ այսօր կապրեմ, կվայելեմ, իսկ վաղը կպահեմ. ասում ես՝ այժմ կյղփանամ, ապա կպարկեշտանամ. ասում ես՝ այժմ կժողովեմ, ապա կսփռեմ աղքատներին. այսպիսին են թշնամու պատրանքները, որոնցով խաբում եւ կորստեան է մատնում մեզ՝ տարէցտարի բռնելով եւ ժամ առ ժամ ձգձգելով բարին գործելը:

Եւ արդ, չխաբուենք այսպիսի պատրանքներով. անյայտ է վախճանի օրը, անտեսանելի է ելքն այս աշխարհից: Վրայ է հասնում երկունքի պէս, եւ չես հասցնում զղջալ ու ապաշխարել. գիշերով վրայ է հասնում գողի պէս եւ չի թողնում կոծել ու ապաշխարել. թռչնորսների թակարդի պէս բռնում է արագ եւ չի տալիս լաց լինել, հեծել եւ ողորմութիւն գործել. առիւծի պէս յարձակւում է, մոնչում եւ յափշտակում, եւ բոլորովին չես հասցնում: Եւ արդ, ա՜նձ իմ, ի՞նչ պիտի անես կամ ի՞նչ պիտի գործես դո՛ւ, որ խորհում ես բարին եւ չես կատարում, կամենում ես ողորմել եւ յապաղում ես, ասում ես՝ [պէտք] է զղջալ, եւ Դաւթի նման արտասուքներով չես թրջում մահիճդ. [նա] նաեւ ասում է. «Մոխիրը որպէս հաց կերայ եւ իմ ըմպելիքն արտասուքով խառնեցի» [Սաղմ. ճԱ 10]. եւ ողջ գիշերն անդադար դառնապէս հեծեծում ու լալիս էր: Յօժար ես պահելու եւ Նինուէացիների պէս խարազանի ու մոխրի մէջ չես մտնում. նաեւ [Գրքում] ասւում է, [որ] դարձան բոլոր չար ճանապարհներից եւ անօրէն գործերից, որ գործում էին [տե՛ս Յովն. Գ 5-8]: Ախորժում ես արտասուել ու լալ եւ պոռնիկի պէս խանդաղատագին չես ողբում [տե՛ս Ղուկ. Է 37-50], կամենում ես ողորմել նեղեալներին եւ ոչ՝ այրի կնոջ պէս, որ ամէն ինչ զոհեց [Մարկ. ԺԲ 41-44]:

Արդ, այսպիսին է ապաշխարութեան ջերմութիւնը, որ ո՛չ ունեցուածք, ո՛չ էլ մարմնի ճիգեր է խնայում, այլ նեղում, մաշում ու տառապեցնում է եւ միայն փնտրում է մեղքերի թողութիւն եւ հոգիների ախտերի բժշկութիւն, որով մենք նոյնպէս քաւենք մեր մեղքերը եւ բժշկենք մեր հոգիների վէրքերը: Քանզի մեղքերը քաւել է լինում պահքով եւ ծոմաջան տքնութեամբ, մեղքերը քաւել է լինում աղօթքներով, խնդրուածքներով եւ գորովագին պաղատանքներով, մեղքերը քաւել է լինում խարազանով, մոխրով եւ գետնատարած անկողնով, մեղքերը քաւել է լինում լալով, ողբալով եւ տնանկներին գթալով, մեղքերը քաւել է լինում յոգոց հանելով, հառաչելով եւ անդադար հեծեծանքներով, մեղքերը քաւել է լինում հեզութեամբ, խոնարհութեամբ եւ հնազանդութեամբ, մեղքերը քաւել է լինում աղքատութեամբ, անընչութեամբ եւ մերկութեամբ, մեղքերը քաւել է լինում բարի գործերով եւ բոլորի հանդէպ բարերարութեամբ, մեղքերը քաւել է լինում եղբայրասիրութեամբ եւ Աստուծոյ երկիւղով, մեղքերը քաւել է լինում ուղիղ խրատով եւ վարդապետութեամբ՝ ըստ այնմ, թէ՝ «Ով դարձնում է [մէկին] չար ճանապարհից, փրկում է իր հոգին մահուանից եւ ծածկում իր մեղքերի բազմութիւնը» [Յակոբ Ե 20]: Նաեւ միայն ճշմարիտ դարձը եւ ուղիղ խոստովանութիւնը բաւական են փրկուելու եւ արդարանալու համար՝ ըստ այնմ, թէ՝ «Նախ դու քո անօրէնութիւննե՛րը պատմիր, որպէսզի փրկուես» [Եսայի ԽԳ 26]:

Եւ արդ, դու ի՞նչ ունես ասելու, ա՜նձ իմ բազմամեղ, եթէ այսքան դեղերով չես բժշկւում: Սակայն փութա՛, մի՛ յապաղիր, զարթնի՛ր դառնանիրհ քնից, դարձի՛ր կորստական ճանապարհից, փարատի՛ր անգիտութեան խաւարը, սթափուի՛ր անզգայ մոլորութիւնից եւ ուշքի՛ եկ, թօթափի՛ր քեզանից մեղքերիդ սաստկութիւնը, թեթեւացրո՛ւ անօրէնութեան բեռներիդ ծանրութիւնը, քաւի՛ր յանցանքներիդ անթիւ բազմութիւնը, բժշկի՛ր չարաչար վէրքերիդ խոցուածքները եւ լուա՛ ամբարշտութեանդ տիղմի ժանտահոտութիւնը, որպէսզի սրբուած եւ մաքրուած հոգով, լուսազարդուած եւ մեծապայծառ մարմնով կարողանաս համարձակադէմ եւ զուարթերես անցնել տիեզերական ահեղ եւ անթիւ բանակների միջով, կանգնել Աստուծոյ ահաւոր ու մեծ Բեմի առաջ եւ լսել Նրանից երանութեան քաղցրալուր բարբառը եւ աշխարհատես հրապարակի [աւետիսը], թէ՝ «եկէ՛ք, ի՛ Հօր օրհնեալնե՛ր, եւ մտէ՛ք, ժառանգեցէ՛ք երկնքի բարութեան վայելչութիւնը Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու հետ» [Մատթ. Իե 34]. Նրան փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Բ

ԹՈՒՂԹ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Բժշկական դեղաբոյսերի արմատներն առողջացնում են մարմնի ցաւերը, իսկ ապաշխարութեան արտասուքների հոսքը բժշկում է հոգու մեղքերի վէրքերը, մանաւանդ՝ [նրանց], ովքեր ապաշխարում են հողորմութեամբ եւ տնանկների հանդէպ գթասրտութեամբ: Քանզի հիւանդութիւնները դադարեցնող բազում արմատներ կան, որոնք խառնուած են բժիշկների դեղերի մէջ, բայց կայ [մէկը], որ առաւել եւս ազդու է ցաւերի փարատման համար: Նոյնպէս եւ հոգու ցաւերի դեղերի մէջ կան մեղքերը մաքրող ապաշխարութեան բազում ճգնութիւններ, բայց մեղքերը քաւելու եւ վէրքերը բժշկելու համար ողորմութիւնն է ամենից կարեւոր եւ ազդու առաքինութիւնը՝ ողբերով, հառաչանքներով եւ գթագին արտասուքներով ուղեկցուող, որից չյապաղենք եւ փութանակի արարենք մեղքերի ապաշխարութեան դարձը եւ ունեցուածքից ողորմութիւն տալը չթողնենք վաղուայ օրուան: Քանզի գող է այն օրը, յափշտակող է վախճանի օրը. անտեսանելի է այս աշխարհից ելքը, յանկարծահաս եւ ստիպող եւ չի թողնում աղաչել ու աղերսել, լալ ու ողբալ, ողորմել ու ապաշխարել: Բռնում է ինչպէս որոգայթ, յափշտակում ինչպէս առիւծ եւ, անողորմ վարելով, [տանում] ինչպէս գերեվարների գերի. արտասուելով հառաչում ես եւ ողբալով հեծում, սակայն օգուտ չես գտնում: Քանզի ժամ առ ժամ յետաձգելով՝ բաց թողեցիր ապաշխարութեան ժամանակը, որով կարող էիր մեղքերիդ բեռները թեթեւացնել եւ անօրէնութիւնների տիղմը մաքրել, լինել արդարներին երամակից, երկնաւոր Հօր որդի եւ անանց բարիքների ժառանգորդ:

Եւ արդ, կա՛մ ըղձալի փափկութեան բաղձանքով, կա՛մ ահեղ տանջանքների սպառնալիքներով փութանք ապաշխարել եւ բեռը բեռի վրայ չկապենք եւ ցաւը ցաւի վրայ չաւելացնենք: Եւ թող չխաբի մեզ սատանան, թէ երկար է այս կեանքը, եւ թող չպատրի մեզ մանկութեամբ, թէ կապաշխարենք ծերութեան ժամանակ: Զսպասենք աննեռելի վախճանին եւ անողորմ պահանջողներին, անվաստակ չծուլանանք եւ անվարձ չգնանք: Այլ քաւենք յանցանքները, ապաշխարենք մեղքերը եւ նախանձաւոր լինենք քաջերի քաջութեանը եւ առաքինիների առաքինութեանը, որոնց սրտերը սրբուած են եւ մտքերը՝ լուսա-

ւորուած, անմեղ են մեղքերից եւ անարատ՝ անօրէնութիւններից, որ միշտ վերինն են խորհում եւ հանապազ վերիններին համար հոգում, ովքեր հողեղէն մարմին ունեն եւ հրեշտակերօն են, ովքեր կարօտ չեն վարդապետութեան գրքերի եւ տարացոյց օրինակների, քանզի գրքերից առաւել են [նրանց] մտքի ուղղութիւնը եւ վարքի առաքինութիւնը: Իսկ մենք հեռու ենք ուղիղ ընթացքից եւ օտար՝ առաքինութեան վարքից, շեղուած ենք թշնամու որոգայթներով եւ շաղախուած՝ յանցանքների տիղմով, կարօտ ենք խրատների, վարդապետութեան եւ տարացոյց օրինակների. եւ, թերեւս, երկնչենք ահեղ հրի սաստերի ահից եւ իմանանք տարացոյց օրինակների աղէտներից: Մարմնականով ճանաչենք հոգեւորը եւ երեւելիով իմանանք աներեւոյթը. զղջանք ահեղ տանջանքների ահով եւ անանց բարիքների փափագմամբ: Հոգու վէրքերի ցաւերի վրայ ապաշխարելու համար պէտք է օրինակ վերցնել մարմնական ախտերի ցաւը, թէ ինչպէս է անձը միշտ ցաւագին ողբում մարմնական ցաւերի նեղութիւնների համար, հանապազ դառնապէս լալիս ժամանակաւոր ախտերի սաստկացման համար եւ ահաւոր աղէտների տարակուսանքից հառաչում, անդադար հեծում, եւ պաղատանքների ու վայերի ձայները շարժում են նոյնիսկ անողորմների գութը: Քանզի ցաւերի նեղութեան սաստկութիւնից ո՛չ սիրելիների սիրով է բերկրում, ո՛չ ատողների թշնամանքի վրայ զարմանում, ո՛չ կեանքի փափկութիւնը յիշում, ո՛չ էլ մտաբերում գեղեցկութեան վայելչութիւնը. եւ այս աշխարհի ողջ պատիւներն ու պայծառութիւնն արհամարհելով ուրանում է ցաւերի տարակուսանքների պատճառով: Այլ միշտ մնում է սուգով, արտասուքով եւ ողբագին խանդաղատանքներով. միայն վշտերի նեղութիւնների համար է վշտագին պաղատում, որի պատճառով մերձաւորներից շատերը ողորմելով արտասւում են եւ շտապում փնտրել բժիշկներ եւ դեղեր, որպէսզի միաւորժամանակ ցաւերը փարատեն, եւ բժիշկներին խոստանում են նաեւ վարձ եւ դեղերի գներ՝ ցաւերի տագնապները փարատելու համար:

Եւ այս բոլոր նեղութիւնները լինում են յանուն այս ապականացու մարմնի, որ թէպէտ եւ բժշկւում է, սակայն մեռնել ունի: Իսկ ի՞նչ անենք գեհենի ահեղ հրի մշտնջենաւոր ցաւերի համար, որ պատրաստ պահւում են մեր բազմավէրք հոգիների համար, որոնք միշտ ախտացել են մեղքերի մէջ եւ անբուժելի կերպով ընկած են յանցանքների մահճում. եւ մեղքերի անօրէնութիւնները հանապազ խոցոտում են եւ

միշտ վիրաւորում, եւ ցաւերի աղէտների նեղութիւններն առաւել չարաչար են տանջում քեզ: Եւ չենք հառաչում, հեծում եւ հանապազ պաղատում Աստծուն, չենք ողբում մեղքերի ցաւերը եւ չենք լուանում մեր յանցանքների վէրքերը, անդադար լալով՝ չենք արտասւում մեր անօրէնութիւնների եւ մշտնջենաւոր տանջանքների արհաւիրքների համար, այլ հանապազ մեղքեր ենք աւելացնում [նրանց] վրայ եւ ապաշխարութեան սպեղանիներով չենք դարմանում, բժիշկներ չենք փնտրում եւ դեղեր չենք որոնում, ունեցուածք չենք վաճառում եւ վարձ չենք խոստանում կարեւոր վէրքերի բժշկութեան ու անտանելի ախտերի անօրէնութեան դիմաց, որ ոչ միայն աղիքներով եւ որովայնով ենք ցաւերի մէջ, այլեւ մեր ողջ մարմնով՝ մեղքերի վէրքերի մէջ: Քանզի մեր թափառող աչքերը վիրաւորուած են՝ արատներին նայելով, մեր լսելիքը ցաւահարուած է անվայել բաներ ախորժելու պատճառով, իսկ մեր լեզուները՝ բամբասանքներով եւ երդումներով, մեր սրտերը ցաւահարուած են չար ցանկութիւններով եւ պիղծ խորհուրդներով, մեր ձեռքերը՝ յափշտակութեամբ եւ զրկելով, իսկ մեր ոտքերը՝ թատերական խաղերով եւ անպարկեշտ ընթացքով. եւ մեր մարմիններն ամբողջովին ջրգողուած[2] են մեղքերով եւ այտուցուած՝ անօրէնութեամբ: Եւ այսպէս, բոլոր անդամներով մեղքերի ցաւերի եւ վշտերի մէջ ենք եւ չենք մերձենում հոգու բժիշկներին, ապաշխարութեան դեղ չենք փնտրում, [այլ] մեղքերի հիւանդութիւններով չարչարւում ենք եւ արտասուքների ապաշխարութեամբ չենք բժշկւում: Ո՛չ ողբերով ենք սրբում մեղքերի դառը թարախը, ո՛չ էլ արտասուքներով լուանում չար նեխածութեան ապականութիւնը, որը եթէ մէկն այստեղ չբժշկի աղօթքով, պահքով եւ ողորմածութեամբ, այնտեղ [նրան] սպասում է ահեղ հուրը եւ գեհենի բոցի անշէջ բորբոքումը, [այնտեղ] պատրաստ են եւ սպասում են հրեղէնների գետերի հրահոսանքները եւ խաւարով լի աղջամղջին տարտարոսները, դառը դահիճները եւ անողորմ չարչարանքները, աղէտների բազում վարանումները եւ աննրելի տանջանքների սարսափելի արհաւիրքները, որ մնում եւ պահւում են ահեղ Դատաստանի մեծ Օրուան:

Եւ արդ, այս ամէնն է սպասում [մեզ], իսկ մենք աներկիւղ փայփայւում, փափկանում եւ մեղանչում ենք եւ, ամբողջապէս երկրաւոր-

2 ջրգողուել - մարմնի խոռոչները ջրով լցուել

ների մէջ յորդելով, անհոգ գործում ենք ամէն ինչ՝ ուտում եւ ըմպում ենք, անհոգ քնում ենք, որպէս անմահներ եւ մշտնջենաւորներ մեծ ա-գահութեամբ մթերքներ հաւաքում: Ո՛չ երբեւէ մտաբերում ենք Օրը, ո՛չ Դատաստանի արհաւիրքները եւ յաւիտենական դառն ամօթը: Եւ ամենեւին իսկ չենք յիշում, թէ ինչ պիտի կրենք յետմահու եւ մեծ զգուշութեամբ եւ հանապազ երկիւղով չենք մտաբերում սատանայի ամենահնար պատերազմը, որը միշտ գաղտնի, անդադար մարտնչում է եւ յարաժամ անբեւոյթ վիրաւորում. եւ չենք սգում եւ չենք զգուշանում նրա չար նետերից ու խստավէր հարուածներից, այլ ամբողջովին ցանկութիւնների մէջ անհոգ վայելում ենք եւ անխոհեմ հանգըստանում: Եւ այնպէս ծոյլ եւ անհոգ ենք ապրում, որպէս թէ տանջանքներ իսկ չկան, ո՛չ գեհեն, ո՛չ ահեղ Դատաւոր, ո՛չ անողորմ դատաստաններ, ո՛չ գործերի քննութիւն, ո՛չ խորհուրդների որոնում, ո՛չ վարքի հաշուետուութիւն, ո՛չ դատարկ խօսքերի պահանջ:

Եւ այս բոլոր ծուլութիւնները սատանայի չար հնարքներից են [լինում], որ ընթանում է մեր ողջ կենցաղավարութեան միջով եւ այնտեղ ղնում մահուան որոգայթը, քանզի սատանան ոչ միայն չարիքով է չարչարում, այլեւ ուղիղ վարքը դէպի չարը դարձնում. եւ բարի շնորհների [դիմաց], որ մարդու մէջ տեսնում է, դնում է մահուան որոգայթը: Ինչ որ փոքր ես համարում եւ չես շտապում ապաշխարել, նրանով է կործանում, քանզի պահողին կործանում է կեղծաւորութեամբ եւ ի ցոյց ճգնելով, աղօթողին՝ արհամարհանքով Աստուծոյ առաջ կանգնելով եւ միտքը դրսում թափառեցնելով, ողորմածին՝ հիւանդների տեսութեան չգնալով: Նաեւ կործանում է վարդապետներին՝ կեղծաւորութեամբ ուսուցանելով, որպէսզի մեծ երկիւղով չուսուցանի Աստուծոյ կամքը: Սատանան կորստեան է մատնում նաեւ սաղմոսերգողին, եթէ չզգուշանայ անփառութեան չար ախտից, այլ լսողներին ցոյց տալու եւ նրանցից գովուելու համար ասի եւ ոչ թէ Աստուծոյ պատգամները պատմի եւ Նրա օրհնութիւնները երգի. այդպիսիներն, ինչպէս փառաւորիչները, չեն պատուում: Սատանան կորստեան է մատնում նաեւ լսողներին՝ Աստուծոյ պատգամները եւ վարդապետութեան խօսքերը ծուլութեամբ եւ արհամարհանքով լսելով: Սատանան կորստեան է մատնում նաեւ վաստակաւորների վաստակները՝ տրտնջալով, աւելի ծոյլերից [իրեն] մեծ ցոյց տալով, իր սպասաւորութեան գործի հաշիւ ու համար ներկայացնելով եւ բոլորին

յայտնելով իր վաստակի ջանքը, ով ոչ թէ վաստակաւորների պէս հանգստանում է, այլ տրտնջացողների եւ դատապարտեալների պէս յանդիմանում: Սատանան կործանում է նաեւ ունեւորներին, որոնք ժրաջան են միայն հաւաքելու եւ ոչ թէ՝ տնանկներին բաշխելու մէջ, որ ունեցուածքի միջոցով էլ չեն կարողանայ փրկուել, այլ կդատապարտուեն ինչպէս անողորմներ եւ ագահներ: Սատանան կորստեան է մատնում նաեւ աղքատներին՝ հեծեծանքներով, տրտնջալով եւ չգոհանալով Աստծուց, որ կամենում է մշտնջենաւորների մէջ փառաւորել նրանց: Սատանան կործանում է նաեւ արուեստաւորներին, եթէ վարձն աւելի են վերցնում, քան գործը եւ կամ նախանձով ու չարակնութեամբ արուեստի տաղանդն արգելում են նրանցից, ովքեր խնդրում են ուսանել, որ կպարտաւորուեն ինչպէս տաղանդապարտները [տե՛ս Մատթ. Իե]: Սատանան կործանում է նաեւ իշխաններին, որ ծանր իշխանութիւն վարեն, գազանացած սրտով ահաբեկեն ռամիկներին կամ շքեղ արտաքինի եւ կաշառքի համար արդարների իրաւունքը գողանան: Կործանում է նաեւ նրանց, որ իշխանութեան տակ են, եթէ չհնազանդուեն [իշխանին]՝ որպէս Աստուծոյ սպասաւորին եւ երկիւղով չպատուեն: Կործանում է նաեւ հարկահաններ հարկապահանջներին, եթէ արքունական հրամանից աւելի պահանջեն եւ նեղեն նեղեալներին[3]... եւ գեհենի գուբերի մէջ վառուեն:

Եւ արդ, սատանան այսպէս բոլորի համար մահուան որոգայթներ է հնարում եւ Աստուծոյ ուղիղ կարգից եւ վարքից հանում: [Արդիւնքում]՝ չար պտուղ եւ անօրէն վարձ, [եւ] որով կարծում են ստանալ արքայութիւնը, նոյնով պիտի ժառանգեն տանջանքները: Եւ սատանան այնպիսի յափշտակումով է յիմարացնում, որ նոյնիսկ աղօթքի, պահքի եւ ողորմութեան ժամանակ է գցում մեղքի մէջ: Եւ չենք ջանում մեզանից թօթափել սատանայի թմբիրը եւ պաղատանքներով, ապաշխարութեամբ Տիրոջը չենք հաշտեցնում, քանզի ապաշխարութիւնը կարող է սպիտակեցնել մեղքերով սեւացածներին եւ մաքրել գարշաթաթախներին, լուսաւորել մեղքերով խաւարեալներին եւ փարատել անօրէնութեան մթերումները: Եւ այս իմանալով՝ սատանան մօտենում է նրան, ով կամենում է ապաշխարել, եւ ծանրացնում է նրա միտքը՝ չյօժարելու սկսել ապաշխարութիւնը: Քանզի գիտի՝ եթէ սկզբի մէջ

3 Բնագրում մէկ տող անընթեռնելի է, որ միւսներում չկայ:

հաստատուի, ապա նաեւ ապաշխարութեան վաստակով կքաղցրանայ, ուստի բոլոր հնարներով հեռացնում է ապաշխարութիւնը սկսելուց՝ օր-օրի ձգձգելով:

Եւ մենք, այս ամէնն իմանալով, փութալով փութանք սկսել ապաշխարութիւնը, քանզի միայն սկսելիս է թւում, թէ ծանր կլինի, սակայն սկսելուց յետոյ գործը հեշտանում է եւ քաղցր ու ցանկալի ընթանում: Ինչպէս նա, ով կամենում է ուսանել, անգամ չի համարձակւում գրով երկրորդել այբուբենի առաջին [տառերը] եւ ուսման [պարզ] բառերը, այլ, [նախ] կիսատ նշանախեցերով եւ բեկբեկելով եւ ապա տառը տառին կպցնելով, դիւրութեամբ կազմում է վանկը, այնպէս էլ ապաշխարութիւնն է. եթէ սկզբում միայն համբերում է, խոստովանութեամբ շնորհներ է ստանում, իսկ շնորհներով լուսաւորւում է [նրա] միտքը. ճանաչում է տանջանքների երկիւղը, իսկ երկիւղով արտասուք եւ սուգ է ստանում. սուգն ուսուցանում է պահք, իսկ պահքը բերում է աղօթք. աղօթքը յօժարեցնում է ողորմել. եւ կամաց-կամաց, աստիճան առ աստիճան բարձրանում է եւ հեշտութեամբ երկինք ելնում: Այլեւ կարող ես սրանցից միայն մէկով արդարանալ, եթէ ցանկանաս, քանզի շատերը միայն ճշմարիտ խոստովանութեամբ փրկուեցին, ոմանք փրկուեցին սգով եւ տրտմութեամբ, ոմանք խարազանով ու մոխրով միայն ապաշխարեցին, ոմանք լալով ու արտասուքներով հաշտեցրին Տիրոջը, ոմանք պահքով եւ աղօթքով ապաշխարեցին, ոմանք ողորմութեամբ Աստուծոյ ողորմութիւնը ստացան, ոմանք մարդասիրութեամբ եւ աւելի տկարներին ծառայելով ապաշխարութիւն գտան, ոմանք խոնարհութեամբ եւ հեզութեամբ ստացան մեղքերի թողութիւն: Ինչպէս բազմատեսակ են մեղքի ճանապարհները, նոյնպէս եւ զանազան են ապաշխարութեան դեղերը, որոնցով կարող ես բժշկել մեղքերի բոլոր հիւանդութիւնները, ոչ թէ տարիների թուով եւ շատ ժամանակով, այլ միայն ճշմարիտ դարձով եւ սրտով չարից հեռանալո՛վ կարող ես արդարանալ:

Արդ, այս ամէնն իմանալով, ապաշխարութեամբ քաւենք մեր մեղքերը, քանզի մեղքերի պղծութիւնները դատապարտում են ոչ միայն [Դատաստանի] ահեղ Օրը, այլեւ այստեղից իսկ խղճմտանքով սաստիկ չարչարում. եւ գաղտագողի շրջելով՝ [ապրում է] երկիւղով՝ մարդկանցից, կասկածանքով՝ ծանօթներից, ամօթով՝ սիրելիներից, նախատինքով՝ թշնամիներից, դատաւորների սպառնալիքներով, բանտի ու պատուհասների երկիւղով, Աստուծոյ պատուիրանների յանդիմանութեամբ եւ ահեղ տանջանքների ահով: Եւ այնտեղ գնալով՝ ո՞վ կկարողանայ պատմել մշտնջենաւոր անհերելի ազէտների նեղութիւնների մասին, ուր այրւում եւ մաշւում են ամօթով եւ նախատինքով: Իսկ ապաշխարութեան պտուղը ոչ միայն երկնքում ես վայելում, այլեւ այստեղ իսկ հարիւրապատիկ [աւելին] ես ստանում՝ խնդութեամբ, անհոգութեամբ, պատուիրանների գովութեամբ, անխղճմտալի ուրախութեամբ: Անվեհեր ես մարդկանցից, անկասկած՝ ծանօթներից, անպարսաւ՝ թշնամիներից, առանց ամօթի՝ սիրելիների հանդէպ, համարձակ՝ հրապարակներում, աներկիւղ՝ դատաւորների առաջ, ազատ՝ պատուհասներից. խաղաղ կեանք, հեշտական մահ, մշտնջենաւոր եւ փափագելի փափկութիւնների ակնկալութիւն: Իսկ այնտեղի ուրախութիւնները, անբաւ բարիքների վայելչութիւնը ո՞ր բերանը բաւական կլինի պատմելու:

Արդ, ա՛յս է արդարութեան վարձը, ա՛յս է ապաշխարութեան պտուղը: Ուստի մեղքերի բազմութիւնից մի՛ երկնչիր ապաշխարութեան մէջ մտնելիս, միայն Աստուծոյ առա՛ջ ընկիր. [Նա] ոչ թէ դատաւոր է, այլ՝ բժիշկ. ոչ թէ սպանող դահիճ է, այլ՝ գորովագին Հայր: Քեզ ընդառաջ է ելնում, ինչպէս անառակ որդուն, քո պարանոցովն է ընկնում, որ դարձար դէպի ապաշխարութիւն, երկնաւոր Հայրը համբուրում է քեզ՝ բերանը [հպելով] աչքերիդ, հրամայում է քեզ հագցընել անմեղութեան առաջին պատմուճանը, ամրացնում է քեզ կօշիկներով՝ թշնամու յետագայ թոյների դէմ: Կերակրւում ես Որդու Մարմնի Պատարագով, քեզ հետ Պատարագից վայելում են ընտրեալ ծառաները, քո անառակութիւնից դառնալու առթիւ բոլոր սուրբերը երգում եւ պարում են, որից սարսափած փոքր-ինչ նախանձում է առաջին թլփատուած ժողովուրդը՝ չմտնելով Աստուծոյ Որդու զենման ուրախութեան մէջ. որոնց մօտ ելաւ ու եկաւ էական Աստուած Մարմնով՝ աղաչելու Հօրը հաւատացող հրեային, հաւատի կոչելու ապաշխարող հեթանոսին եւ ուրախ լինելու իր անառակ եղբօր դարձով, միասին վայելելու Աստուծոյ Որդու զենումից եւ ժառանգելու անանց բարիքների վայելչութիւնը Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու հետ. Նրան փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից:

Գ

ԹՈՒՂԹ ՊԱՀՔԻ ՊՆԴՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ազդու, օգտակար եւ կարեւոր է պահքի պնդութիւնը եւ ժուժկալութիւնը որկրամոլութիւնից եւ մանաւանդ՝ [նրանց համար], ովքեր խոհեմութեամբ են մերձենում նրան եւ ճշմարտապէս ճանաչում, թէ որքան շահաւոր է պահքի պնդութիւնը: Իսկ ովքեր այսպիսի զգուշութիւն չունեն, արդէն իսկ հետեւեալ տեսանելի [օրինակներով] պէտք է իմանան պարկեշտութեան մաքրութիւնը եւ որովայնի վնասակարլցումը: Յայտնի է, որ ինչպէս երաշտահար տեղանքները պէս-պէս բուսականութիւն չեն բուսեցնում, այնպէս էլ ցամաքած որովայնները պղծութեան խորհուրդներ չեն ծնում: Եւ ինչպէս աղբուտ հողը խառնիխուռն բուսականութիւն է բուսեցնում եւ աճեցնում, նոյնպէս էլ կերակուրների աղբով փափկացած որովայնները հանապազ աղտեղի խորհուրդներ են վեր հանում, քանզի գէջ հողը պարարտացնում է որդերին, իսկ գիջացած որովայնը՝ պիղծ ախտերը. քանզի ովքեր փափկանում են համեղութեամբ, [նրանք] նաեւ ենթարկւում են տեսակ-տեսակ խորհուրդների, եւ ով փոքր-ինչ կերակրով բաւարարւում է, նա [սոսկ] յիշում է քաղցի տագնապը. քանզի թանձրացած որովայնները սուրբ խորհուրդներ չեն ծնում, այլ մարմնի զգայութիւններն ամուր պատում են [մեղքի] ծածկոյթով: Ովքեր որովայնին են ծառայում, հնարաւոր չէ, որ լինեն Աստուծոյ հաւատարիմ ծառայ, քանզի ովքեր պահքով նրբանում եւ սրբւում են, ոչ միայն անօրէնութիւնների պղծութիւնն են սրբում, այլեւ սուրբ Աստծուն իրենց մէջ են բնակեցնում:

Եւ արդ, այսպիսի մեծութիւն ունեն պահքի պնդութիւնը եւ պարկեշտութեան առաքինութիւնը, որ արգելելով կանգնեցնում են մարմնի բոլոր անդամները անդէպ ցանկութիւններից ու աղտեղի խորհուրդներից եւ ստէպ-ստէպ հալածում մտքից դիւային խորհուրդների յարձակումը, որոնք ցանկանում են մաքրուածների սրտերը պղտորել եւ պղծել: Քանզի պահքի պնդութիւնը որպէս երկաթէ ջլերով ամուր պահում է վարքի բոլոր առաքինութիւնները եւ հաւատքի հաստատութիւնները, քանզի հզօր աշտարակ է ընդդէմ թշնամու եւ ամուր պարիսպ՝ սատանայի բոլոր նետերի դէմ: Քանզի յոյժ կարեւոր է պահքի պնդութիւնը մեր բնութեան համար, եւ շատ թերութիւններ շտկւում են պահքի խոնարհութեամբ: Արդէն իսկ մարդուն ստեղծելիս Աստուած պահքի պնդութեամբ պարսպեց մեր բնութիւնը եւ առաջին մարդուն որպէս առաջին պատուիրան տուեց պահքի պնդութիւնը՝ չճաշակել չարի եւ բարու գիտութեան ծառից: Քանզի եթէ պահէր պահքի պատուիրանը, կժառանգէր անախտ, անմահ եւ անմեղ կեանքը եւ երկրնքում՝ երկնային բարիքները, քանզի շատերը, ովքեր պահեցին պահքի պնդութիւնը, փրկուեցին բազում վշտերից:

Այս պահքի պնդութեամբ նաեւ մեծն Դանիէլը փրկուեց առիւծների ժանիքներից, քանզի գազանական բնութիւնն էլ էր պատկառում մերձենալ պահողի սուրբ մարմնին, եւ քանի որ իրեն արգելել էր մօտենալ թագաւորի պիղծ զոհերով աղտեղուած սեղանին, գազաններին էլ արգելուեց մօտենալ պահողի սուրբ մարմնին [տե՛ս Դան. Ե]: Այս պահքի պնդութեամբ նաեւ երեք մանուկները փրկուեցին բորբոքուած բոցից, քանի որ այրեցին կերակուրների ցանկութեան մոլութիւնը եւ մի փոքր ոսպով գոհացան, հանգցրին հնոցի բարձրացրած ահեղ հուրը, քանզի այնտեղ՝ ներսում, [Հոգու] զովացուցիչ ցօղը մխիթարում էր պահողներին. եւ դրսում բոցը զեղխացածների կողմից սաստկանում էր եւ քառասունինը կանգուն տարածութեան վրայ սպանում բոլորին, իսկ ներսում զովացուցիչ ցօղը մխիթարում էր պահողներին [տե՛ս Դան. Գ]: Այս պահքի պնդութեամբ նաեւ նինուէացիների բազմամբոխ քաղաքը փրկուեց, քանզի դարձան իրենց բոլոր անօրէնութիւններից եւ չար ընթացքից, խարազանով եւ մոխրով դարձրին Աստուծոյ խստացած բարկութիւնը. եւ քանզի առանց խնայելու նեղեցին իրենց անձերը պահքով եւ պաղատանքներով, հեծեծագին լալով ու ողբալով, Աստուած խնայեց նրանց հոգիներն ու մարմինները [տե՛ս Յովն. Գ]: Այս պահքի պնդութեամբ նաեւ Մովսէսը ստացաւ աստուածադիր օրէնքը, քանզի քառասնօրեայ պահքի մաքրութեամբ արժանացաւ մերձենալ Մաքուրին. եւ անմիջականօրէն խօսում էր Նրա հետ, ինչպէս՝ բարեկամի [տե՛ս Ելք ԻԴ 12-18]: Այս պահքի պնդութեամբ Թեսբացի Եղիան իր բերանի խօսքով երկինքն էր բացում եւ փակում, հուր էր երկիր իջեցնում [տե՛ս Գ Թագ. ԺԸ]:

Պահքի պնդութեան մասին էլ ի՞նչ ասեմ աւելի, որը նաեւ պէտք եղաւ տէրունական Մարմնին՝ Անմեղին եւ Անարատին՝ մեզ օրինակ ցոյց տալու համար, որով եւ մեր առաջին հայրերն առաքինացան եւ անմարմին հրեշտակների վարքը մարդկային մարմնի մէջ երեւեցրին,

երկրի վրայ մեռցրին երկրային ցանկութիւնները եւ հոգիները կենդանացրին երկնքում, մերժեցին յանցաւոր հեշտութիւնները, որպէսզի ստանան անանց բարիքները. տներից եւ ունեցուածքներից հեռացած՝ չարչարուեցին բազում փորձանքներով եւ, իրենց անձերն ամենեւին նեղելով, մեռցրին քաղցով, ծարաւով եւ գծուծ հանդերձով: Քանզի նրանցից ոմանք միայն խոտաճարակութեամբ բաւականացան, իսկ ոմանք միայն մրգերի ճաշակմամբ կենցաղավարեցին: Ոմանք միայն ծառի [ճիւղերի] ծայրերն ու խոտերի արմատներն էին ուտում, ոմանք ժուժկալում էին փոքր-ինչ ընդեղէնով, ոմանք՝ օրական երեք նուկի[4] հացով, ոմանք [օրական ուտում էին] նկանակի[5] չորրորդ մասը, ուրիշներ էլ՝ վեցերորդ մասը. ոմանք որպէս կերակուր էին գործածում ցորենի թեփը, ոմանք միայն խոզաբուտ եղջիւրով[6] էին դադարեցնում քաղցի տագնապը: Ոմանք հոգեւոր կերակուրի Հաղորդութիւնն օրուայ մէջ բաւական էին համարում մարմնի կարիքների համար, եւ այլ կերակուրների փափկութիւնն ամենեւին մեռած էր նրանց համար: Քանզի ոմանք ճաշակում էին օրական մէկ անգամ, ոմանք՝ երկու օրը մէկ, ոմանք՝ երեք օրը մէկ, ոմանք՝ եօթ օրը մէկ, ոմանք էլ՝ աւելի: [Երբ] յիշում էին կերակրի կարիքը, այն ճաշակում էին կշռով եւ ջուրն ըմպում էին չափով, անդադար հեծութեամբ պարապում էին աղօթքի եւ պաշտօնի[7] մէջ, ողջ գիշերն անցկացնում արտասուքների եւ ողբերի մէջ եւ աղերսալի թախանձանքներով եւ հառաչանքներով հաշտեցնում Աստծուն: Ոմանք ննջում էին պարաններով կապուած[8], ոմանք՝ ոտքի վրայ տքնելով գիշերն անցկացնում, ոմանք՝ սակաւ ինչ նստելով, ոմանք՝ մինչեւ առաւօտ ձեռքերը վեր ամբարձած պահում, ոմանք, պարանոցները խոնարհած, մինչեւ առաւօտ համբերում, ոմանք՝ հարիւրաւոր աղօթքներ կատարում: Ոմանք լռում էին, ոմանք՝ միայն սաղմոսներ ասում, ոմանք չէին բարբառում, մինչեւ մէկը չհարցնէր նրանց, ոմանք խոհեմաբար խօսում էին միայն ընկերոջն օգուտ տալու համար եւ մշտապէս ճիգերով ու պաղատանքներով անց-

4 Նուկի - 1/12 լիտր

5 Նկանակ - հացի բլիթ

6 խոզաբուտ եղջիւր - եղջերենու պտուղ, որով սնուում են խոզերը

7 պաշտօն - սաղմոսերգութեան կանոն, գիշերային ժամերգութեան մաս

8 Հաւանաբար նկատի ունի ճգնութեան այն տեսակը, որի ժամանակ չքնելու նպատակով պարաններով իրենց կապում էին պատից կամ առաստաղից:

կացնում օրը, ինչ-որ հոգեւոր խրատի համար գնում էին օտար աշխարհներ, թշնամիներին սիրում ինչպէս բարեկամների, խոնարհութեամբ ընկերոջն իրենց անձից լաւը համարում, հնազանդութեան համար նոյնիսկ հրի մատնւում եւ գազանների առաջ գնում, իրենց անձերը ծառայեցնում ընկերոջը եւ իրենց արդար վաստակով կերակրում ընկածին, տնանկին եւ հիւանդին: Իրենց մարմինը չափով էին պահում եւ սանձահարում խորհուրդները եւ այնպէս զանազան եւ բազում նեղութիւններով պահքի պնդութիւններ յօրինում, քանզի այս ամէնն է նեղ դուռը եւ անձուկ ճանապարհը, որ տանում է դէպի յաւիտենական կեանք: Ճշմարիտ պահքի պնդութեամբ նաեւ կատարում էին բազում նշաններ եւ սքանչելիքներ՝ հանում էին դեւերին, բժշկում հիւանդներին, յարութիւն տալիս մեռեալներին, քայլում ջրերի վրայով եւ արեգակի ընթացքը դադարեցնում. եւ այսպիսի ու սրանից էլ աւելի մեծ զօրութիւններ էին գործում պահքի պնդութիւնները: Քանզի առաջին սուրբերը, երբ կամենում էին մերձենալ Աստծուն, նախ մաքրւում էին պահքով, ապա մերձենում Մաքուրին եւ աստուածատեսներ լինում: Իսկ ովքեր հեռացան պահքից, հեռացան Աստուծոյ շնորհներից եւ բազում չարիքներով չարչարուեցին: Ահա Ադամը հեռացաւ պահքի պնդութիւնից եւ դուրս ելաւ դրախտից դէպի փշաբեր երկիրը: Նոյի ժամանակների ազգի որդիները հեռացան պահքի պնդութիւնից եւ համալունջ ջրհեղեղով սատակուեցին եւ հեղձուեցին: Եբրայեցիների ժողովուրդը հեռացաւ պահքի պնդութիւնից, եւ ընտիրները սատակուեցին [տե՛ս Սաղմ. ՀԷ 31]: Սոդոմի բնակիչները հեռացան պահքից, եւ կայծակների հրացայտ անձրեւ տեղաց նրանց վրայ: Եւ բոլորը, ովքեր արհամարհեցին պահքը, արհամարհուեցին Աստծուց եւ Նրա ողորմութիւնից հեռացան:

Բայց պահողները պէտք է [զինուած] լինեն խոհեմութեամբ, քանզի սատանան կործանում է պահեցողին եւ ժուժկալողին, եթէ բամբասի աւելի անպարկեշտների մասին կամ իրեն ուրիշներից բարձր ցոյց տայ կամ կերակուրները պիղծ համարի կամ, եթէ կեղծաւորութեամբ պահի, որպէս թէ ուրիշների աչքում պահքի պնդութիւնը ծածկի՝ սնապարծ եւ կեղծաւոր չերեւալու համար, սակայն ցանկանում է, որ ուրիշների կողմից հռչակուէր իր ժուժկալութիւնը. եւ եթէ ոչ ոք չիմանայ, ապա ինքը ցանկանում է խստացնել [ճգնութիւնները] պահքի պնդութեան պատրուակով, որպէսզի իմանան եւ զարմանան նրա համ-

բերութեան վրայ: Այսպիսի պահքը ոչ թէ սրբում եւ արդարացնում է, այլ՝ պղծում եւ կործանում: Եւ եթէ նոյնիսկ կերակուրներով պարկեշտանայ, իսկ միւս անդամներով չպահի, զուր եւ ունայն է ջանում: Ա՛յս է, որ ասում եմ. եթէ լեզուն չպարկեշտացնի, աչքի, ունկի, խորհուրդների եւ մտքերի համար չզգուշանայ, ընկերոջ նկատմամբ ոխ պահի, եղբօր հանդէպ ատելութիւն ունենայ կամ մէկի նկատմամբ կեղծաւորութեամբ սէր ցոյց տայ կամ խոնարհութեամբ ընկերոջը չծառայի, պատիւ եւ իշխանութիւն ցանկանայ եւ կարծի, թէ իր անձը պահքի մէջ է, այնպիսին յոյժ մոլորուած կլինի սատանայական խորհուրդներից: Քանզի այն ոչ թէ խոնարհութեան պահք է, այլ՝ խաբէութեան եւ կեղծաւորութեան, զրաչան եւ անվաստակ է, որ այրում է հրի մէջ եւ հանապազ ջուրը թափւում, որը ցեցն ապականեց, եւ գոլերը կտրեցին ու տարան, եւ ոչ մի օգուտ չստացաւ այնպիսի պահքի մրցութիւնից, այլ յոյժ պատժի եւ պատուհասի [արժանացաւ]: Քանզի այստեղ պատժւում է կեղծաւոր պահքով, իսկ այնտեղ՝ արդար դատաստանից դատապարտուելով, հնոցների կրակի մէջ է չարչարւում եւ աւելի եւս պատժապարտ լինում, քան որկրամոլն ու արբեցողը, քանզի ամենագէտ Աստծուն անգէտ համարեց չարաչար խստակրոնութեան կեղծաւորութեամբ:

Կան նաեւ այնպիսիներ, ովքեր երբ ցանկանում են մտնել պահքի մէջ, շտապում են լուացուել եւ օծանուել, խճողում են փորն ու որովայնը, սաստիկ որկրամոլութեամբ եւ արբեցութեամբ շուայտանում, ապա մտնում պահքի պնդութեան մէջ: Եւ արդ, ի՞նչ կոչենք այնպիսիներին՝ պահողնե՞ր, թէ՞ արբեցողներ, պարկեշտնե՞ր, թէ՞ որկրամոլներ, ճգնաւորնե՞ր, թէ՞ զեղխացածներ, քանզի անհնար է պղծութեամբ սրբութիւն գտնել եւ մեղքով դէպի արդարութիւն բարձրանալ. եւ ոչ ոք պոռնկութեամբ կուսութիւն չի ստանում, ոչ էլ զեղխութեամբ եւ արբեցութեամբ՝ պահքի սրբութիւն: Քանզի անհնար է այսպէս լինել, թէ՝ նախ պոռնկանամ, ապա կուսանամ եւ կամ զեղխանամ ու շուայտանամ արբեցութեամբ, ապա մտնեմ պահքի սրբութեան մէջ, քանզի անհնար է պոռնիկին կուսանալ եւ արբեցութեամբ զեղխացածին՝ պահող եւ ճգնող դառնալ: Քանզի կոյսը կուսութեամբ է ստանում կուսութեան պսակը եւ ոչ թէ՝ պոռնկութեամբ, եւ պահողը ժուժկալութեամբ է ընդունում պահքի վարձը եւ ոչ թէ՝ արբեցութեամբ, զեղխութեամբ եւ որկրամոլութեան շուայտանքով:

Կան նաեւ այնպիսիներ, ովքեր քառասնորդական պահքն ապաղաս[9] են ասում. շաբաթների մի կէսը կարեւոր են անուանում եւ պնդում ու ճգնում են սրբութեամբ, իսկ մնացածն ապաղաս են անուանում եւ թուլացնում պահքի պնդութիւնը, անակնկալ կերպով փափուկ կերակուրներ ճաշակում եւ որկրամոլութեամբ լուծում սուրբ եւ անարատ քառասնորդական պահքը: Քանզի այս կարեւոր քառասնորդական պահքն Աստուծոյ Որդին պահեց՝ մեզ օրինակ ցոյց տալու համար եւ այնտեղ չէր անուանում ապաղաս: Նոյն քառասունքը նաեւ Մովսէսը պահեց լեռան վրայ եւ այնտեղ չէր անուանում ապաղաս: Նոյն քառասունքը Եղիան պահեց անապատում՝ լեռան վրայ, եւ այնտեղ չանուանեց ապաղաս: Նոյն քառասունքը նաեւ մենք մեր տկարութեամբ կատարում ենք օրըստօրէ պահքով, եւ վայել չէ մեզ քառասնորդական պահքն ասել ապաղաս եւ լուծարել սուրբ պահքի պնդութիւնը, քանզի պահքի սկզբից մինչեւ վերջ պահք է փափկութիւնից, եթէ ցանկանաս ճգնել եւ պահել. իսկ եթէ ցանկանաս որկրամոլութեամբ լուծարել, ոչ թէ թեթեւ ապաղասներ ես լուծարում, այլ՝ կարեւոր պահք: Քանզի ապաղաս է անուանւում ծոյլերի եւ անկատարների կողմից եւ ոչ թէ՝ պարկեշտների եւ պահողների:

Այլեւ պահք է անուանւում ոչ թէ միայն կերակուրներից [ժուժկալելը], այլեւ խուսափելն ամէն տեսակ մեղքերից, քանզի պահք է նաեւ բերանի լռութիւնը եւ ոչ առանց հարկի եւ մէկի հարցնելու խօսելը: Պահք է նաեւ անընչութիւնը, աղքատութիւնը եւ աւելորդութիւնները չհոգալը, այլ օրուայ կարիքները փնտրելը եւ նոյնն Աստծուց խնդրելը: Պահք է նաեւ խոնարհութեամբ տեղում նստելը եւ փուչ մէկի պէս ցոփութեամբ չշրջելը՝ թափառելով եւ դրամաշորթութեամբ: Պահք է նաեւ, առանց լուացուելու եւ օծանուելու, ողորմելի եւ գծուծ հագնուելը. պահք է նաեւ միայն խարազանագործ հանդերձներով մերկութեան եւ ցրտի կարիքները հոգալը: Պահք է նաեւ աչքերն արատութիւնից, լսելիքն անդէպ լսելուց եւ սիրտը պիղծ խորհուրդներից զերծ պահելը: Պահք է նաեւ չընկերանալը պատուի եւ իշխանութեան համար, չբարկանալը, չաղաղակելը, չնախանձելը, վրէժխնդիր չլինելը եւ չջանալը սեփական անձն ընկերոջ մօտ արդարացնել: Պահք է ագահութիւն չանելը, չմարդահաճոյանալը եւ հանդերձով սնապարծ

9 ապաղաս - թեթեւ լուծելի պահք

չլինելը: Պահք է նաեւ խոնարհութիւնը, հնազանդութիւնը եւ սուրբ սրտով բոլորին սիրելը: Պահք է նաեւ, երբ բնական քնի կարիքը միայն սպառի եւ ցանկութեան քուն չունենայ, այլ միայն առաջինով [գոհանայ] եւ ապա, վեր կենալով, գործի կամ աղօթի:

Եւ արդ, այս ամէնն է ճշմարիտ պահքը եւ առաւել է, քան կերակուրների կարճումը. այս եւ սրանց նման բաները պէտք է կարճել պահքի ժամանակ, եւ ապա ընդունելի կլինի նաեւ կերակուրների կարճումը: Նաեւ կերակուրների կարճումը միանման չէ, այլ՝ ըստ իւրաքանչիւրի կարողութեան. ոմանք՝ միօրեայ, ոմանք՝ երկօրեայ, ոմանք՝ երեքօրեայ եւ ոմանք եօթօրեայ [պահքով] պարկեշտութեամբ կատարում են՝ իւրաքանչիւրն ըստ իր անձի զօրութեան: Ոմանք՝ լոկ բանջարով, ոմանք էլ միայն ընդեղէնով բաւականացան. ոմանք՝ փոքր-ինչ հացով, ոմանք՝ աւելի շատով եւ անպաճոյճ թանիկը եւս յաւելեցին. եւ ոմանք եղան միայն գինեհատներ, ոմանք՝ թանահատներ, ոմանք՝ հացահատներ եւ փափուկ ու համեղ կերակուրները բացէիբաց հալածեցին եւ ուրացան, մի տեսակի կերակուրով եւ հոգեպահով միայն բաւականացան, որը միայն կենդանութիւնն է պահում եւ ոչ թէ մարմինն ու արիւնն աւելացնում, որոնք ախտերի ցանկութիւնն են գրգռում: Եւ այսպէս [ժուժկալեցին]՝ սակաւ ուտելով, սակաւ ըմպելով, սակաւ քնելով եւ անդադար աղօթելով: Նաեւ մանաւանդ պէտք է՝ պահքի օրերին ինչ արգելում ես որովայնիցդ, այն աղքատներին ընձեռել, քանզի դու պիտի քաղցես, եւ քաղցածը յագենայ, եւ քո մեղքը քաւուի: Այս է սուրբ եւ աստուածահաճ պահքը, եւ սրանով են ընդունելի լինում բոլոր վշտամբերութիւնների ճգնութիւնները, որ բժշկում են մեղքերով վիրաւորուածներին, սատանայից գերուածներին, կանգնեցնում անօրէնութեամբ կործանուածներին, յարութիւն տալիս ամբարշտութեամբ հիւանդացածներին, սրբում պղծութեամբ աղտեղուածներին, լուսաւորում մոլորութեամբ խաւարածներին, բոլոր յանցանքներից մաքրում ու արդարացնում պահողներին եւ մեծապայծառ լոյսով կանգնեցնում Աստուծոյ ահաւոր եւ լուսաւոր Բեմի առաջ. եւ [պահեցողները] Նրա հետ ժառանգում են անանց բարութեան վայելչութիւններն ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր: Նրան փառք յաւիտեանս:

Դ

ԸՆԴՈՒՆԵԼԻ ԵՒ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

Հաւաքելով մեր միտքը՝ ճանաչենք այս ճառի խօսքերը եւ այս երեւելիով ծանենք աներեւոյթը եւ գիտենանք, թէ ինչպիսի դողում եւ ահեղ արհաւիրքներ են [սպասում] յանցաւորներին, երբ մեղքերի ամօթով կանգնեն Դատաւորի առջեւ. ինչո՞ւ են այլայլւում եւ այլագունում նրանց դէմքերը, ինչո՞ւ են սոսկում եւ սարսափում, ինչո՞ւ են երկիւղով դողում Դատաւորի ահեղ դէմքից եւ գլխիկոր, հայեացքը խոնարհած եւ լեզուակապ, կանգնում [Նրա] առջեւ: Եւ եթէ յանդգնեն ինչ-որ բան աղաչել եւ աղերսել, ապա երկիւղած սրտով, անհամարձակ լեզուով հիւանդաձայն բարբառում են եւ բազում աղերսներով ցաւագին պաղատանքներ մատուցում: Արտասւում են, աղաչում, աղերսում, որպէսզի շարժեն Դատաւորին գթալու ու ողորմելու՝ յանցանքների պատուհասներից փրկուելու համար. նրանց միտքը չի զբօսնում ուրիշ տեղում, ոչ էլ նրանց աչքերը՝ այլուր, եւ լսելիքը՝ այլուր: Եւ երբ Դատաւորը բարբառում է նրանց հետ, չեն իշխում երեսները դարձնել կամ ծառայակիցներից մէկի հետ խօսել, այլ միայն Դատաւորին են նայում՝ մեծ պատկառանքով աղաչելով ու հայցելով յանցանքների տանջանքների թողութիւն: Իսկ որչա՞փ առաւել եւս մեզ համար յոյժ կարեւոր է մեծ պատկառանքով կանգնել ահաւոր [եւ] մեծ Դատաւորի առջեւ, ահեղ ահով ու սոսկալի դողութեամբ մտնել եւ կանգնել Աստուծոյ հայեացքի դիմաց եւ ցաւագին ողբերով ու յորդահոս արտասուքներով թախանձել ու թողութիւն խնդրել: Պէտք չէ այլուր՝ միտքը եւ այլուր խորհուրդներն առաքել, այլուր՝ լսելիքը եւ այլուր տեսանելիքը թափառեցնել, երբ մէկը կամենում է իր մեղքերի յանցանքների համար աղաչել եւ աղերսել Աստծուց, որպէսզի հեծեծանքներով ու հառաչանքներով հաշտեցնենք Տիրոջը եւ պաղատանքներին գթալու խոնարհեցնենք, որ աղօթքի աղերսների եւ գթագին սրտի՝ջերմութեան միջոցով քաւի մեր մեղքերը, սրբի մեր անօրէնութիւնները, փրկի ահեղ աղէտների տանջանքներից եւ յաւիտենական ամօթից: Քանզի շատերը բազում բարիքներ ստացան աղօթքի միջոցով եւ հաճելի եղան Աստծուն, որով մեղքերի թողութիւն եւ հոգիների փրկութիւն գտան. եւ մանաւանդ [նրանք], ովքեր արտասուքներով եւ տնանկներին գթալով աղօթեցին, ոչ միայն մեղքերի թողու-

թիւն են գտնում, այլեւ ստանում են մարմնի խնդրանքները եւ երկնքի բարիքները: Քանզի աղօթքն աղօթականի ձեռքերն են, եւ [նրանցով] բռնել է Աստուծոյ ոտքերից, եւ աղօթքն արագ խոնարհեցնում է՝ [նայելու] մաղթողի աղաչանքներին, քանզի Աստուած յոյժ կամենում եւ ախորժում է աղաչողի թախանձելը. «Խնդրեցէ՛ք, եւ կտրուի ձեզ, փնտրեցէ՛ք եւ կգտնէք» [Մատթ. է 7]:

Եւ արդ, բոլոր մեղքով ծանրացածներին, վշտերով նեղուածներին, թշնամուց վտանգուածներին եւ ցաւերով տառապածներին միշտ պէտք է ամէնօրեայ անդադար աղօթքներով եւ պաղատանքներով աղաչել, թախանձել եւ խնդրել, քանզի ովքեր միամիտ մտքով եւ անենեղ հաւատքով աղօթում են Աստծուն եւ խնդրում բարին, ստանում եմ բոլոր խնդրածները, ինչպէս ստացան մեր առաջին հայրերը: Իսկ եթէ մէկն ասի, թէ՝ խնդրեցի եւ չունեցայ, աղօթեցի եւ չստացայ, [ապա] դեռ թախանձագին չես խնդրել, ինչպէս այրի կինը՝ անիրաւ դատաւորից [տե՛ս Ղուկ. ԺԸ 1-6], եւ բարեկամը, որ գիշերով հայցում էր նկանակները [տե՛ս Ղուկ. ԺԱ 5], որ ոչ թէ բարեկամութեան, այլ թախանձանքի շնորհիւ ստացաւ: Նոյնպէս եւ Աննան ցաւագին հոգով, արտասուելով եւ աղօթքի թախանձով ստացաւ Սամուէլին [տե՛ս Ա Թագ. Ա]. Նոյնպէս էլ ժողովուրդը տրտմութեան հովտում լալիս էր առ Աստուած, եւ ջերմագութ աղօթքների եւ պաղատանքների շնորհիւ Աստուած տուեց նրանց Գեդէոնին եւ փրկեց Իսրայէլը [տե՛ս Դատ. Բ, Զ]. եւ Եզեկիայի արտասուագին աղօթքների շնորհիւ տասնհինգ տարով աւելացրեց կեանքը [տե՛ս Դ Թագ. Ի]: Եւ եթէ դու այսպիսի արտասուքներով եւ ողջ սրտով աղօթես Աստծուն եւ չերկմտես, ընդունում է քո խնդրուածքները:

Աղօթականին պէտք չեն շատ խօսքերի հիւսուածքներ. մաքսաւորը մի բարբառ արձակեց, եւ նրա աղօթքն ընդունելի եղաւ, եւ մեղքերի բազմաքանքար բեռները թեթեւացրեց [տե՛ս Ղուկ. ԺԸ]. Մովսէսն իր անշշունջ բերանով իսկ աղաղակեց եւ ծովը մինչեւ յատակ բաժանեց [տե՛ս Ելք ԺԴ 21]: Եւ եթէ դու ամբողջ սրտով աղերսես, մեղքերի ծովը մենակ կցամաքեցնես եւ կդադարեցնես բարկութեան ալիքները: Քանզի Աստծուց չստանալու պատճառն ամբողջ սրտով չթախանձելն ու չաղաչելն է կամ՝ եթէ աւելի վնասակար բան խնդրէք: Իսկ եթէ անդադար աղօթքներով հոգու համար օգտակարը խնդրէք, անհնար է Աստծուց չստանալ: Ահա Եղիայի աղօթքը երկինքը փակեց ու բացեց

[տե՛ս Գ Թագ. ԺԸ]. Դաւթի աղօթքը հրեշտակի սուրը կանգնեցրեց [տե՛ս Յովն. Բ]. Յովնանի աղօթքն իրեն կենդանի հանեց կէտի փորից [տե՛ս Յովն. Բ]. քանանացու աղօթքը հայածեց դեւին իր դստեր միջից [տե՛ս Մատթ. Ժե]. աղօթքը սրբեց պոռնիկներին, բժշկեց հիւանդներին, մաքրեց բորոտներին, լուսաւորեց կոյրերին եւ արդարացրեց մեղաւորներին:

Եւ արդ, այս բոլորն ընդունելի աղօթքի օրինակներ են, որին եթէ կամենաս, կարող ես նմանուել, հանել քեզ մեղքերի բանտից եւ արձակուել սատանայական կապանքներից: Միայն արտասուալից պաղատանքներո՛վ աղօթիր Աստծուն եւ կթեթեւանաս ամբարշտութեան ախտերից, կառողջացնես անօրէնութեան ցաւերը եւ կբժշկես յանցանքների հիւանդութիւնները: Միայն ամբողջ սրտո՛վ աղօթիր Աստծուն եւ կազատուես սատանայի որոգայթներից, կփրկուես չարաժանիք վիշապից եւ ողջանդամ կազատուես թունաւոր թշնամուց: Միայն անդադար աղօթքո՛վ թախանձիր Աստծուն, եւ կլուսաւորի մոլորութեան խաւարը եւ կցամաքեցնի մեղքերի պղծութեան աղտեղութիւններն ու ցանկութեան տիղմը: Քանզի երբ անբիծ հաւատքով ամբողջ սրտով աղօթես Աստծուն, կստանաս մեղքերի թողութիւն եւ յանցանքների քաւութիւն, կստանաս երկնքի արքայութիւնը եւ անբաւ բարիքները, կունենաս մարմնի առողջութիւն եւ հոգու փրկութիւն, կունենաս բարի օրեր եւ խաղաղ կեանք՝ [ազատ]՝ բոլոր զրպարտողներից: Նաեւ աղօթքը դադարեցնում է բռնաւորների բարկութեան ալիքները, դարձնում է Աստուծոյ բարկութեան ցասումը, աղօթքը հարստացնում է աղքատներին եւ զօրացնում տկարներին, աղօթքը բժշկում է հիւանդներին եւ հալածում մոլի ախտերը, աղօթքն ամուլին ծննդական է դարձնում եւ անզաւակներին՝ բազմազաւակ, փրկում է ծովի փոթորիկներից եւ ազատում գետի յորձանքներից, կերակրում է քաղցածներին եւ հագցնում մերկերին, արգելում է տարաժամ մահը եւ կատարում հաւատքով թախանձողների բոլոր խնդրուածքները:

Այս է ճշմարիտ աղօթքի զօրութիւնը նրան մերձենալ կամեցողների համար: Սա է անարիւն բանաւոր պատարագը, քանզի իւրաքանչիւր մէկի աղօթք Աստուծոյ պատարագ է. եւ եթէ սիրով չներես, չհաճես ընկերոջդ, քո աղօթքն ընդունելի պատարագ չի լինի, քանզի առ Աստուած չի բարձրանում: Որովհետեւ ով քէն ունենայ ընկերոջ նկատմամբ, անհնար է, որ նրա աղօթքները ելնեն առ Աստուած, իսկ

եթէ նա սրտի սիրով աղօթի Նրան, մինչեւ աղաղակելը, կասի, թէ՝ ա-
հա՛ հասել եմ: Քանզի անարատ աղօթքը՝ արտասուքներով եւ ողորմու-
թեամբ ուղեկցուող, աղօթքի ժամին աղօթականի առաջ բացում է
երկնքի դռները եւ ելնում դէպի Աստուծոյ լսելիքը, եթէ միայն ա-
ռանց թերանալու կանչեն Նրան:

Սատանան, գիտենալով այս ամէնը, թէ աղօթքով մեծամեծ զօրու-
թիւններ եւ անբաւ բարիքներ են կատարւում, գնում, մերձենում է
նրան, ով աղօթել է ցանկանում: Եւ նախ եւ առաջ մահճի մէջ է պատե-
բազմում նրա հետ՝ հեշտացնելով անկողինը, քաղցրացնելով քունը,
ծանրացնելով մարմինը. այս ու այն կողմ է շուռ տալիս, յօրանջեց-
նում եւ քորել տալիս: Եւ յետոյ, հազիւ վեր կենալով, բեկբեկուելով
գնում է եկեղեցի եւ ներս մտնում ու կանգնում Աստուծոյ առաջ: Եւ
սատանան այնտեղ էլ պատրուակում է միտքը՝ իր յանցանքների բազ-
մութիւնը չյիշելու, եւ չի հասկանում, որ կանգնած է Աստուծոյ ա-
ռաջ. ո՛չ օրհնութիւնն է լսում, ո՛չ փառաբանութիւնն է իմանում, ո՛չ
էլ ընթերցուածների վարդապետութիւնն է նրա սիրտը մտնում: Ո՛չ հե-
ծում է, ո՛չ էլ հառաչում մեղքերի անօրէնութիւնների համար, ո՛չ լա-
լիս է, ո՛չ էլ ողբում հոգու վէրքերի համար, ո՛չ աղաչում է, ո՛չ էլ ա-
ղերսում Աստծուց, ո՞չ էլ արտասուալից պաղատանքներով հաշտեց-
նում Տիրոջը՝ չխոստովանելով չարիքների բազմութիւնը եւ չյայտնե-
լով անօրէնութեան ծածկուած մթերումները, որպէսզի փրկուի ահեղ
տանջանքներից եւ աննշոյլ խաւարից: Փոխանակ լալու եւ պաղատե-
լու՝ մեծ աներկիւղութեամբ եւ արհամարհանքով կանգնած ենք Ա-
ստուծոյ առաջ՝ առանց պատկառանքի, ահ ու դողի, ինչպէս դատա-
պարտեալները դատաւորի առաջ կամ ինչպէս մեղանչած ծառաները,
ովքեր, իրենց տիրոջ ոտքերն [ընկած], աղերսում են եւ մեծ երկիւղով
ու պաղատանքներով աղաչում ու պաղատում: Նաեւ հեծեծանքներով,
հառաչանքներով եւ ողորմագին ողբերով չենք արտասուում մահա-
պարտների պէս, որոնց քարշ տալով տանում են չարչարանքների տե-
ղը, եւ չենք ընկնում Աստուծոյ առաջ խորգով, մոխրով եւ մեծ սու-
գով, որպէսզի փրկի մեզ բորբոքուած գեհենից եւ սաստիկ տանջանք-
ներից, որդերի չարութիւնից եւ աննշոյլ խաւարից:

Եւ արդ, ահով եւ խանդաղատագին աղերսներով չենք կանգնել
Աստուծոյ առաջ՝ աղաչելու եւ աղերսելու [հոգու] վէրքերի բժշկու-
թիւնը, այլ երբ պատրաստում ենք աղօթքի, պաղատանքների եւ մեղ-

քերի թողութիւն խնդրելու, լուացուում, օծանուում եւ պաճուճում ենք
հանդերձները, որպէս թէ պատրաստում ենք բոզանոց կամ թատերա-
խաղի [գնալ]: Եւ սնափառ պերճանքներով եւ մոլեկան հպարտու-
թեամբ կանգնում են Աստուծոյ առաջ, կանայք՝ բոզերի կերպարան-
քով, իսկ տղամարդիկ՝ բոզահոմանիների[10]: Եւ ցոփոգի մեղկութեամբ
իգանում են պիղծ ցանկութեամբ եւ ձանձրացած վաւաշում են նոխազ-
ների եւ իգամոլ ձիերի նման. եւ հէնց եկեղեցու մէջ եւ սրբութեան ա-
ռաջ պղծութիւն ու պոռնկութիւն են գործում եւ շնութիւն կատարում,
[որը] թէպէտ եւ մարմնով չեն գործում, սակայն մտքով են կատարում
նոյնը՝ ակնարկելով, արատալի հայեացքներով եւ կնկաձայն բարբա-
ռով, ինչպէս եւ Ինքը Տէրն է ասում, թէ ով ցանկութեամբ նայի, կա-
տարեալ շնացող է [տե՛ս Մատթ. Ե 28]: Այսպիսիներն արժանի են ի
վերուստ իջնող փայլակների, կայծակների, հրէ շանթերի եւ այրուե-
լու ու սատակուելու այնտեղ եւ որից յետոյ՝ յաւիտենական հրին,
սարսափելի խաւարին եւ աններելի տանջանքներին, քանզի աղօթքի
ժամին պղծութիւնների ցանկութեամբ են սիրտը լցնում:

Քանզի, ո՛վ թշուառական, եկար հեծելու եւ պաղատելու առ Ա-
ստուած, արտասուքներ հեղելու եւ աղերսագին ողբալու, հայցելու,
հառաչելու եւ թողութիւն խնդրելու եւ արդ, ա՞յդ է քո խնդրուածք-
ների կերպարանքը՝ ի ցոյց նայողների պաճուճուելդ, օծանուելդ եւ
լուացուելդ. ա՞յդ է մեղքերիդ թողութիւն խնդրելու եւ հայցելու կեր-
պարանքը՝ արատանալդ, շողոքորթելդ եւ պիղծ ցանկութեամբ ակնար-
կելդ. ա՞յդ է Տիրոջը քո չարիքների վրայ հաշտեցնելու կերպա-
րանքդ՝ կրքոտ ցանկութեամբ բոզահոմանիների գեղեցկութիւնդ եւ
հասակդ զննելը: Ինքդ քեզ սատանայացնում ես եւ աղաչում ես սա-
տանայից ազատուել, կամովին դիւահարւում ես եւ խնդրում ես
փրկուել դեւերից: Ինչպէ՞ս կարող ես Աստուծոյ առջեւ հեծել այդպի-
սի կերպարանքով կամ ինչպէ՞ս հառաչել այդպիսի խորհուրդներով:
Նաեւ համարձակուեցիր նոյնիսկ մտնել Աստուծոյ առաջ զազրելի
մտքով եւ սատանայական կերպարանքով, Աստուծոյ եկեղեցին պո-
ռընկանոց դարձնել եւ չես սոսկում ու դողում սուրբերի Սուրբից եւ
Աստուծոյ ահեղ դէմքից: Զգիտե՞ս, որ Սրտագէտը քննում է քո խոր-
հուրդները եւ գիտի ամէն ինչ. չե՞ս լսել, որ [Աստուած] դատելու է

10 բոզահոմանի - բոզի հոմանի, սեղեխ

մտածութիւնների համար եւ հաշիւ է պահանջելու աչքերի արատաւոր [նայուածքների] համար:

Եւ արդ, սթափուի՛ր եւ դէ՛ն գցիր քեղանից մտքի պաճուճանքների կեղծաւոր խաբէութիւնը, ապա՛ մտիր Աստուծոյ առաջ եւ լսի՛ր: Երբ մահապարտները մտնում են թագաւորի առաջ, չեն դիմում պաճուճանքների, այլ՝ աղերսների եւ պաղատանքների. երբ վիրաւորը մտնում է հիւանդանոց, այլեւայլ խորհուրդների կարիք չունի, այլ՝ միայն դեղ որոնել վէրքին եւ բժշկել ցաւերը: Նոյնպէս էլ մեղքերով վիրաւորին եւ անօրէնութիւններով ցաւագնեալին պաճուճանքներ եւ պիղծ խորհուրդներ պէտք չեն, երբ եկեղեցի է մտնում, ոչ էլ՝ օծանուել եւ մազերը հիւսել՝ աղօթքի ժամին Աստուծոյ առաջ պաղատելու համար, այլ [պէտք է] մարմինը նեղել եւ խորհուրդը մաքրել. եւ գծուծ տեսքով, փշրուած սրտով, խոնարհ անձով մտնել, կանգնել Աստուծոյ առաջ եւ բազում պաղատանքներով ողբալ եւ դառնապէս լալ, անդադար հեծութեամբ աղաչել ու աղերսել, բախել կուրծքը, տարածել ձեռքերը, արտասուք հոսեցնել, նեղուած սրտով խոստովանել չարիքները, անհամարձակ լեզուով, ամօթալից երեսով, ողբալի ձայնով եւ խանդաղատալի բարբառով հաշտեցնել Աստծուն եւ մեղքերի թողութիւն ստանալ:

Այս է այն աղօթքների եւ խնդրուածքների կերպարանքը, որոնց վրայ Տէրը խոնարհւում է եւ լսում, որով յանցանքներին [թողութիւն] է շնորհում, քաւում անօրէնութիւնները, որով մաքրւում եւ սրբւում ենք պղծութիւնների չար ախտերից եւ սատանայական խորհուրդներից, որով ստանում ենք արքայութիւնը եւ անմահ կեանքի փափկութիւնը: Իսկ մենք, այս ամէնը յիշելով, մեծ արհամարհանքով մտնում ենք Աստուծոյ մօտ, սակայն սատանայի հետ լինում, որ շփոթեցնելով խառնակում է մեր միտքը պէս-պէս մտքերով եւ ցրելով հոսեցնում մեր խորհուրդներն աշխարհի հոգսերի եւ զբօսանքների մէջ: Եւ, գերուած աղօթքի շահաւոր օգնութիւնից, զրաււում ենք չարի չար խորհուրդներով. [եկեղեցու] ներսում ծունկի ենք եկել աղօթելու համար, իսկ մեր միտքը շրջում է՝ բազում ցնորքներով թափառելով դրսում: Քանզի աղօթելիս խորհում ենք տան եւ անդաստանների հոգսերի մասին. աղօթելիս հաշւում ենք դաշտերի արդիւնքը եւ այգիների պտուղները, թէ քանի ման կլինի իմ հացը կամ քանի սափոր՝ գինին. նաեւ աղօթելիս մտաբերում ենք հօտերն ու նախիրները, թէ քանի արջառ

կամ քանի ոչխար կայ. այնտեղ նաեւ յիշում ենք վարձկանների գործն ու վարձը, թէ՝ ափսոս, որ այս [կամ այն] ելնում է իմ տանից: Այլեւ աղօթելիս յիշում ենք նոյնիսկ ընկերոջ դատաստանները եւ իսկոյն դատում Աստուծոյ առաջ. եւ մինչդեռ աղօթքի ենք կանգնած, տակաւին նաեւ ամբաստանութիւններ ենք խորհում եղբօր մասին եւ, եկեղեցուց դեռ չարձակուած, սկսում ենք ոսոխին ամբաստանել եւ որպէս լեղիով դառնացնում աղօթքի քաղցրութիւնը: Եւ այնպէս է սատանան մեր միտքը յափշտակում, որ աղօթելիս մինչեւ իսկ աղտեղի խորհուրդներն է յիշեցնում. աղօթելիս հաշւում ենք փողերի վաշխերը եւ տոկոսները, աղօթելիս յիշում ենք ընկերոջ նկատմամբ թշնամանքը եւ նախանձը: Եւ ոչ միայն դատապարտւում ենք այսպիսի չար խորհուրդներով, այլեւ վիրաւորւում ենք՝ աղօթելիս ունայնախօս լեզուով եւ շատախօսութեամբ վնասուելով. քանզի բազում հոգիների վնաս ենք հասցնում, որոնց մասին գերւում ենք մտքով եւ մերժուելով դուրս բերւում աղօթքից եւ փառատրութիւնից, [աղօթքը] վերածում ենք խաւարային խօսքի եւ կորստեան խորխորատներն իջեցնում [մեր հոգիները]: Այս ամէնն արժանի չէ՞ արդեօք [Աստուծոյ] ահեղ բարկութեանը եւ գեհենի բորբոքուած բոցին, բազում տանջանքների եւ աննշոյլ խաւարին, որովհետեւ այսչափ անօրէնութիւններ ենք գործում Աստուծոյ առաջ եւ, դատապարտութեամբ պատուհասուած, դուրս ելնում աղօթքից եւ ո՛չ թէ որպէս աղօթականներ պատււում, այլ որպէս հայհոյիչներ եւ արհամարհողներ՝ պարտաւորւում եւ պատժւում:

Իսկ եթէ աղօթքի եւ բարեգործութեան մէջ ենք մեղանչում, որչափ առաւել եւս պարտաւորւում ենք չար գործերի մէջ. եթէ [աղօթքի] նաւահանգստի ներսում ընկղմւում ենք չարի խորութիւնների մէջ, ի՞նչ պիտի անենք, երբ, դուրս ելնելով, մտնենք մեղքերի ծովի մէջ՝ հրապարակների, շուկաների, երդումների, հայհոյանքների, զրկանքների, սնափառութեան, բամբասանքների, նախանձի, բարկութեան, դրամաշորթութեան, արբեցողութեան, որկրամոլութեան, հպարտութեան [եւ առհասարակ] բոլոր ախտերի բազմութեան մէջ, որ, առաւել քան ծովածուփ ալեկոծութիւնները խեղդելով, ընկղմում է եւ խորասուզելով սատակեցնում բազմահոյլ յանցանքներով: Եւ արդ, ինչո՞վ կամ որո՞վ պիտի կարողանանք փրկուել մեր անթիւ եւ չարաչար գործերից եւ սատանայի բազում հնարներից, որ ոչ միայն դառը

չարիքներով չարչարում եւ սպանում է, այլեւ հնարներ է նիւթում սուրբ աղօթքի քաղցրութիւնը վերածելու դժնդակ լեղու դառնութեան. եւ չենք կարող որեւէ ճանապարհով զերծ մնալ չար իժից եւ դառը քարբից, եթէ ոչ՝ հանապազ պատրաստ լինելով սատանայի մեքենայութիւններին եւ զգուշանալով նրա աներեւոյթ նետերից:

Եւ եթէ միշտ յիշենք մեր վախճանի օրը՝ երկիւղելով այն վտանգից, կարող ենք փրկուել, երբ հոգին աններելի տագնապով մարմնից դուրս գալ պահանջուի եւ բռնուելով տարուի մթապատ խաւարային մէգի միջով. եւ եթէ միշտ յիշենք մեծ Բեմի արհաւիրքները եւ Դատաստանի ահաւոր Օրը, եթէ յարաժամ հոգանք այն ամօթի համար, որ լինելու է տիեզերական հրապարակի առաջ, [եթէ յիշենք] տանջանքների բազմութիւնը, թունաւոր որդերի դառնութիւնը, աղջամուղջի շօշափելի խաւարը, ժանտահոտ տարտարոսների խորութիւնները, գեհենի հրի կայծակների բորբոքումը, հնոցների բարձրաձայն գոչումները, հրեղէնների յորդահոս գետերի արհաւիրքները, մեղաւորների մշտատեւ այրումն ու խորովումը, ցաւերի ու աղէտների անտանելի կսկիծները:

Եթէ այս ամէնը միշտ մտաբերես, կարող ես զերծ մնալ սատանայի որոգայթներից, կարող ես երկիւղով կանգնել Աստուծոյ դիմաց, կարող ես սուրբ աղօթք մատուցել, կարող ես սգալ, լալ եւ դառնապէս ողբալ, կարող ես Դատաւորի դէմքը քաղցրացնել, ողորմելու եւ գթալու խոնարհեցնել եւ արժանանալ մեղքերի թողութեանը եւ յանցանքների քաւութեանը, լուսեղէն խորաններ ժառանգութեանը եւ փափագելի դրախտի փափկութեանը, յաւիտենական ուրախութիւնների հեշտութիւններին, անմահ կեանքի ցանկութիւններին եւ անբաւ բարիքների վայելչութիւններին Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու հետ. Նրան փառք, պատիւ եւ գոհութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵՒԱՑԻ

ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՄՔՆ ՈՒ ԵՐԿԻՒՂԸ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՄԲ ԾԱՆՈՒՑՈՂ ՍՈՒՐԲ ՀՈԳԵԿԻՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՈՍՐՈՎԻ ՅՈՅԺ ՕԳՏԱԿԱՐ ԵՒ ՀՈԳԵՇԱՀ ԽՐԱՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ

Բազում աղօթքներ են մեզ պէտք, բազում արտասուքներ, յաճախակի պաղատանքներ եւ մեծագոյն ճգնութեամբ հայցել Աստծուց, որպէսզի արժանի լինենք լուսաւոր միտք ստանալու, որով կբորբոքուեն մեր մէջ աղօթքի բաղձանքն ու Աստուածային Գրքի վերծանութիւնը*: Եւ մեր մտքի ճաշակելիքում կհամեղանայ այդ իմանալի ուտեստների խոհարարութիւնը, եւ կճանաչենք հոգեւոր երկունքի օգտակարութիւնն ու անսպառ բարիքների արդիւնարարութիւնը: Եւ սիրով կջամբենք հոգեւոր ստինքների խօսքի կաթը եւ յօժարութեամբ կզմայլուենք Սուրբ Հոգու պարգեւներով, որպէսզի չմնանք ինչպէս մի անմշակ եւ անարդիւն անդաստան, որ միշտ սերմանւում եւ սերմնակորոյս է լինում. զո՜ւր աշխատանք եւ ընդունա՜յն յոգնութիւն:

Այսպիսին են ցրուած միտք ու զբաղուած բարք [ունեցողները], որոնց մօտ սպառուել է աստուածային Կտակարանների ունկնդրութեան սէրը, որոնք շրջում են աշխարհում ինչպէս կոյրն ու ակնազուրկը: Քանզի կամ բնաւ չեն ընթերցում, եւ կամ ինչ որ ընթերցում են՝ ոչ թէ սիրով ու փափագով, այլ՝ որպէս հարկադիր մի բան եւ պարտքերի հատուցում: Քանզի ոչինչ [աւելի] ողորմելի չէ, քան Սուրբ Գրքի հանդէպ սիրոյ եւ աստուածային պատուիրանների վերծանութեան բաղձանքի սպառումը:

Աստուածսիրութիւնը Գրքից է ծնւում մարդու մէջ: Աղօթքների եւ արտասուքների, պահքի եւ ողորմութեան, խոնարհութեան ու սիրոյ հանդէպ սէրը Գրքից է ծագում մարդկանց մտքում: Արիութեան եւ համբերութեան, յուսոյ եւ երկիւղի եւ բոլոր բարեգործութիւնների պատճառը մեզանում Սուրբ Գիրքն է լինում՝ մաքուր մտքով կարդա-

* Վերծանութիւն- ընթերցողութիւն՝ ճանաչողաբար, մտառաբար, հոգեւոր ընթերցանութիւն

լիս: Նաեւ օրէնքների ու կանոնների եւ բոլոր բարեկարգութիւնների պատճառն ու հաստատութիւնն աշխարհում Գիրքն է:

Այլեւ մեռոնի, խաչի եւ եկեղեցու օրհնութիւնը, քահանայական ձեռնադրութիւնը, թագաւորական օծումը եւ քրիստոսական Պատարագի բաշխումն ըստ Սուրբ Գրքի ենք կատարում: Նաեւ քրիստոնէական հաւատքն ու մկրտութիւնը, օրինաւոր ամուսնութիւնը, մահն ու կեանքը, հանդերձեալ կեանքի ծանօթութիւնը, երկնքի արքայութեան [մասին] տեղեկութիւնն ու աստուածճանաչութիւնը եւ [ամէն ինչի] սկիզբն ու վախճանը մենք Գրքից ենք իմանում:

Եւ չկայ որեւէ հոգեւոր գործառնութիւն կամ բարեկարգութիւն, որ առանց Գրքի լինի: Ուստի եւ, ինչպէս Յովհաննն է ասում, քանի որ զրկուեցինք Հոգուց, պարտաւոր ենք միշտ Գրքով առաջնորդուել*: Եւ Տէրն [ասում է]. «Քննեցէ՛ք Գիրքը, քանզի նրանով էք համարում յաւիտենական կեանք ունենալ ձեր անձերում» [տե՛ս Յովհ. Ե 39]:

Եւ արդ, պատուենք Սուրբ Գիրքն ընթերցանութեամբ, որ պատճառն է մեր բոլոր բարեաւութիւնների, սիրով փափագենք Սուրբ Գրքի ուսումնասիրութիւնը եւ ընթերցելիս հոգանք երկու բանի մասին. նախ՝ որ հասկանանք ընթերցուածը, եւ երկրորդ՝ որ մտքում անմոռաց պահենք, մանաւանդ՝ գործով կատարենք եւ օրէնքը կատարո՛ղ լինենք, որպէսզի թեթեւամտութեամբ չզրկուենք մեծագոյն բարիքներից:

Առաջիններն** օրէնքով սահմանել են կանոնները*** միմեանց չմիացնել, այլ ամէն մի կանոնի վերջում ընթերցել Գիրքը մտքի լուսաւորութեան եւ բարի գործերի յորդորման համար: [Մինչդեռ]

* Ի նկատի ունի Յովհան Ոսկեբերանի հետեւեալ խօսքերը. «Պարտ եւ պատշաճ էր մեզ ոչ կարօտանալ ի նշանագիրս գրելոցն օգնականութեան, այլ այնպէս սրբական վարս ընծայեցուցանել, որպէսզի շնորհք Հոգւոյն փոխանակ ընդ Գրոց լինէին մերոց հոգւոցս ի պաշտպանութիւն. եւ զորօրինակ զգրեալսն մեկնաւ, նոյնպէս եւ զմեր սիրտս՝ Սուրբ Հոգւովն գրել: Իսկ արդ, քանզի յայնպիսի շնորհացն վրիպեցաք, օ՛ն առաւել մտադիր յերկրորդն դիմեսցուք» [տե՛ս «Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդիանուպօլսի եպիսկոպոսապետի յԱւետարանագիրն Մատթէոս», Վենետիկ, 1826, էջ 1]:

** Ի նկատի ունի Եկեղեցու առաջին հայրերին:

*** Խօսքը ժամակարգութեան տեքստերի մասին է:

մենք բոլոր սաղմոսները միացնում ենք եւ, եթէ վերջում փոքր-ինչ ընթերցում ենք, ապա՝ ձանձրութեամբ եւ կամ էլ բնաւ չենք ընթերցում:

Եւ այս՝ ի՞նչ պատճառով: Որովհետեւ սէրը սպառուեց, երկիւղը վերացաւ, զարտուղի ընթացանք, սիրեցինք աշխարհը եւ այն, ինչ աշխարհում է, ընթացանք ոչնչի ետեւից, կասեցուեցինք յոյսից եւ ցանկացանք միայն առօրէականը, քանզի մարմին դարձանք: Եւ սիրեցինք մարմնաւոր բաները եւ դրանց ետեւից գնացինք՝ հեշտութեան, զբաղմունքների, ծուլութեան, նախանձի եւ ատելութեան եւ բոլոր միւս չարիքների, փառքի, պատուի, իշխանասիրութեան եւ ագահութեան:

Այս պատճառով աղաչում եմ՝ զարթնե՛նք, զարթնե՛նք եւ առաւել եւս թօթափուե՛նք սատանայական մոլորութիւնների արբեցութիւնից: Մի կո՛ղմ նետենք հրէական քողը* եւ լուսափայլ մտքո՛վ նայենք առ Աստուած:

Զար է մեզքի երեւոյթը եւ առաւել չար է գործողի համար եւ այնքան առաւել, որ մինչեւ իսկ վերացնում է Աստուծոյ երկիւղը մեղանչողի սրտից եւ չի թողնում նայել Արարչի շնորհին, այլ զբաղեցնում է միայն երկրաւոր բաներով ու թմրեցնում խաւարի խորքերում: Մէկին՝ աշխարհական ցնորքների, միւսին՝ արծաթասիրութեան, մէկ ուրիշին՝ փառամոլութեան, մէկ այլին՝ նախանձի եւ ատելութեան մէջ: Եւ մեր կեանքի թշնամին մղում է մեզ չարիք գործել սիրով եւ յօժարութեամբ՝ իբրեւ թէ իրաւացիօրէն: Որպէսզի, չիմանալով սնոտի սիրոյ հետեւանքը, ոչ ոք չզղջայ եւ ապաշխարութեամբ չփրկուի, այլ, չարի պատրանքներով զբաղուելով, խորը գիշերուայ մէջ թմրածի պէս, տգիտաբար խաւարն իբրեւ լոյս սիրի:

Այս պատճառով մենք, ճանաչելով նենգաւորի խորամանկութիւնները, միշտ սիրով, ահ ու դողով փութանք առ Աստուած, դաստիարակենք մեր միտքն ու զգայութիւնները՝ միշտ բորբոքելով առ Աստուած գոհութեամբ եւ երկիւղով: Զգալի գիշերուայ նուազելու հետ փարատե՛նք մեզանից տխրատեսիլ մեղքերի գիշերը եւ առաւօտուայ լոյսի ծագելու հետ՝ սիրով ընդունենք մեր մէջ խաղաղութեան առաւօտ Քրիստոսին: Միշտ աղաչենք մարդասէր Աստծուն, որ վերստին վերա-

* Ակնարկում է փարիսեցիական ձեւական պաշտամունքը:

դարձնի մեզ գերութիւնից հարաւի առուների պէս [տե՛ս Սաղմ. ՃԻԵ 4] եւ բորբոքի մեր հոգիներում իր սիրոյ հուրը:

Միշտ ողորմութի՛ւն հայցենք ամենակալ եւ ամէնառատ Տիրոջից՝ ոչ միայն խօսքով յարաժամ խնդրելով, այլեւ ճիգերով եւ գործերով մեզ միշտ արժանի դարձնենք Աստուծոյ ողորմութեանը: «Քո մեղքերը ողորմութեամբ կքաւես եւ քո անօրէնութիւնները՝ աղքատներին օգնելով» [տե՛ս Դան. Դ 24] եւ թէ՝ «Ինչ չափով որ չափում էք՝ [նոյնով] կչափուէք» [տե՛ս Մատթ. Է 2, Մարկ. Դ 24, Ղուկ. Զ 38] եւ թէ՝ «Ողորմութի՛ւն տուէք, եւ ձեր ամէն ինչը սուրբ է» [տե՛ս Առակ. ԺԴ 21] եւ՝ «Ինչ որ անէք փոքր եղբայրներից [մէկին], Ինձ եմ համարում» [տե՛ս Մատթ. Ե 40]:

Ուստի եւ անհրաժեշտ է ոչ միայն ողորմութիւն գործել, այլեւ մեծ փափագով խնդրել Աստծուց, որ բացի մեր միտքը՝ առատապէս յորդորուելու ողորմածութեան սիրով, որպէսզի պատշաճ ժամին արժանի լինենք փոխարէնը ստանալու երկնքի արքայութիւնում: Մանաւանդ միշտ գոհանա՛նք մեր բարերար Տիրոջից եւ Նրա ամէնառատ բարձրագոյն շնորհներից: Ցարաժամ Նրան աղօթե՛նք սիրով եւ փափագով, անլռելի ձայնով օրհնե՛նք մարդասէր Աստուծոյ՝ Իր արարածների հանդէպ մեծագոյն շնորհները:

Խաղաղութիւն հաստատենք ե՛ւ մեր անձերում, ե՛ւ Աստուծոյ, ե՛ւ մարդկանց հանդէպ: Քանի որ մեր մեղքերը մեզ թշնամացնում են Աստուծոյ հետ, ուրեմն պարզ է, որ բարի գործերով խաղաղութիւն ենք հաստատում Նրա հետ: Քանզի նախ Նա՛ խաղաղութիւն հաստատեց Իր խաչի արեամբ եւ այժմ, ըստ Իր կատարածի, մեզանից նոյնն է պահանջում: Իսկ ինչպէ՞ս է այս լինում. երբ սիրենք միմեանց, երբ տանենք միմեանց բեռները, երբ ընկերոջ կարիքները [սեփական] անձինը համարենք, երբ լաց լինենք լացողների հետ եւ խնդացողների հետ զուարճանանք, երբ վերացնենք [մեր] միջից թշնամութիւնը եւ լինենք Աստուծոյ որդիներ եւ Քրիստոսի նման խաղաղարար: Երբ համարձակ ասենք. «Ես եղբայրն եմ, եւ եղբայրը՝ ես»՝ թէ՛ վշտի եւ թէ՛ ուրախութեան մէջ: Երբ [մեր] ձեռքերը ողորմութեան կարկառենք, երբ ստէպ աղօթքի կանգնենք սուրբ սրտով եւ խոնարհ հոգով՝ երբէք չձանձրանալով կամ աղօթքի ծառայութիւնը հեղգութեամբ եւ հարկադրաբար կատարելով, այլ՝ սիրով եւ յօժարամտութեամբ, որպէսզի Տէրը չբարկանայ, եւ վարձքի փոխարէն՝ դատապարտութիւն կրենք:

Իսկ թէ ինչու է Աստուած բարկանում փառաբանութեան պաշտամունքի մէջ հեղգացողների վրայ, յայտնի է բանաբկուի [օրինակով]: Քանզի երբ բոլորի միջից միայն նա դադարեց օրհնաբանել Արարչին, Աստուած բարկացաւ նրա վրայ եւ գցեց նրան [իր] դասի կայանից: Եւ նա, որ [իր] պայծառութեան համար Արուսեակ էր անուանւում, ամբարտաւանութեան պատճառով խաւարելով, նսեմացաւ եւ հրեշտակի փոխարէն Սատանայ անունը ժառանգեց: Նաեւ Ահարոնի որդիները, երբ ծուլացան խորանի ծառայութեան մէջ եւ անպատշաճ ժամի օտար հուր մատուցեցին սեղանին, ողջ-ողջ այրուեցին [տե՛ս Ղեւ. Ժ 1-3]:

Այս պատճառով պէտք է զգուշանալ, քանզի եթէ Աստուած բուն ոստը չխնայեց, այլ անմիջապէս դատապարտեց, պտուղաստուածներիս ինչպէ՞ս կխնայի, եթէ նոյն ախտով ախտանանք: Եւ դու այժմ, Աստուծոյ ներողամտութեանը նայելով, [ասածս] մի՛ արհամարհիր՝ նրանց պէս նոյն պահին չպատժուելու պատճառով կարծելով, թէ Աստուած միշտ ներում է, քանզի այն ամէնը մեզ խրատելու համար գրուեց, որպէսզի զգաստանանք: Ապա թէ ոչ՝ [յիշի՛ր, որ] Օր է կարգել, երբ դատելու է մարդկանց որդիների գաղտնի [գործերը]:

Բայց աղօթքներում չճառենք ունայն խօսքերով, ինչպէս արձագանքների սոսկ հնչումը, կամ կապիկների պէս՝ ըստ սովորութեան միշտ բերանով պաղաջելով, այլ հոգով եւ մտքով Աստուծոյ կամքին համաձա՛յն պատրաստենք մեզ աղօթքի ժամին: Քանզի նա, ով աղօթքի վայրում մարմնով լինի, իսկ մտքով անկապ անասունների պէս դրսում թափառի, ոչ միայն աղօթքից վարձք չի ստանայ, այլեւ կդատապարտուի անզգոյշ աղօթքի համար:

Քանզի եթէ որեւէ մէկը, մարմնաւոր թագաւորի առաջ աղաչանքներ մատուցելիս, մեծապէս հոգ է տանում իր ներսում եւ առաւել ձգտում ըստ նրա հաճութեան խօսել եւ չսխալուել, ապա ինչպէ՞ս կարող է մէկը ներում ստանալ, երբ ամենքի Արարչի եւ Տիրոջ առջեւ աղօթք մատուցի միայն լեզուով բարբառելով եւ մտքով խօսքերին չհետեւելով, անշունչների եւ անբանների պէս անբանաբար աղօթելով, որ սոսկ անզգայական ձայնի շշնջիւն է եւ ուրիշ ոչինչ: Եւ կամ՝ դարձեալ [նրանք], ովքեր տարտամութեամբ եւ կցկտուր բարբառով են խօսքերն արտաբերում ի դատապարտութիւն իրենց անձերի եւ ոչ թէ յօգուտ լսողների՝ պատերազմի եւ չարախօսութեան պատճառ լինելով:

Եւ ի՞նչ ասենք [նրանց մասին], ովքեր դատարկաբանելու եւ շատախօսելու համար են [եկեղեցի] յաճախում եւ, արտասուաթոր պաղատանքների եւ հաճոյական աղօթքների փոխարէն, որպէս թէ թատրոնում, կաքաւների պէս կարկաչում են ու չեն զարհուրում:

Քանզի եթէ առայժմ հուրը, երկնքից ընկնելով, արագապէս չի այրում, արդեօ՞ք վախճանի Օրը հատուցում չի լինի, երբ ոչ միայն գործերի քննութիւն է լինելու, այլեւ՝ խօսքերի ու խորհուրդների: Եւ գոնեհիկ դատարկաբանութեան ու ծաղրածութեան համար ստուգապէս պատիժ եւ պատուհաս է [պատրաստուած]:

Ապա ովքեր աղօթքի վայրն անխտիր այսպէս են յաճախում, ի՞նչ պատասխան պիտի տան Աստծուն: Քանզի ուր պէտք էր մեղքերը քաւել եւ հաճոյական աղօթքով Աստծուն հաշտեցնել, այնտեղ շատախօսութեամբ եւ ծաղրածութեամբ բարկացնում են Աստծուն եւ դատապարտուած դուրս գալիս աղօթարանից՝ վարձք ստանալու եւ հոգեւոր շնորհներ շահելու փոխարէն:

Էլ չեմ ասում աղօթքի ժամին հակառակութեամբ եւ նախանձով, նաեւ կեղծաւորութեամբ ու փառասիրութեամբ միմեանց հանդէպ վարուելու մասին, կամ չարութեամբ լռելու, կամ երգերը նախանձով եղանակելու: Աստուած աղօթքների այդպիսի պտուղները չի ընդունում, այլ առաւել զայրանում է եւ դատապարտում:

Պէտք է եւ հետեւեալը միշտ մտաբերել. ասում են՝ հայրերից մէկը վախճանուելիս ուրախութեամբ էր գնում Տիրոջ մօտ: Եւ երբ եղբայրները հարցրեցին իր խնդութեան պատճառի մասին, ասաց. «Ոչ մի այլ բարի բան չեմ արել, բացի նրանից, որ աղօթքի ժամին միտքս թոյլ չեմ տուել դուրս գալ աղօթարանից», որից եղբայրներն յոյժ օգտուեցին ու գովեցին նրան: Եւ մէկ այլ ծերի հարցրեցին, թէ արժէ՞ աղօթքի ժամին որեւէ խօսք ասել, եւ նա ասաց. «Եթէ լինի այնպիսի մի խօսք, որ սաղմոսի տան արժէքն ունենայ, թող խօսեն, իսկ եթէ՝ ոչ, թող լռութեամբ աղօթեն»:

Եւ մեծն Յովհան Ոսկեբերանի մասին գրուած է, թէ աղօթքի ժամին անհնար էր, որ որեւէ մէկը խօսէր նրա հետ: Եւ այս ամէնը մեզ որպէս խրատ եւ վարդապետութիւն գրուեց առաջինների կողմից, որպէսզի իրենց յաջորդողներս զգուշանանք եւ առաջադիմենք առաքինութեան մէջ: Ուստի աղաչում եմ բոլորին աղօթքի ժամին առաւել

լռութիւն ձեռք բերել եւ միտքն ու զգայարաններն Աստուծոյ երկիւղով պարսպել՝ իւրաքանչիւր ոք ինքն իր հետ եւ Աստուծոյ հետ խօսելով եւ սիրով ու խոնարհութեամբ միմեանց հետ վարուելով եւ, եթէ հնարաւոր է, բոլորի հետ, ըստ առաքեալի, խաղաղութեամբ ընթանալ [տե՛ս Հռոմ. ԺԲ 18, Եբր. ԺԲ 14]:

Ամէնքս, լինելով Քրիստոսի անդամները, սիրով միաւորուենք մեր Գլխին: Եւ քանզի քաջ Հովիւը եկաւ՝ փրկելու մեր մոլորուած բնութիւնը, եւ հրաւիրեց մեզ դէպի Իր արքայութիւնն ու փառքը, լսե՞նք քաջ Հովուի ձայնը եւ առաքինութիւնների գործերով միշտ պատրաստենք մեզ լինել Նրա հօտից: Որպէսզի վախճանի Օրը չլսենք, թէ՝ «Ձեմ ճանաչում ձեզ, հեռո՛ւ կացէք Ինձանից բոլոր անիրաւութեան մշակներդ» [տե՛ս Մատթ. Է 23]: Մանաւանդ որ Տէրը մշտապէս բարբառում է հովիւների հետ՝ ասելով Պետրոսին. «Եթէ սիրում ես Ինձ, արածեցրո՛ւ Իմ ոչխարներին» [տե՛ս Յովհ. ԻԱ 15-18]:

Եւ այն, որ հովիւներն ընտանիներին են արածեցնում ու խնամարկում եւ ո՛չ թէ վայրիներին, ցոյց է տալիս, որ նա, ով անձամբ օտարացնում է իրեն Աստուծոյ պատուիրաններից եւ չար գործերով հեռանում Նրա սիրուց, հեռու է քաջ Հովուի խնամքից: Եւ ի՞նչ վտանգաւոր պատուհաս ասես չի կրի Նրա խնամքից հեռացողը: [Մինչդեռ] Նա հանապազ կանչում, միշտ աղաչում եւ յարաժամ ձայնում է. «Եկէ՛ք Ինձ մօտ բոլոր յոգնածներդ եւ ծանր մեղքերով բեռնաւորուածներդ, եւ ես կհանգստացնեմ ձեզ [Իմ] ողորմութեամբ՝ խոստովանութեան եւ ապաշխարութեան միջոցով» [տե՛ս Մատթ. ԺԱ 28]:

Նաեւ մարգարէի միջոցով է պատուիրում. «Ասա՛ դու քո մեղքերը, որպէսզի արդարացուես եւ Իմ սիրելին լինես» [տե՛ս Եսայի ԽԳ 26]: Իսկ այլ մէկն ասաց. «Ո՛վ մարդ, ի՞նչ է խնդրում քեզանից քո Տէր Աստուած՝ Իրենից երկնչելուց եւ Իր երեսի մեծութիւնից սարսափելուց բացի», Որից քերովբէները թեւաքօղում են, եւ սերովբէները սարսելով ամփոփում իրենց մէջ, եւ տէրութիւններն ու պետութիւնները ծառայում ահ ու դողով: Այս պատճառով, թէեւ ոչ մի բարիք ստացած չլինէինք Նրանից, պէտք էր սարսել ու դողալ եւ ահ ու երկիւղով միշտ ծառայել Նրան:

Իսկ ինչպիսի՛ պատասխանատուութիւն պիտի կրենք, երբ Նրանից բազում երախտիքների ու մեծագոյն սիրոյ արժանանալով եւ անթիւ բարիքներ վայելելով՝ խոտորնակ եւ զարտուղի ենք գնում Նրա պա-

տուիրաններից: Աստուած պարգեւեց մեզ բոլոր բարիքները եւ արժանացրեց բոլոր մեծագոյն շնորհներին եւ այնչափ առաւել, որ արարածներից եւ ոչ մէկին նոյնը չարեց՝ ո՛չ երկնաւորներին եւ ո՛չ էլ երկրաւորներին: Մանաւանդ որ պատուիրանազանցութիւնից յետոյ էլ չանտեսեց, այլ տուեց Օրէնքն ու Մարգարէները՝ հրաւիրելով ճշմարտութեան գիտութեան:

[Եւ որպէս] ամենայն բարերարութեան գլուխգործոց՝ բարի եւ գթած երկնաւոր Հայրը, մեր՝ կորսուածներիս փրկութեան համար, առաքեց Իր միածին Որդուն: Եւ անմահ Թագաւորը, գալով, մեր փրկութեան համար խաչով եւ արեամբ Իր մարմնով մահը ճաշակեց եւ մեղքով մեռածներիս կենդանացրեց: Սերովբէների համար անտեսանելին մեր կերպարանքով տեսնուեց խաչի վրայ, եւ անշօշափելի բնութիւնը շօշափուեց մարդկանց ձեռքով, դիապատուեց եւ Իր աստուածային փրկագործութեամբ բժշկեց մեր վէրքերը: Անապական մարմնով գերեզմանում դրուեց կորստեան վիհն ընկածներիս համար, աստուածաբար յարութիւն առաւ եւ մեզ մեղքերի անկումից յարութիւն տուեց եւ մշտնջենաւոր անմահութեան հրաւիրեց:

Եւ քանզի հանապազամեռ մեղքերի մէջ ենք, որպէս կենդանութեան մշտնջենաւոր դեղ պարգեւեց Իր Մարմնի եւ Արեան օր ըստ օրէ ճաշակումը: Իսկ դու հեղգում եւ յապաղում ես հաղորդ լինելու Քրիստոսին Իր Մարմնի հաղորդութեամբ՝ մեղքերի առիթ պատճառելով, եւ մարմնի դոյզն-ինչ հեշտութեամբ ծուլանում ես՝ հեռանալով Քրիստոսից: Զգիտե՞ս, որ ինչ չափով յապաղում ենք մարմնի հեշտութեան մէջ, օտարանում ենք Աստծուց՝ չգիտակցելով մեր հոգիների կործանումը:

Այս արեգակն իր զգալի ճառագայթներով մաքրում է աղտեղութիւնը, ցամաքեցնում ժահահոտութիւնը եւ լուսաւորում մթնած օդը: Եւ դու Տիրոջ Մարմնին եւ Արեանը, որ իմանալի արդար Արեգակի ճառագայթներն են, չե՞ս հաւատում, թէ կարո՞ղ է քեզ մաքրել: Ջուրը լուանում է կեղտը եւ սրբում. հուրը բաժանում է ժանգը երկաթից ու վերստին նորոգում, իսկ դու չե՞ս վստահում, թէ Աստուծոյ Որդու Մարմինն ու Արիւնը կարող է նորոգել քեզ մեղքերի հնութիւնից: Ասում ես՝ մեղաւոր եմ, իսկ ե՞րբ պիտի արդարացուես: Առանց խոստովանութեան մեղքը չի քաււում, եւ առանց ապաշխարութեան ոչ ոք հաղորդութեան արժանի չի լինում: Այս պատճառո՛վ եմ մանաւանդ ասում՝ հաղորդուել, որպէսզի զղջաս, խոստովանուես եւ ստես մեղքերը, որպէսզի ապաշխարես եւ քաւես յանցանքները, որպէսզի մարմնդ Քրիստոսից առաւել չսիրես եւ յուսահատութեամբ չկորչես. «Ասա՛ դու քո մեղքերը, որպէսզի արդարացուես» [տե՛ս Եսայի ԽԳ 26], եւ ո՛չ թէ կփրկուես հեշտութեանդ մէջ յապաղելով: Ծուլութեամբ եւ հեղգութեամբ մեղքերը չե՞ն քաււում, եւ յուսահատութեամբ թողութիւն չի՛ լինում, եւ ով որ անարժանաբար է հաղորդւում, [այն] դատապարտութիւն է իր անձի համար եւ ո՛չ թէ փրկութիւն: Եւ երբ որեւէ մէկն իրեն հաղորդութեան արժանի է կարծում, այնժամ առաւել անարժան է: Սակայն որքան կարողութիւն կայ, պէտք է ջանալ եւ անձը մաքրել մեղքերից եւ զղջմամբ ու յոյսով հաղորդուել, որպէսզի դիւրորսալի չլինենք սատանայի [համար]:

Քանզի որքան որեւէ մէկն ուշանում է հաղորդութիւնից, դեւերն ուրախանում են, որովհետեւ նրանց համար դիւրորսալի է փրկական խորհուրդից հեռացածը: Իսկ երբ որեւէ մէկը հաղորդւում է, զարհուրում են ու խոյս տալիս եւ առաւել հեռու փախչում, որովհետեւ նրանում իրենց տեղ չեն գտնում: Քանզի նա, ով Քրիստոսի տաճար է լինում, նրանում դեւերին մեհեան չի՛ յաջողւում ստեղծել:

Ուստի աղաչում եմ ամենքին եւ հայցում, որ յորդորուեն Աստուծոյ երկիւղի ու սիրոյ փափագով, որպէսզի ոչ ոք բնաւ անարժանաբար չհաղորդուի եւ չբարկացնի Աստծուն եւ կամ յուսահատութեամբ չհեռանայ եւ կորստեան չմատնուի, այլ այս երկու ծայրայեղութիւններից էլ խուսափի՝ թէ՛ անառակաբար խիզախելուց եւ թէ՛ հեղգութեամբ եւ յուսահատութեամբ յապաղելուց ու հեռանալուց:

Եւ այս ամէնն անուսումնութիւնից եւ անառաջնորդութիւնից է լինում [այնտեղ], ուր հօտի հովիւները հոգ չեն տանում, որի պատճառով Քրիստոսի հօտը շրջում է անտերունչ եւ մոլորական՝ թափուր եւ ունայն հոգեւոր մշակութիւնից: Եւ տգիտութիւն ու ամայութիւն է տարածւում աշխարհում, եւ ամէն ոք ընթանում է ըստ [իր] քմահաճութեան եւ կամակոր վարքի:

Տէրն ասաց Պետրոսին եւ նրա միջոցով, ինչպէս ասացինք՝ բոլոր առաջնորդներին. «Արածեցրո՛ւ Իմ ոչխարներին, որոնց համար հեղեցի Իմ Արիւնը եւ փրկեցի եւ ձեզ յանձնարարեցի բարւոք հովուել, որպէսզի ոչ ոք չկորչի» [տե՛ս Յովհ. ԻԱ 15-18]: Եւ ասում է մարգարէի միջոցով. «Մարդո՛ւ որդի, վերակացու կարգեցի քեզ Իմ ժողովրդի

վրայ, եթէ տեսնես սուրն անօրէնին մերձեցած եւ չյանդիմանես նրան, անօրէնը կմեռնի իր անօրէնութեան մէջ, իսկ նրա արիւնը քեզանից կպահանջեմ» [տե՛ս Եզեկ. Գ 17-18]:

Լսէ՛ք, հովիւնե՛ր, լսէ՛ք եւ երկնչէ՛ք եւ առաւե՛լ զարհուրէք եւ ողբացէ՛ք ահ ու դողով: Քանզի հովիւ կոչուեցիք ոչ թէ որպէսզի ձեր անձերն արածեցնէք եւ ջորիներով ու աչքի ընկնող երիվարներով շրջէք աշխարհում եւ մարմնական փառքով ճոխանաք ու յիմարաբար մեղկանաք զգեստներով, այլ՝ որպէսզի Տիրոջ ժողովրդին հովուէք, բանաւոր խաշներն արածեցնէք, բանական գառներին խնամէք եւ այծերին ոչխարների փոխարկէք, որպէսզի միշտ խօսքով վարդապետէք եւ նոյնը գործով կատարէք՝ [սեփական] անձի մաքրութեամբ բոլոր բարիքների օրինակը տալով հօտին եւ բարի նախանձով յորդորելով բովորին: Քանզի ում շատ գիտութիւն տրուեց, նրանից շատ առաքինութիւններ կպահանջուեն: Եւ ում տրուեց բանական հօտի մեծ վերակացութիւն, նրանից առաւել եւս կպահանջուի ուղիղ վարք եւ ժողովրդի խնամակալութիւն:

Իսկ դուք, այս բարձրագոյն շնորհը թողնելով, հետեւում էք անպիտան գործերի եւ մարմնական հոգսերի էք տրւում, անբան կենդանիների էք խնամում եւ զգալի հողը կակղեցնում: Եւ ինչպէ՞ս թողութիւն ու ներում կստանաք կամ ի՞նչ պատասխանի արժանի կհամարէք ձեր անձերը՝ միշտ փառքի եւ հեշտութիւնների մասին հոգալով: Երկու դահեկան աւանդեց ձեզ մեր Տէր Քրիստոս՝ Հին եւ Նոր Կտակարանները, որպէսզի նրանցով դարմանէք աւազակների ձեռքն ընկած եւ կիսամահ եղած բանական ոչխարներին:

Իսկ դուք, այս աստուածային առաջարկութիւնը թողնելով, ընթանում էք ոչնչի ետեւից՝ կաթ ուտելով, բուրդ հագնելով, եւ վիրաւորուածին բժշկութեան արժանի չէք համարում, այլ կեղեքում էք՝ կրկնակի կսկիծ պատճառելով: Եւ, որ պարտաւոր էիք բարի օրինակ լինել, գայթակղութեան պատճառ էք լինում եւ կործանում ձեր անձերն ու ձեր ձեռքի տակ գտնուողներին: Եւ ով անհոգ է իր անձի կորստեան հանդէպ, ինչպէ՞ս կարող է հոգ տանել այլոց փրկութեան համար:

Ո՛վ [դուք], Քրիստոսի հօտի հովիւնե՛ր եւ խնամակալներ, չէ՞ք լսել Սողոմոնի ասածը. «Հզօրները զօրաւոր Դատաստան կընդունեն,- ասում է,- իսկ խառնիճաղանճը ներելի ողորմութեանը կարժանանայ»

[տե՛ս Իմաստ. Զ 7]: Քանզի առաջնորդներն ու վերակացուները ոչ միայն իրենց անձերի, այլեւ իրենց հնազանդուողների սխալների համար պատուհասների պատիժներ պիտի հատուցեն: Նաեւ՝ այն [խախտման համար], որ բոլոր սխալներից մեծ է եւ երկու կողմից էլ առաւել դատապարտութեան արժանի. քանզի շտապելով ձեռնադրում էք տգէտներին եւ նրանց, ում վարքուբարքին անտեղեակ էք՝ առաքելի [խօսքին] հակառակ զինելով, եւ կցորդ էք լինում այլոց մեղքերին: Էլ չեմ ասում սիմոնեան ախտով ախտանալու մասին, քանզի, նրանց վարքին տեղեակ թէ անտեղեակ լինելով, երկուսով պատժւում էք եւ երկու կողմով դատապարտւում: «Խոտան կհամարուեն,- ասում է,- արծաթով ընտրուածները» [տե՛ս Սաղմ. ԿԷ 30], եւ ովքեր ագահութեան կամ փառքի համար կաշառք տան, կդատուեն. թէ՛ տուողները եւ թէ՛ վերցնողները:

Եթէ, մամոնայ ստանալով, ձեռնադրեցիր մէկին՝ յուդայեան եւ սիմոնեան ախտով ախտացար ի դատապարտութիւն անձանց, քանզի, Աստուծոյ պարգեւը վաճառքի տակ դնելով, արժանիներին զրկեցիք շնորհներից եւ անարժաններին պատուեցիք: Եւ դարձեալ՝ թէեւ ոչինչ չվերցրեցիր, բայց ձեռնադրեցիր անարժան մէկին, պատուհասի կրկնակի պատիժներ կլինեն, քանզի թէեւ ագահութեան պատճառով չխաբուեցիր, սակայն անմտօրէն շտապեցիր՝ շնորհներն անարժաններին տալով:

Զգուշացէ՛ք, ուրեմն, հովիւնե՛ր, զգաստացէ՛ք եւ աչալո՛ւրջ եղէք ձեր գործում՝ միշտ ձգտելով աստուածասէր եւ անարծաթասէր լինել: Քանզի, ինչպէս ասում է իմաստունը, «չեն օգնի ունեցուածքները մեծ Ատեանի առաջ», այլ միայն արդարակշիռ լինելն է փրկութիւն շնորհում յաւիտենական մահուանից:

Զարթնէ՛ք, զարթնէ՛ք եւ առաւել ե՛ւս զգաստացէք, որպէսզի չլսէք Տիրոջից այն սոսկալի խօսքը, թէ՝ «Ահաւասիկ ես հովիւներիդ վրայ եմ եւ դատաստանով կդատեմ ձեզ» [տե՛ս Եզեկ. Լ Դ 10, Երեմ. Ի Գ 2, Զաք. Ժ 3]: Եւ թէ՝ «Որթնած փայտն ուրիշ բանի պիտանի չէ, բացի հրում այրուելուց» [տե՛ս Առակ ԺԲ 4, Իե 20, Ամբակ. Բ 11]: Եւ թէ՝ «Երբ աղն անհամանայ, դուրս կնետուի եւ ոտնակոխ կարուի ամենքի կողմից» [տե՛ս Մատթ. Ե 13]: Եւ թէ՝ «Անօրինութիւնը ծերերից դուրս եկաւ, եւ թիւրութիւնը՝ քահանաներից» [տե՛ս Բ Մնաց. ԼԶ 11, Նէեմ. Թ 34, Եսայի Ի Զ 7]: Եւ դարձեալ՝ «Առաջնորդները միաբա-

նուեցին չարիքի մէջ ընդդէմ Տիրոջ եւ Նրա Օծեալի, եւ այդ պատճառով Տէրը կբարկանայ, եւ կկորչէք յաւիտենական յոյսից» [տե՛ս Սաղմ. Բ 2-4]: Քանզի եթէ միայն այս կեանքի վրայ է մէկը յոյս դնում, ողորմելի եւ անյոյս կորչում է, ինչպէս առաքեալն է ասում, եւ լսում է Տիրոջից, թէ՝ «Ձեր բարիքները ստացաք անցաւոր կեանքով որպէս լրումն ձեր կամքի» [տե՛ս Ղուկ. ԺԶ 25]: Սրանք, արդարեւ, վայի են արժանի՝ ըստ Տիրոջ խօսքի:

Սակայն վա՛յ ինձ, որ եղկելի եմ եւ ես, քանզի անձամբ դատապարտեցի ինձ՝ այլոց խրատելով, իսկ ինձ՝ ոչ: Այլոց նախատելով՝ ես մշտապէս նոյնն եմ անում: Ուրիշի աչքի շիւղը տեսայ, իսկ իմ առաւել մեծ գերանը չնշմարեցի, դատեցի այլոց, իսկ իմ անձը բարու մէջ երբէք չկրթեցի:

Բայց թէպէտ եւ իրօք առաւել եղկելի ենք, քան ամէն ոք, այսուհանդերձ, որքան որ կարողութիւն ունենք, պարտաւոր ենք խօսքի արծաթը տալ սեղանաւորին, որպէսզի չդատուենք որպէս քանքարը թաքցնող, քանզի ժամը մերձեցել է, եւ Դատաստանը Տիրոջ տանից է սկսուելու: Այսինքն՝ երէցներից կսկսուի՝ առաջնորդներից, վերակացուներից, գիտուններից եւ իմաստուններից, թագաւորներից, դատաւորներից եւ խօսքով ու գործերով մեծամեծներից:

Ուստի աղաչում եմ բոլորին եւ, ընդհակառակը, պաղատում՝ Տիրո՛ջը դառնանք ամենայն յօժարութեամբ, հեզութեան եւ խոնարհութեան սիրով, որպէսզի Տէրը դէպի մեզ դառնայ գթութեամբ եւ ողորմութեամբ: Հանապազ երկարաձիգ աղօթքներով փութա՛նք առ Նա եւ Նրա բարեհաճութի՛ւնը խնդրենք պատեհ ժամին: Քանզի մեծ է առ Աստուած հոգեւոր աղաչանքների եւ յարաժամ աղօթքների [նշանակութիւնը], եւ մեծ շնորհի են արժանացնում մարդու, երբ լինեն սուրբ սրտից եւ խոնարհ հոգով:

Եւ քանզի յարաժամ աղօթքի փութալը տէրունական պատուէր է, միշտ եւ անդադար [պէտք] է աղօթել Նրան: Քանզի թէպէտ այլ առաքինութիւնների համար չափ եւ սահման ունենք, այսինքն՝ պահոց պնդութիւնն ու մարմնի ճնշումն ըստ կարողութեան են, իսկ ողորմութիւնը՝ ըստ ունեցուածքի եւ ժամանակի [պատշաճութեան], սակայն աղօթքի պտուղն Աստուած պահանջում է ամէն ժամ եւ ամէն տարիքում ու դիպուածում:

Աղօթքը բարի սննդակիցն է մանուկների համար եւ պահապան դրսում ու ներսում, երիտասարդների գործակից է, ծերերի հաստատութեան յոյս, քահանաների պարծանքի պսակ, ժողովուրդների ամրութեան պարիսպ, զինուորների փրկութեան վահան, թագաւորների ցնծութիւն, իշխանների արդարութիւն, դատաւորների զգաստութիւն: Ճգնաւորների մարտակից է եւ կոյսերի կառավարութիւն, սգաւորների սփոփանք, բերկրեալների հրճուանք, նեղեալների անդորրութիւն ու խաղաղացածների զգուշութիւն: Այրերի գործակից է եւ կանանց տնակից, ճանապարհորդների ուղեկից եւ նաւորդների առաջնորդութիւն, առողջների խնդութիւն եւ հիւանդների մխիթարութիւն, մեղաւորների քաւութիւն եւ արդարների խնդութիւն, ննջեցեալների կեանքի պաշար ու բարիքների յոյս:

Եւ ի՞նչ եւս ներբողեմ աղօթքի արդիւնաւորութեանը, քանզի հրեշտակներին դասակից է դարձնում, սուրբերին՝ քաղաքակից եւ սերովբէներին՝ կաճառակից: Մարդուն դարձնում է Աստուծոյ տաճար եւ Երրորդութեան օթեւան: «Ուր երկու կամ երեք հոգի հաւաքւում են իմ անունով,- ասում է Տէրը,- ես այնտեղ նրանց մէջ եմ» [տե՛ս Մատթ. ԺԸ 20]: Եւ դարձեալ՝ «Ով պահում է իմ խօսքը, ես եւ Հայրս կգանք նրա մօտ Սուրբ Հոգու հետ եւ նրա մօտ կօթեւանենք» [տե՛ս Յովհ. ԺԴ 23]:

Տե՛ս առաջին արդար հայրերին եւ աղօթքո՛վ Աստծուն հաճոյացած կգտնես նրանց. թէ առաջին արդար Աբէլին մտաբերես, նախ աղօթքո՛վ արդարացած [կտեսնես] եւ ապա՝ ընդունելի պատարագն Աստծուն մատուցելիս, Սէթը, Ենովսը, Ենովքը, Նոյը, Աբրահամը, Իսահակը, Յակոբը, Մելքիսեդեկը, Մովսէսը եւ Ահարոնը՝ սրանք բոլորն էլ այլ բարի գործերի հետ նաեւ աղօթքո՛վ միշտ հաճելի եղան Աստծուն:

Դաւիթն աղօթքով ոչ միայն ազատում էր Ուրիայի [հանդէպ գործած] մեղքից, այլեւ մարգարէական շնորհը պահում իր մէջ: «Ցոգնեցի,- ասում է,- իմ հեծութիւններով, ամէն գիշեր լուացի իմ մահիճը եւ իմ արտասուքներով անկողինս թրջեցի» [Սաղմ. Զ 7]: Առաքեալների գլուխ Պետրոսը որպէս երեք ուրացութիւնների դեղ եւ սպեղանի յատկապէս աղօթքն էր համարում. «Դառնապէս լաց եղաւ,- ասում է,- եւ այնքան սաստիկ, մինչեւ որ արցունքի հետ արիւն կաթեց» [տե՛ս Մատթ. ԻԶ 75, Մարկ. ԺԴ 72, Ղուկ. ԻԲ 62]:

Մաքսաւորն աղօթքներով արդարացաւ եւ փարիսեցուց բարձր համարուեց: Պոռնիկ կինն աղօթքո՛վ ընդունեց բազում մեղքերի թողութիւն եւ ապրեց հոգով. «Քո հաւատքը փրկեց քեզ,- ասաց Տէրը,- աղօթքի միջոցով» [տե՛ս Ղուկ. Ը 37, 48]: Աւազակը մի խօսքով ճանաչեց [իր] մեղքերը, Քրիստոսից յիշուել հայցեց եւ դրախտի ժառանգորդ եղաւ: Նաեւ եղկելի Յուդան, եթէ ճշմարտապէս ապաւինէր աղօթքին, թերեւս այնպէս չմատնուէր կորստեան:

Առաքեալներն աղօթքո՛վ հանդիսացան*, մարգարէները հրաշքներ գործեցին, մարտիրոսները պսակների արժանացան եւ հայրապետներն ահեղ գործեր ցոյց տուեցին: Պօղոսն ու Շիղան աղօթքով բանտի հիմքերը շարժեցին [տե՛ս Գործք ԺԶ 25-26], եւ Պետրոսը զարմանալի անօթը տեսաւ իջած [տե՛ս Գործք 11], Եղիան երկնքից հուր իջեցրեց [տե՛ս Գ Թագ. 18-38] եւ յարութիւն տուեց մեռեալին [տե՛ս Գ Թագ. ԺԷ 17-24], Եղիսէն իր ուսուցչի նման [հրաշքներ] գործեց եւ դեռ աւելին. Երիքովի ջուրը բժշկեց [տե՛ս Դ Թագ. Բ 19-22], ասորի իշխանին մաքրեց [տե՛ս Դ Թագ. Ե 1-4], Գէեզի գողին տանջեց [տե՛ս Դ Թագ. Ե 20-27], փայտով երկաթը ջրից դուրս հանեց՝ Խաչի զօրութիւնն օրինակելով [տե՛ս Դ Թագ. Զ 1-6], ասորիների գունդը կուրութեամբ կապեց՝ Բելիարի եւ նրա դեւերի նման [տե՛ս Դ Թագ. Զ 11-19]:

Ստեփանոս նախասարկաւագն ու առաջին վկան աղօթքով ոչ միայն նշաններ եւ արուեստներ գործեց, այլեւ բացեց երկինքը եւ տեսաւ Որդուն Հօր աջ կողմում՝ իր հոգին ընդմիշտ Նրան յանձնելով [տե՛ս Գործք Զ 8, Է 55-56]: Եւ Յիսուս՝ աղօթքներին անկարօտն ու բոլորի աղաչանքներն ընդունողը, աղօթքով հանդիսացաւ, որպէսզի յորդորի մեզ միշտ եւ յարաժամ սուրբ աղօթքի մէջ անձանձիր մնալու սիրով:

Աղօթքն ամրութեան պարիսպ է, հաստատութեան սիւն, հաւատքի հիմք, յոյսի խարիսխ, առ Աստուած ելնելու սանդուղք: Աղօթքը պարծանքների պսակ է, փրկութեան պատճառ, բարիքների առիթ, համբերութեան մարզիչ, աստուածպաշտութեան ծանօթութիւն, Սուրբ Հոգուն հրաւիրող, ինչպէս վկայում է աղօթքով այս [ամէնը] գտած եւ

* հանդիսանալ- առաքինանալ, ճգնել, նահատակուել, անվեհեր եւ անձնուրաց պայքար մղել

պայծառացած Կոռնելիոսը [տե՛ս Գործք Ժ 1-33]: Աղօթքը սանդարամետական դեւերի հալածիչ է, Բելիարին ջախջախող [տե՛ս Դատ. Ի 13], բանսարկուին կործանող, նրա բոլոր արկածները խափանող եւ կորստեան ամօթ: Եւ քանի որ սատանան գիտի, որ մարդն աղօթելիս շնորհ է ստանում Աստծուց, ուստի ջանում է աղօթքի ժամին ցնորել մարդկանց մտքերը, որպէսզի զրկի շնորհներից, որոնք մարդ ստանում է մաքուր մտքով աղօթելիս:

Ուստի եւ մենք, այս իմանալով, նրան հակառակ հանապազ ջանանք անզբաղ մնալ աղօթքում: Եւ այն ժամին մեր սրտերը մաքրենք չարի բոլոր արկածներից եւ միշտ աղօթենք առանց բարկութեան եւ երկմտութեան: Եւ մանաւանդ սրտանց աղօթենք թշնամիների համար, որպէսզի մեր աղաչանքն էլ ընդունելի լինի Աստուծոյ մօտ: Եւ յատկապէս աղօթքի ժամին մեր հոգիներում ընդունենք Քրիստոսի սիրոյ հուրը՝ յարատեւ պաղատանքներով արթուն լինելով Նրա առջեւ, առօրեայ հոգսերը թեթեւ համարելով՝ յանուն մշտնջենաւոր բարիքների վայելքի:

Արթնացնե՛նք մեր միտքը՝ ամէն ժամ հաճոյ լինելու Աստուծոյ կամքին, եւ առաքինասէր վարքո՛վ դաստիարակենք մեր անձերը: Ջնայենք միայն առօրեային, այլ միշտ յաւիտենականը ցանկանք եւ այնտեղի կեանքը մշտապէս պտղաբերենք: Այս կեանքը վաճառական է, եւ ինչ վաստակների գործեր որ մէկն այստեղ վաճառում է որպէս իր հոգու ծնունդ, նոյնն էլ գտնում է հանդերձեալում պատրաստուած իր անձի համար՝ թէ՛ բարին եւ թէ՛ չարը: Եկանք աշխարհ եւ գնում ենք աշխարհից, բայց մեր ետեւից [մեր] գործերն են լինելու, եւ պիտի մոռացուենք այս աշխարհից, եւ միայն հանդերձեալի հոգսն է նորոգում:

Մէկը սերմանեց մարմնի մէջ եւ հեշտացաւ մարմնական վայելքներով, փառքին հետեւեց, ծառայեց ինչքին եւ ունեցուածքին, հեղգութեամբ եւ պարապութեամբ կեանքն անցկացրեց՝ որովայնով շուայտանալով եւ մտքով միշտ թափառելով: Ամէն ինչ անցաւ, ապականութիւն եւ ոչինչ դարձաւ, իսկ պատուհասի պատիժները կան եւ մնում են յաւիտեան. բոցակէզ հուրը եւ եռացող որդը, տարտարոսն ու յոյժ սարսափելի խաւարը: Իսկ եթէ որեւէ մէկը զրկեց կամ գողացաւ, խաբեց կամ յափշտակեց, բազմապատիկ տոկոսներով կհատուցի, քանզի, [բարի] գործերից սպառուելով, հաւատքից եւս կվրիպի:

Ի՞նչ ասեմ չարակնողների, նախանձոտների եւ ատողների, [չարիք] հրահրողների եւ վրիժառուների մասին, որոնք անտանելի աղէտների են արժանանում: Քանզի բոլոր գործերը յառնելու են համընդհանուր Յարութեանը՝ թէ՛ բարի եւ թէ՛ չար: Եւ գործողներն ստանալու են ըստ արժանւոյն, ոմանք՝ պատիժ, եւ ոմանք՝ պսակ:

Եւ այնժամ այնտեղ մեծ վիշտ ու սոսկալի վտանգ է լինելու: Քանզի բաժանուելու են միմեանցից հայրերն ու որդիները, եւ անջատուելու են հարազատ եղբայրները, եւ յոյժ հեռացուելու են մտերիմները, եւ սննդակիցները՝ զատուելու: Քանզի եղբայրը եղբօրը չի փրկի, եւ ոչ էլ հայրը՝ իր ծնած որդուն, եւ ոչ ոք չի կարող օգնել իրեն հարազատ անձին, քանզի Դատաւորն անաչառ է, եւ Դատաստանն՝ իրաւացի:

Այնտեղ սաստիկ ողբեր կլինեն, անբաւ աղաղակ կտիրի, եւ կլսուեն դատապարտուած անձանց յոյժ ողորմագին ձայներ: Քանզի մէկը կմատնուի գեհենի հրին, մէկը կդատապարտուի տարտարոսի, մէկ ուրիշը հրեղէն որդերի կեր կլինի, միւսը միշտ կտանջուի հրեղէն սրով: Եւ ամենքին կհատուցուի ըստ իրենց արժանի չափի, քանզի ահաւոր է այն Ատեանը, ահեղ եւ զարհուրելի է հրապարակը, եւ անաչառ՝ գործերի քննութիւնը: Թագաւորներից չի աչառւում եւ քահանաներից չի հարկադրւում, մեծամեծերին պատիւ չի տալիս եւ ծերերի ալեհերութեամբ չի մեղմանում: Ովքեր ողորմութիւն չեն գործել, այնտեղ էլ ողորմութիւն չեն գտնում: Ովքեր առաւել սիրեցին արծաթը, քան Քրիստոսին, եւ զարդարեցին ձիերին, ջորիներին ու շներին, իսկ աղքատներին անտեսեցին, այնտեղ կդատուեն Քրիստոսի կողմից եւ կայրուեն գեհենի հրում: Եւ միայն արդարները կպսակուեն Աստուծոյ արքայութեան մէջ, որին եւ մենք բոլորս արժանանանք Քրիստոսի շնորհներով, որ օրհնեալ է Հօր եւ Սուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

ՔԱՐՈԶ ԵՐԿՆՔԻ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԸ ՓՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

«Նախ փնտրեցէ՛ք Աստծոյ արքայութիւնն ու Նրա արդարութիւնը, եւ այդ ամէնը աւելիով կտրուի ձեզ»[1]:

Սուրբ Հոգու օգնականութեամբ եւ ձեր աղօթքների օժանդակութեամբ կամենում եմ մեկնաբանել Աւետարանի այս խօսքը՝ քարոզելով նախ՝ Աստծոյ արքայութիւնը փնտրողների, ապա՝ արքայութեան, եւ վերջապէս՝ խնդրուածքների մասին:

Փնտրողների մասին

Մարդկանցից շատերը բնաւ չեն փնտրում Աստծոյ արքայութիւնը, այլ փախչում են նրանից. ոմանք էլ փնտրում են, սակայն չեն գտնում. ոմանք փնտրում եւ գտնում են, սակայն չեն պահում. իսկ ոմանք էլ փնտրում են, գտնում եւ պահում: Եւ այսպիսով մարդիկ բաժանւում են չորս դասի:

Նրանք, ովքեր չեն փնտրում Աստծոյ արքայութիւնը, այլ փախչում են նրանից, իրենց կեանքի բոլոր օրերում չեն դադարում չարիք գործելուց: Նրանց մասին է ասում ս. Յովհաննէս Ոսկեբերանը, թէ չար մարդիկ կամենում են յաւիտեան ապրել, որպէսզի հանապազ չարը գործեն, եւ միշտ ցանկանում են կենդանի լինել, որպէսզի չդադարեն մեղանչելուց: «Ձենք կամենում ճանաչել Քո ճանապարհները: Ո՞վ է Ամենակալը, որ ծառայենք Նրան»[2],- այսպիսի դառն ու դժնդակ պատասխան են տալիս նրանք, երբ փորձում են խրատել ի-

* Տե՛ս «Քարոզ յերկրորդ կիւրակէն վասն խնդրելոյ» («Գիրք քարոզութեան, որ կոչի Զմեռան հատոր», Կ. Պոլիս, 1740, գլ. ՀԳ, էջ 333):

1 Տե՛ս Մատթ. Զ 33:

2 Տե՛ս Յոբ ԻԱ 14-15:

բենց: Այդպիսիները մատնում են Աստծոյ արդար դատաստանին ու երբէք զերծ չեն մնում տանջանքներից:

Եւ այս ոչ միայն անհաւատներն ու չարագործներն են, այլեւ բազում չար հաւատացեալները, ովքեր սոսկ հաւատացեալի անունն են կրում, սակայն հեռու են բարի գործերից: Նրանք թէեւ լեզուով հաւատում են, սակայն սրտով հեռացած են Աստծուց եւ իրենց գործով ուրանում են Նրան:

Երկրորդ խմբում նրանք են, ովքեր փնտրում են Աստծոյ արքայութիւնը, սակայն չեն գտնում: Դրանք սնափառ ու մարդահաճ մարդիկ են, որոնք բարիք են գործում, սակայն փառամոլութեան պատճառով կորցնում են իրենց վարձը. մարմնով մեռնում են, բայց հոգով չեն ապրում. չարչարւում են, սակայն չեն հանգստանում. տանջւում են, բայց պսակի չեն արժանանում, քանզի այդ իսկ է նրանց վարձը[3]: Նրանք միմեանցից են փառք ստանում, իսկ Միակ Աստծոյ փառքը չեն փնտրում[4], ինչպէս ասում է Տէրը: Այս դասին է պատկանում Աւետարանի փարիսեցին, որն ասում էր. «Գոհանում եմ Քեզանից, Տէ՛ր, որովհետեւ այնպիսին չեմ, ինչպէս մարդկանցից ոմանք»[5]: Ահա այսպիսի չարիք է փառասիրութիւնը, քանզի փարիսեցին արդար մտաւ տաճար, բայց աղօթելիս մեղանչեց եւ այնտեղից մեղքով ելաւ: Մինչդեռ մաքսաւորը, որ խոնարհութեամբ կուրծքն էր ծեծում եւ արտասւում, մեղքերով մտաւ տաճար, բայց արդարացած դուրս եկաւ այնտեղից: Այս է մարդկանց երկրորդ դասը, որ փառասիրութեամբ փնտրում, սակայն չի գտնում արքայութիւնը:

Երրորդ խմբի մարդիկ նրանք են, ովքեր փնտրում եւ գտնում են Աստծոյ արքայութիւնը, սակայն չեն պահում այն: Այդ նրանք են, ովքեր միաժամանակ հաւատում են, բայց փորձութեան պահին ընկրկում են եւ այս անցաւոր կեանքի պատճառով զրկւում անանց կեանքից: Կարճ ժամանակ վայելելով երկրի վրայ՝ նրանք յաւիտենապէս տանջւում են դժոխքում: Քանզի ուրանում են իրենց Փրկչին եւ կորչում՝ նմանուելով նրանց, ովքեր լոյսը մերժելով՝ տանջւում են խաւարում: Նրանց մասին Տէրն ասաց. «Ով ուրանայ Ինձ մարդկանց առջեւ, Ես էլ նրան կուրանամ Իմ Հօր եւ հրեշտակների առջեւ»[6]: Այլեւ նմանւում են այն աշակերտներին, որոնք երբ լսեցին Տիրոջից, թէ՝ «եթէ չուտէք Մարդու Որդու Մարմինը եւ չխմէք Նրա Արիւնը, ձեր անձերում կեանք չէք ունենայ», ասացին. «Խիստ է խօսքդ: Ո՞վ կարող է այն լսել», ու հեռացան[7]: Այսպիսիների համար աւելի լաւ էր, եթէ ճշմարտութեան ճանապարհը ճանաչած չլինէին, քան ճանաչէին ու ետ դառնային[8], ասում է առաքեալը: Այս մարդիկ են, որ փնտրում եւ գտնում են, սակայն չեն պահում Աստծոյ արքայութիւնը:

Իսկ չորրորդ դասը նրանք են, ովքեր փնտրում են երկնքի արքայութիւնը, գտնում են եւ պահում այն: Նրանք այնպիսի սիրով են միաւորւում Աստծոյ հետ, որ ոչինչ են համարում այս աշխարհի բոլոր վայելքները: Եւ ոչինչ չի կարող նրանց բաժանել Քրիստոսի սիրուց՝ ո՛չ նեղութիւնները, ո՛չ հալածանքները եւ ո՛չ այլ ինչ[9]: Նրանք մշտապէս աճում են բարիք գործելով եւ շարունակ ձգտում են առաջ գնալ:

Ուրեմն պէտք է Աստծոյ արքայութիւնը փնտրենք հաւատով, յոյսով եւ կատարեալ սիրով եւ այսպէս կարող ենք գտնել այն:

Ոմանք այն փնտրում են միամիտ սրտով, ինչպէս Սողոմոն Իմաստունն է ուսուցանում. «Խորհեցէ՛ք Տիրոջ մասին բարութեամբ. եւ միամիտ սրտո՛վ փնտրեցէք Նրան»[10]: Իսկ ոմանք փնտրում են երկմտութեամբ: Միամտարէն փնտրողները, իրենց սրտի ողջ բաղձանքը բեւեռելով դէպի Նա, միշտ յօժար կամքով, հոգով ու մարմնով կարօտում են երկնքի արքայութեանը: Ինչպէս որ ծարաւ մարդիկ են ջուր փնտրում, այնպէս էլ նրանք են փնտրում կենաց ջուրը, ինչպէս Դաւիթն է ասում. «Իմ անձը երկրի պէս ծարաւ է Քեզ, լսի՛ր ինձ, քանզի նուաղեց իմ հոգին»[11]:

Մինչդեռ երկմտութեամբ փնտրողները նրանք են, ովքեր կամենում են այս կեանքում հարստանալ, հեշտանալ ու մեծարուել եւ... հանդերձեալում նոյնպէս պսակ կրել: Սակայն այդպէս չի լինում եր-

3 Տե՛ս Մատթ. Զ 2, 5, 16:
4 Տե՛ս Մատթ. Ե 44:
5 Տե՛ս Ղուկ. ԺԸ 11:

6 Տե՛ս Մատթ. Ժ 33, Ղուկ. ԺԲ 9:
7 Տե՛ս Յովհ. Զ 54, 61, 67:
8 Տե՛ս Բ Պետր. 21:
9 Տե՛ս Հռոմ. Ը 35:
10 Իմաստ. Ա 1
11 Տե՛ս Սաղմ. ՃԽԲ 6, 7:

բէք, քանզի Տէրն ասում է. «**Զէք կարող ծառայել երկու տիրոջ՝ Աստծուն եւ մամոնային**»[12]: Եւ մարգարէն ասում է. «**Վա՛յ նրանց, ովքեր ընթանում են երկու ճանապարհով**»[13]: Այդ ճանապարհներից մէկը նեղ է եւ անձուկ, որ տանում է դէպի կեանք, իսկ միւսը՝ լայն ու ընդարձակ, որ կորստեան է մատնում[14]: Որովհետեւ չենք կարող հեշտութեամբ հանգիստ գտնել, ինչպէս վկայում է առաքեալը. «**Պէտք է բազում նեղութիւններով մտնել հանգիստ, քանզի նա, ով կցորդւում է չարչարանքների, նաեւ Քրիստոսի փառքին է հաղորդ դառնում**»[15]: Ուստի պէտք է միամի՛տ սրտով փնտրել Աստծոյ արքայութիւնը, որովհետեւ սա է այն պատուական մարգարիտը, որի համար տալիս ենք մեր ունեցած ամէն բան, անգամ մեր մարմինը, նրա բոլոր հեշտութիւններն ու ցանկութիւնները, որից յետոյ միայն գտնում ենք Աստծոյ արքայութիւնը:

Ուրեմն փնտրենք Աստծոյ արքայութիւնը ո՛չ Ղովտի կնոջ պէս, որը ետ նայեց ու աղէ արձան դարձաւ, քանզի թէեւ դուրս ելաւ Սոդոմից, սակայն ետ շրջուեց ու կործանուեց[16]: Այդպէս եւ մենք, եթէ արքայութիւնը փնտրելով՝ թողնենք ու ետ դառնանք դէպի աշխարհի սէրը, կկործանուենք: Փնտրենք այն Հարաւի թագուհու պէս, որ եկաւ երկրի ծայրերից՝ լսելու Սողոմոն արքայի իմաստութիւնը[17]: Սողոմոն թարգմանւում է խաղաղութիւն՝ խորհրդանշելով մեր Տէր Յիսուս Քրիստոսին, որ խաղաղութիւն արարեց երկնքում ու երկրի վրայ. Հայր Աստծուն հաշտեցրեց արարածների հետ, հրեշտակներին ու մարդկանց եւ հրեաների ու հեթանոսների Եկեղեցիները միաւորեց մի խաղաղութեան մէջ: Իսկ Հարաւի թագուհին խորհրդանշում է Եկեղեցին, այսինքն՝ հաւատացեալ ժողովուրդը, որ հաւաքւում է երկրի չորս ծագերից, այսինքն՝ հեթանոսական կրօններից, լսելու Քրիստոսի վարդապետութիւնը:

Փնտրենք Աստծոյ արքայութիւնը այն մեղաւոր կնոջ նման, որը իւղով օծեց Քրիստոսի ոտքերը, եւ որին Տէրն ասաց. «**Գնա՛ խաղա-**

12 Տե՛ս Մատթ. Զ 24, Ղուկ. ԺԶ 13:
13 Հմմտ. Առակ. ԻԸ 18:
14 Տե՛ս Մատթ. Է 13, 14:
15 Հմմտ. Գործ. ԺԴ 21, Բ Թես. Ա 7, Եբր. Դ 3, Հռոմ. Ը 17:
16 Տե՛ս Ծն. ԺԹ 26:
17 Տե՛ս Գ Թագ. Ժ 1-5, Բ Մն. Թ 1-4:

ղութեամբ, թող ներուած լինեն քո մեղքերը»[18]: Փնտրենք իմաստուն կոյսերի պէս, որոնք իրենց լապտերները վառել էին ողորմութեան իւղով, եւ ոչ թէ յիմար կոյսերի պէս՝ մարած լապտերներով, որոնց Տէրն ասաց. «Ճշմարիտ եմ ասում, չե՛մ ճանաչում ձեզ»[19]: Փնտրենք, եղբայրնե՛ր, ոչ թէ ունայն ու անցաւոր կեանքը, այլ Աստծոյ արքայութիւնը, որ անանց է եւ մշտնջենական:

Արքայութեան մասին

Տէրն ասում է. «**Երկնքի արքայութիւնը նմանուեց ագարակում ծածկուած գանձի**»[20]: Քրիստոս արքայութիւնը նմանեցնում է թաքուն պահուած գանձի, որովհետեւ այն գանձ է գտնողների համար, լիութիւն եւ անհատնելի հարստութիւն: Գանձի պէս Աստծոյ արքայութիւնն էլ ծածկուած է շատերից. եւ ամէն մարդ չի կարող գտնել այն: Եւ սակայն ովքեր փնտրում են, գտնում են, ինչպէս գանձ որոնողները: Գանձը երբէք ձրի չի գնւում. նրա համար վճարել է պէտք: Այդպէս եւ Աստուած կեանքը մեզ ձրի տուեց, իսկ արքայութիւնը ստանալու համար պէտք է գին վճարել եւ ջանք թափել:

Արդ, երկնքի արքայութիւնը բազմիմաստ է:

Աստծոյ արքայութիւն է կոչւում մեր Տէր Յիսուս Քրիստոս՝ Որդին վերին Արքայի, քանզի սուրբ Յովհաննէս Մկրտիչն ասում է. «**Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ մերձեցել է երկնքի Արքայութիւնը**»[21], այսինքն՝ Աստծոյ Որդին: Նա ծածկուած է մարմնի ագարակում՝ անհաւատների եւ հեթանոսների համար մնալով անճանաչելի եւ անյայտ: Եւ Արքայութիւն է կոչւում, որովհետեւ Նրա հետ թագաւորելու ենք երկնքում՝ ըստ առաքեալի խօսքի. «**Եթէ համբերենք, Նրա հետ կթագաւորենք**»[22]:

Արքայութիւն է կոչւում նաեւ սուրբ Եկեղեցին՝ հաւատացեալ ժողովուրդը, որովհետեւ հաւատացել է երկնքի Արքային: Եւ նա, ով այս կեանքով արժանանում է Աստծոյ արքայութեանը եւ առաքինանում

18 Տե՛ս Ղուկ. Է 49, 50:
19 Մատթ. ԻԵ 12
20 Տե՛ս Մատթ. ԺԳ 44:
21 Մատթ. Գ 2
22 Տե՛ս Բ Տիմ. Բ 12:

է, այնտեղ՝ հանգերձեալում, պսակւում է մեծ փառքով եւ, բնակուելով երկնքի արքայութեան մէջ, թագաւորում Քրիստոսի հետ:

*Արքայութիւն է կոչւում եւ Աւետարանը՝ միւս Սուրբ Գրքերի հետ միասին: Ովքեր մերժում են **Աստծոյ խօսքը եւ անարժան լինում յաւիտենական կեանքին**[23], Տիրոջ խօսքի համաձայն՝ **արքայութիւնը կվերցուի նրանցից եւ կտրուի այն ազգին, որը պտղաբեր կդարձնի այն**[24], այսինքն՝ Աւետարանը: Այն ծածկուած է բառերով, առակներով ու նիւթեղէն գրերով, եւ երկնքի արքայութեան մուտքը բացւում է նրա պատուիրանները պահողների համար:*

Արքայութիւն են կոչւում նաեւ Եկեղեցու խորհուրդները՝ մկրտութիւնը, ապաշխարութիւնը, ձեռնադրութիւնը, պատարագը եւ այլն: Սրանք եւս նիւթեղէն ծածկոյթ ունեն, որպէսզի հաւատացեալները գտնեն, իսկ անհաւատները կորցնեն: Եւ արքայութիւն են կոչւում, որովհետեւ հաւատացեալներին առաջնորդում են դէպի արքայութիւն եւ նրանց սրբագործելով՝ միաւորում երկնքի Արքայի հետ:

*Նաեւ արքայութիւն է կոչւում մարդու հոգին, որ ծածկուած է նրա մարմնի ազարակում՝ անտես լինելով զգայարանների եւ տեսանելի՝ մտքի համար: Այս մասին է Տէրն ասում. **«Աստծոյ արքայութիւնը ձեր ներսում է»**[25]: Քանզի հոգին երկնքի արքայութեան պատկերն է, ինչպէս գրուած է Սուրբ Գրքում. **«Աստուած ստեղծեց մարդուն ըստ Իր պատկերի»**[26]: Եւ այսպէս հոգին մեր մէջ Աստծոյ պատկերն է եւ արքայութիւն է դառնում սուրբ գործերի միջոցով: Մինչդեռ չար գործերը այն դարձնում են սատանայի պատկեր, մեղքերի տուն եւ դժոխք:*

*Վերջապէս՝ արքայութիւն է կոչւում եւ յաւիտենական կեանքը, որ Վերին քաղաքն է, այսինքն՝ հրեշտակների եւ հրեշտակացած սուրբերի բնակավայրը: Նրանց մասին է Տէրն ասում. **«Երանի՜ հոգով աղքատներին, քանզի նրանցն է երկնքի արքայութիւնը»**[27]. իսկ մէկ այլ*

23 Տե՛ս Գործ. ԺԳ 46:
24 Մատթ. ԻԱ 43
25 Ղուկ. ԺԷ 21
26 Ծն. Ա 27
27 Մատթ. Ե 3

*տեղ ասում է. **«Իմ թագաւորութիւնն այս աշխարհից չէ»**[28]: Եւ այն արքայութիւն է կոչւում, որովհետեւ բոլոր երանութիւնների ու փառքերի լրումն է եւ մեծագոյն հարստութիւնը: Այդ պատճառով Տէրն ասում է. **«Նախ Աստծոյ արքայութի՛ւնը փնտրեցէք»**[29], որովհետեւ նախ եւ առաջ փնտրել է պէտք եւ ապա՛ գտնել, իսկ ովքեր չեն փնտրում, նրանք չեն գտնում:*

Այսպիսով, հարկաւոր է փնտրել, գտնել եւ պահել:

Խնդրուածքների մասին

Յայտնի է, որ մարդու բոլոր խնդրուածքները լինում են երկու կերպ՝ սեփական անձի եւ այլոց համար:

Սեփական անձի համար խնդրուածքները չորսն են:

*Պէտք է նախ՝ **փնտրեցէ՛ք Աստծոյ արքայութիւնը եւ Նրա արդարութիւնը**, ինչպէս ուսուցանում է Տէրը, որ նշանակում է հայցել թողութիւն մեղքերից եւ փրկութիւն տանջանքներից, փնտրել երկնքի արքայութիւնը եւ Քրիստոսի տեսութիւնը: Նոյնն ուսուցանեց ասել «Հայր մեր» աղօթքում. **«Թող սուրբ լինի Քո անունը, թող գայ Քո արքայութիւնը, թող Քո կամքը լինի»**[30]:*

*Այնուհետեւ պէտք է Տիրոջից յաջողութիւն խնդրել հաւատի եւ գործերի մէջ, քանզի հաւատը, յոյսը եւ սէրը Աստծոյ շնորհներն են[31]: Նաեւ պէտք է խնդրել բարի գործերում խոհեմութիւն ու արիութիւն ունենալու համար եւ ողջախոհութիւն ու արդարութիւն[32]՝ ամէն ինչում: Այս ամէնն Աստծոյ պարգեւներն են, որոնք տալիս է Տէրը նրանց, ովքեր խնդրում են: Աստուածային առաքինութիւնների մասին է ասուած. **«Եթէ մէկը հաց խնդրի հօրից, մի՞թէ նա քար կտայ»**[33]. հացը խորհրդանշում է հաւատը, որ կեանքի պատճառ է,*

28 Յովհ. ԺԸ 36
29 Տե՛ս Մատթ. Զ 33:
30 Տե՛ս Մատթ. Զ 10:
31 Հաւատը, յոյսը եւ սէրը կոչւում են աստուածային առաքինութիւններ:
32 Խոհեմութիւնը, արիութիւնը, ողջախոհութիւնը եւ արդարութիւնը կոչւում են մարդկային առաքինութիւններ:
33 Տե՛ս Մատթ. Է 9:

իսկ քարը՝ անհաւատութիւնը: «Եթէ ձուկ խնդրի, մի՞թէ օձ կտայ»[34]. ձուկը յոյսն է, իսկ օձը՝ յուսահատութիւնը: «Եւ եթէ ձու խնդրի, մի՞թէ կարիճ կտայ»[35]. ձուն սէրն է խորհրդանշում, որ բոլորաձեւ է ու կատարեալ, իսկ կարիճը՝ ատելութիւնը, որ խայթիչ է հոգու համար եւ մահաբեր:

Իսկ մարդկային առաքինութիւնների մասին Տէրն ասում է. «Առանց Ինձ ոչինչ չէք կարող անել»[36], որովհետեւ Նա է, որ յաջողեցնում է մեր մէջ կամենալն ու կատարելը[37]:

Տիրոջից պէտք է խնդրել նաեւ մարմնի անհրաժեշտ կարիքների համար, ինչպիսիք են չափաւոր սնունդը եւ հանդերձը՝ ըստ Տիրոջ ուսուցանութեան. «Մեր հանապազօրեայ հացը տո՛ւր մեզ օրըստօրէ»[38]: Չափաւորն ենք խնդրում եւ ոչ թէ աւելորդը: Իսկ ամէն կերպ զարդարուելը եւ չափից աւելի ուտելն ու ըմպելը չարից է եւ հեթանոսներինը, այլ ոչ թէ մերը:

Նմանապէս պէտք է խնդրել մարմնի առողջութիւն եւ ազատութիւն գերութիւնից կամ չար տէրերից, որպէսզի առողջութեամբ բարին գործենք, Տիրոջը ծառայենք, պաս պահենք եւ աղօթենք: Իսկ երկար ապրելու համար մարմնի առողջութիւն եւ հեշտութիւն խնդրելը հեթանոսների՛ սովորութիւնն է, որոնք աւելորդն են փնտրում:

Մեր անձերի համար չորրորդ խնդրուածքը մեղքի փորձութիւններից, սատանայի որոգայթից, չար մարդկանցից եւ զանազան փորձանքներից փրկուելու վերաբերեալ է՝ համաձայն Տիրոջ ուսուցանութեան. «Մի՛ տար մեզ փորձութեան, այլ փրկի՛ր չարից»[39]:

Բայց եթէ միայն մեր անձի համար խնդրենք, անձնասէր եւ անողորմ կլինենք: Ուրեմն անհրաժեշտ է նաեւ այլոց համար աղօթել, որովհետեւ ինչպէս առաքեալն է ասում, արդարի աղօթքը յոյժ զօրաւոր է օգնելու համար[40]:

34 Տե՛ս Մատթ. Է 10, Ղուկ. ԺԱ 11:
35 Տե՛ս Ղուկ. ԺԱ 12:
36 Յովհ. ԺԵ 5
37 Տե՛ս Փիլիպ. Բ 13:
38 Տե՛ս Մատթ. Զ 11:
39 Մատթ. Զ 13
40 Յակ. Ե 16

Արդ, այլոց համար խնդրուածքները եւս չորսն են:

Առաջին հերթին պէտք է աղօթել թագաւորների եւ աստուածասէր իշխանների համար՝ նրանց համար Աստծուց խնդրելով երկար կեանք, առողջութիւն, թշնամիների դէմ յաղթութիւն: Այս խնդրուածքի մէջ անհրաժեշտ է աղօթել նաեւ հոգեւոր առաջնորդների համար: Պէտք է նաեւ խաղաղութիւն եւ միաբանութիւն հայցել համայն աշխարհի եւ եկեղեցու համար, պատուհասների եւ ամենայն խռովութիւնների վերացում մարդկանց միջից, ինչպէս նաեւ օդի բարեխառնութիւն եւ բերքի առատութիւն,:

Այնուհետեւ պէտք է խնդրել հաւատացեալ ննջեցեալների համար, քանզի եթէ աղքատները ողորմութեան կարիք ունեն, առաւել եւս՝ նրանք, ովքեր զրկուել են բոլոր բարիքներից եւ անօգնական վիճակում են: Եւ եթէ ողորմած ենք հաշմանդամների հանդէպ, որքա՜ն առաւել պէտք է նրանց ողորմել, ում ողջ մարմինն է ապականուել եւ տարրալուծուել հողի մէջ: Եւ եթէ մարդկանց ձեռքով գերուածներին ենք ողորմում, առաւել եւս նրանց է անհրաժեշտ ողորմել, ովքեր իրենց մեղքերի պատճառով մատնուել են սատանային: Եւ քանի որ իրենք չեն կարող ապաշխարել մեղքերի համար, եւ մեռեալներն էլ անզօր են օգնել միմեանց ու տալ խնդրածը, ուստի միայն մարդասէր եւ գթած Աստծոյ ողորմութիւնն են ակնկալում եւ կարօտում մեր՝ ողջերիս աղօթքներին, ինչպէս երանելի Յոբն էր ասում նրանց անունից. «Ողորմեցէ՛ք, ողորմեցէ՛ք ինձ, բարեկամնե՛ր, քանզի Տիրոջ ձեռքն ինձ դիպաւ»[41]: Հետեւաբար մենք պէտք է ողորմենք եւ աղօթենք նրանց համար, ովքեր յոյսով ու հաւատով ննջեցին ի Քրիստոս, եւ աշխարհի սխալանքներից որոշ բաներ տարան իրենց հետ. եւ կամ՝ ովքեր, յանկարծակի մեռնելով, չհասցրին խոստովանել իրենց մեղքերը եւ սուրբ պսակի արժանանալ. նրանց համար պէտք է մեղքերի թողութիւն խնդրել Աստծուց: Եւ այսպէս, սուրբ պատարագի ընթացքում եւ մեր ամէնօրեայ աղօթքներում սուրբերին եւ արդարներին պէտք է յիշել իբրեւ բարեխօսների, իսկ մեղաւորներին՝ նրանց համար ներում խնդրելով՝ լինեն ծանօթ թէ անծանօթ:

Սրանից յետոյ պէտք է խնդրել նրանց համար, ովքեր տակաւին կենդանի են երկրի վրայ՝ թէ՛ հարազատների եւ թէ՛ օտարների համար

41 Յոբ ԺԹ 21

հայցելով առողջութիւն եւ խաղաղութիւն, ուղիղ վարք, անբիծ հաւատ եւ այլն:

Եւ վերջապէս՝ պէտք է խնդրել թշնամիների համար՝ ըստ Տիրոջ հրամանի. **«Սիրել ատելիներին եւ աղօթել թշնամիների համար»**[42]: Եւ պէտք է գիտենալ, որ մեր թշնամիները երեքն են. նախ՝ սատանան, որ ատելի է թէ՛ Աստծոյ, թէ՛ մեզ համար. երկրորդ՝ անհաւատներն ու մեղաւորները. եւ երրորդ՝ մեր անձնական թշնամիները: Արդ, սատանային, որ ատելի է Աստծուն, մենք եւս պիտի ատենք ու անիծենք, ինչպէս մարգարէն է ասում. **«Քեզ ատելիներին, Տէ՛ր, ատեցի եւ Քո թշնամիներից գարշեցի»**[43]: Իսկ մեղաւորների ու անհաւատների համար պարտաւոր ենք աղօթել, որ Տէրը հաւատ տայ նրանց, որպէսզի ետ դառնան մեղքից եւ չկործանուեն: Այս մասին է ասում մարգարէն. **«Տրտմութիւն պատեց ինձ մեղաւորների համար, ովքեր թողեցին Քո օրէնքը»**[44]: Եւ պէտք է տրտմել նրանց համար, որ ղէպի կորուստ են ընթանում՝ ո՛չ օրհնելով եւ ո՛չ էլ անիծելով:

Ինչ վերաբերում է մեր թշնամիներին, նրանք բաժանւում են երկու դասի: Եթէ միայն մեր անձնական թշնամին է, որ մարմնի կամ ունեցուածքի պակասութիւն է պատճառել, մի՛շտ պէտք է օրհնել եւ ոչ թէ անիծել, ինչպէս գրուած է. **«Օրհնեցէ՛ք ձեզ անիծողներին եւ մի՛ անիծէք, բարի՛ արէք ձեզ ատողներին»**[45]: Եւ պէտք է մերժենք մեր սրտից քէնն ու ոխը, քանզի **եթէ մարդկանց ներենք իրենց յանցանքները, Երկնաւոր Հայրն էլ կների մեր յանցանքները»**[46]: Իսկ եթէ թշնամի եւ վնասարար են ընդհանուր Եկեղեցու եւ հաւատի հանդէպ, պէտք է աղօթել նրանց համար, որպէսզի ետ դառնան չարիքից: Սակայն եթէ անզեղջ մնան, ինչպէս չար ու մեղաւոր մարդիկ եւ հերձուածողները, պետք է նզովել ու խրատել եւ ոչ թէ օրհնել:

Այսպէս պէտք է ընտրողաբար խնդրել եւ աղօթել: Եւ Ինքը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոս, որ առատաձեռն է իւրաքանչիւրիս բարիքներ շնորհելու մէջ, որ փոքր խնդրանքի դիմաց մեծամեծ պարգեւներ է

42 Տե՛ս Մատթ. Ե 44, Ղուկ. Զ 27:
43 Տե՛ս Սաղմ. ՃԼԸ 21:
44 Սաղմ. ՃԺԸ 53
45 Տե՛ս Մատթ. Ե 44, Հռոմ. ԺԲ 14:
46 Տե՛ս Մատթ. Զ 14:

տալիս, որ գիտէ նախքան մեր խնդրելը եւ պարգեւում է նախքան աղերսելը, մեր բոլոր խնդրուածքները թող ի բարին կատարի: Քանզի տեսնում է անհոգներիս եւ մեր միտքն ու կամքը ղէպի բարին շարժում: Եւ թող Իր արարչական խնամքով ների մեր յանցանքները եւ բոլորիս առատապէս լցնի հոգեւոր ու մարմնաւոր բարիքներով:

Եւ Նրան փա՛ռք եւ գոհութի՛ւն եւ երկրպագութի՛ւն Իր Հօր եւ Ամենասուրբ Հոգու հետ. ամէն:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

I. [1] Արդ, նախ, ամենից առաջ, հոգ տար խորհուրդների մաքրութեան համար, որի մասին ասում է մարգարէն. «Աստուած փառաւորուած է իր սուրբերի խորհուրդներում»*: [2] Ինչպէս որ ծառան սպասում է իր տիրոջ հրամանին, այնպէս [էլ] բոլոր զգայարանները կառավարւում են խորհուրդների միջոցով. քանզի բարին նախ խորհում են եւ ապա գործում, ինչպէս դարձեալ ասում է մարգարէն. «Ցղացաւ ցաւեր եւ ծնեց անօրէնութիւն»**: [3] Եւ նախ խորհուրդներով են սիրում եւ ապա տալիս պարգեւներ, ինչպէս որ նախ Յովնաթանի հոգին կապուեց Դաւթին, եւ ապա հանելով իր հանդերձները՝ հագցրեց նրան: [4] Եւ նախ խորհուրդներով են ատում եւ ապա սպանում, ինչպէս որ Յովսէփի եղբայրները նախ ատեցին Յովսէփին եւ ապա [նրան] վաճառեցին Եգիպտոս: [5] Արդ, յայտնի է, որ բոլոր զգայարանները գործում են խորհուրդների միջոցով. ուստի դու ողջ զօրութեամբդ ջանա՛ եւ խորհուրդներդ մաքրի՛ր բոլոր աներեւոյթ շնչական ախտերից: [6] Եւ առաւել զգուշացի՛ր պոռնկական խորհուրդներից, որի մասին էլ ասում է Տէրը. «Շնացաւ իր սրտում»†: [7] Եւ զգո՛յշ եղիր տեսնելիս ու լսելիս, քանզի տեսնելն ու լսելը խորհուրդների դուռն են: [8] Այս մասին է ասում առաքեալը. «Ոչ մի պղծութիւն ու պոռնկութիւն թող չլիշուի ձեր մէջ, ինչպէս վայել է սուրբերին»††: [9] Ինչպէս որ երբ մէկը քաղցած է, եւ քաղցը մոռացութեան է տրուել, բայց երբ առատ սեղան է տեսնում, այնժամ քաղցը բորբոքւում է եւ ստիպում ուտել, եւ դարձեալ՝ երբ մարդը ծարաւ է, եւ ծարաւը մոռացութեան է տրուել, բայց երբ յստակ աղբիւր է տեսնում, այնժամ ծարաւը բորբոքւում է եւ ստիպում խմել, այնպէս էլ մարդու մտ՝ ցանկութիւնը, որ լռելով դադարում է, բայց երբ [մարդ] գեղեցիկ

* Սաղմ. ՁԸ 8

** Տե՛ս Սաղմ.Է 15:

† Մատթ. Ե 28

†† Տե՛ս Եփես. Ե 3:

դէմք է տեսնում եւ կամ պոռնկական երգեր լսում, այնժամ ցանկութիւնը բորբոքւում է եւ ստիպում մեղանչել: [10] Ուստի դու արգելի՛ր տեսանելիքդ ու լսելիքդ, որպէսզի խորհուրդների պատերազմ չբարձրանայ քո դէմ: [11] Արդ, ինչպէս որ արծիւը թռչում է եւ թակարդի մէջ կերակուր տեսնում, զօրութեամբ իջնում է կերակուրը ճանկելու, եւ մագիլի ծայրը մնում է թակարդում, եւ այդ փոքրիկ մասի պատճառով նրա ողջ զօրութիւնը թուլանում է, այնպէս էլ պատահում է մարդու հետ, որ բռնւում է մի չնչին նայուածքով: [12] Եւ դարձեալ՝ եթէ կամենում ես պոռնկական խորհուրդները յաղթել, հրաժարուի՛ր աւելորդ կերակուրներից ու ըմպելիքներից: [13] Այս մասին է ասում Երեմիա մարգարէն. «Քեզ յագեցրի, Իսրայէ՛լ, իսկ դու բոլոր քաղաքներում պոռնկանոցներ շինեցիր»*:

II. [1] Աղտեղի խորհուրդների պատճառ է լինում այն, որ չարախօսում ես եղբօրից, բամբասում, ատում կամ հպարտանում. այնժամ Քրիստոս Աստուած խորհուրդներին թոյլ է տալիս վրայ հասնել ու խաւարեցնել միտքդ: [2] Իսկ երբ լինում ես հեզ, խոնարհ, ողորմած, մարդասէր, խաղաղարար, այնժամ հալածում է խռովարար խորհուրդները, եւ միտքդ լուսաւորւում է: 3 Աղտեղի խորհուրդների պատճառ է նաեւ այն, որ ծուլանում ես աղօթքից եւ աշխատասիրութիւնից, քեզ տալիս քնի ու հանգստեան. այնժամ սատանան խորհուրդների որոմը սերմանում է սրտիդ մէջ ու միտքդ խաւարեցնում: [4] Իսկ երբ լինում ես արթուն, սթափ, աղօթող եւ խոհեմ, այնժամ գարշելի խորհուրդները հալածւում են, եւ միտքդ լուսաւորւում է: [5] Աղտեղի խորհուրդների պատճառ է եւ այն, որ առաւել զբաղւում են երկրաւոր հոգսերով. այնժամ այլ խորհուրդների հետ խառնուած նաեւ պոռնկական խորհուրդներ են մտնում եւ խաւարեցնում միտքդ: [6] Իսկ երբ քեզ զսպում ես մարմնաւոր խորհուրդներից, այնժամ յարատեւում ես հոգեւորի մէջ, եւ միտքդ լուսաւորւում է: [7] Երբ խորհուրդները գալիս են, դու զարհուրի՛ր, մարտնչի՛ր, խոստովանի՛ր եւ ապաշխարի՛ր, որ [նրանց] չընտելանաս ու սովորես, այլ յաղթես: [8] Այս մասին է ասում առաքեալը. «Քակտում ենք խորհուրդներն ու խորհուրդների ամէն

* Տե՛ս Երեմ. Ե 7:

բարձրութիւն, ամէն միտք գերում ենք ի հնազանդութիւն Քրիստոսի»*:

III. 1 Արդ, ինչպէս որ գողն իբրեւ զէնք ունենալով խաւարը՝ գալիս է գողանալու, այնժամ երբ լոյս են բերում, լոյսից զարհուրում ու հալածւում է, այնպէս էլ սատանան գող է եւ թուլացնում է [քեզ], երբ միտքդ խաւարած է տեսնում, այնժամ դու Քրիստոսի լոյսը ծագեցրո՛ւ մտքիդ մէջ, եւ սատանան կհալածուի, եւ միտքդ կլուսաւորուի, ինչպէս որ Քրիստոս ասաց. «Ես եմ աշխարհի լոյսը»**: 2 Եւ մի փոքր ժամանակ իսկ մի՛ թող, որ պոռնկական խորհուրդները յապաղեն քեզ մօտ, յիշի՛ր տէրունական ահարկու խօսքերը, որ ասաց, թէ՝ «Շնացաւ իր սրտում»†: 3 Եւ ինչպէս որ մինչեւ թշնամիների գալը նախ քաղաքը պարսպում են, այնպէս էլ դու նախ պահքով, աղօթքով ու արտասուքով պարսպի՛ր միտքդ. Աստուած ջանքդ կտեսնի եւ միտքդ կլուսաւորի:

IV. 1 Փոքր մի՛ համարիր խորհուրդների յանցանքները, քանզի հպարտութիւնը, նախանձն ու ատելութիւնը խորհուրդներով են լինում եւ մեծամեծ մեղքեր են: 2 Ինչպէս որ քանի դեռ թշնամին ամրոցից հեռու է, դիւրաւ կարելի է զգուշանալ նրանից, իսկ երբ յարձակուելով գրաւի ամրոցը եւ ներս մտնի, այնժամ դժուար է այնտեղից նրան հանել, այդպէս եւ դու, քանի դեռ խորհուրդների պատերազմը մտքիդ ամրոցից հեռու է, զգուշացի՛ր նրանից, իսկ երբ յարձակուելով գրաւի ամրոցդ եւ ներս մտնի, այնժամ առաւել նեղութիւն կպատճառի քեզ: 3 Ուստի դու զօրացի՛ր ու խորհուրդներդ միշտ աստուածահաճո՛յ պահիր, որպէսզի Սուրբ Հոգու տաճար դառնաս, քանզի Նրան վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ յաւիտեանս. ամէն:

* Բ Կոր. Ժ 5
** Յովհ. Ը 12
† Մատթ. Ե 28

ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ

ԽՐԱՏ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

I. 1 Արդ, ինչպէս ասում է առաքեալը. «Ամենայն խոնարհութեամբ միմեանց պէտք է աւելի լաւ համարել, քան ինքներդ ձեզ»*: 2 Արդ, «ամենայն» ասելով՝ յայտնում է, որ խոնարհութեան մասերը շատ են. կան ոմանք, որ խոնարհութիւնից քիչ մաս ունեն, ոմանք՝ շատ, եւ միւսները՝ ամբողջը:

II. 1 Արդ, նախ եւ առաջ՝ խոնարհութիւն է՝ որ [մարդ] ինքն իրեն անարժան է համարում բոլոր մարդկանցից, ինչպէս մաքսաւորը, որ չէր կամենում աչքերը երկինք բարձրացնել, որի համար Տիրոջից դրուատուեց: 2 Խոնարհութիւն է եւ հնազանդութիւնը, որ [մարդ] ինքն իրեն ծառայի կարգին է դասում եւ ծառայում ընկերոջը, ինչպէս ասում է առաքեալը. «Քրիստոսի երկիւղով միմեանց հնազանդ եղէք»**: 3 Խոնարհութիւն է սուգն ու արտասուքը, որ [մարդ] ինքն իրեն վարձկան չի համարում, թէպէտ առաքինութիւն է գործում, որի մասին Տէրն ասում է. «Երբ կատարէք առաքինութեան բոլոր գործերը, ասացէ՛ք, թէ՝ «Անպիտան ծառաներ ենք. ինչ որ պարտաւոր էինք անել, այն արեցինք»†: 4 Խոնարհութիւն է՝ որ [մարդ] համբերում է եղբօրը բարկութեան ժամին եւ իրեն է յանցաւոր համարում, քանզի զայրանալը եւ ընդդիմանալը հպարտութիւն է, ինչպէս ասում է Սողոմոնը. «Ամբարտաւան մարդը նախատինքների չի համբերում»††: 5 Խոնարհութիւն է լռութիւնը՝ որ [մարդ] իրեն արժանի չի համարում առաջ գալ եւ բազմութեան առջեւ խօսել, ինչպէս ասում է Տէրը. «Ով իր անձից է խօսում, իր անձի փառքն է որոնում»‡: 6 Խոնարհութիւն է՝ երբ մեծարում են ընկերոջդ եւ քեզ անտեսում, դու չես տրտմում, այլ

* Փիլ. Բ 3
** Եփես. Ե 21
† Ղուկ. ԺԷ 10
†† Հմմտ. Առակ. ԺԴ 7:
‡ Յովհ. Է 18

այսպէս ես ասում, թէ՝ «Սրան էլ արժանի չեմ, ինչ ունեմ», ինչպէս ասում է Սողոմոնը. «Մեծամեծներին մի՛ ձգտիր, այլ չափի մէջ պահիր քո անձը եւ Տիրոջ առջեւ շնորհներ կգտնես»*: 7 Խոնարհութիւն է՝ որ ընկերոջը ծառայ չի պահում, այլ ինքն է նրան ծառայում, ինչպէս ասում է Տէրը. «Մարդու Որդին չեկաւ ծառայութիւն ընդունելու, այլ ծառայելու»**: 8 Խոնարհութիւն է՝ երբ տեսնում ես որեւէ մէկի յանցանքը եւ չես բամբասում եւ ոչ էլ դատում նրան, այլ այսպէս ասում, թէ՝ «Ես յանցաւոր եմ, ուրիշ մեկին չեմ կարող դատել», որի մասին Տէրն ասում է. «Մի՛ դատէք, որպէսզի չդատուէք»†: 9 Խոնարհութիւն է եւ եղբօրը սիրելը, քանզի սիրոյ պատուիրանները հետեւեալն են՝ խոնարհ լինել ընկերոջ առջեւ, հիւանդութեան դէպքում ցաւակից լինել, տրտմութեան ժամանակ մխիթարել. [սեփական] անձը ծառայութեան տալ: 10 Իսկ հպարտն այսպէս չի անում եւ արժանի չի համարում եղբօր առջեւ խոնարհուելու, այլ իրեն բոլորից վեր է համարում: 11 Այս մասին գրուած է, թէ՝ «Խոնարհութիւնը որպէս աղ համեմիչ է ողջ առաքինութեան, եւ ուր սէր եւ խոնարհութիւն չկայ, առաքինութիւնը նեխած է եւ անարգ»: 12 Խոնարհութիւն է՝ որ ինչ առաքինութիւն էլ գործում ես, չես խորհում [այդ մասին] եւ հպարտանում, ինչպէս փարիսեցին, այլ խորհում ես մեղանչածներիդ մասին եւ խոնարհեցնում միտքդ, ինչպէս առաքեալն էր իրեն յանցաւոր համարում եւ ասում. «Հայհոյիչ էի եւ հալածիչ եւ ողորմութիւն գտայ»††. 13 եւ դարձեալ, թէ՝ «Մոռացել եմ յետեւում մնացած առաքինութիւնները եւ ձգտում եմ դէպի առջեւումս եղածները»‡: 14 Խոնարհութիւն է՝ երբ մարդիկ քեզ փառաբանում են եւ պարգեւներ տալիս, [սակայն] դու քո անձի արժանիքներին չես վերագրում, այլ Աստծուն ես փառաբանում, Աստծուց գոհանում եւ ասում, թէ՝ այն Քո ողորմութիւնից է եւ ոչ ըստ իմ արժանիքների, ինչպէս ասում է Սողոմոնը. «Որչափ մեծութեան էլ հասնես, քեզ խոնարհ պահիր եւ շնորհ եւ ողորմութիւն

* Տե՛ս Առակ. ԺԶ 3:
** Մատթ. Ի 28, Մարկ. Ժ 45
† Մատթ. Է 1
†† Ա Տիմ. Ա 13
‡ Փիլ. Գ 13

կգտնես Աստծու առջեւ»*: 15 Խոնարհութիւն է՝ երբ վշտի ես հանդիպում, եւ նեղութիւն է քեզ վրայ հասնում, դու չես տրտմում, այլ գոհանում Աստծուց. «Ըստ իմ մեղքերի ես ոչ միայն այսչափ, այլեւ բազում պատիժների եմ արժանի, եւ օրհնեալ է Աստուած, որ այս անցաւոր կեանքում եւ մահկանացու մարմնի մէջ ինձ վշտի արժանացրեց», ինչպէս ասում է առաքեալը. «Ցօժար եմ նեղութիւնների, վշտերի, չարչարանքների, որովհետեւ երբ տկարանում եմ, այդժամ զօրանում եմ»**: 16 Խոնարհութիւն է անշուք հանդերձը, որ [մարդ] թանկարժէքն ու փառաւորը չի հագնում, որովհետեւ մարդիկ փառքը հանդերձից են որսում. այս մասին գրուած է. «Մի՛ ցոփացէք մեղկ եւ ամբողջովին պճնուած զգեստներով, որոնց գեղեցկութիւնն ապաշնորհ է»†: 17 Խոնարհութիւն է՝ երբ օրը խաղաղութեամբ է անցնում, հասնում ես երեկոյին [եւ] գոհանում Աստծուց, թէ՝ «Մարդկանցից եւ սուրբերից շատերն իսկ անհանգիստ եւ կարօտ են, իսկ ինձ, որ անարժան եմ, հաց եւ կերակուր տուեցիր եւ օրս խաղաղութեամբ անցկացրեցիր, այդ Քո ողորմութիւնից է եւ ոչ ըստ իմ արժանիքների», որի մասին մարգարէն ասում էր. «Ո՞վ եմ ես, Տէ՛ր իմ, Տէ՛ր, եւ իմ ազգականի տունն ի՞նչ է, որ այդչափ սիրեցիր ինձ»††: 18 Խոնարհութիւն է՝ երբ կամենում ես առաքինութիւններ գործել, սկսելու եւ աւարտելու համար քեզ բաւարար չես համարում, այլ Աստծուց ես առաքինութիւն եւ օգնականութիւն խնդրում, թէ՝ «Օգնի՛ր իմ տկարութեանը, որ կարողանամ կատարել Քո կամքը», ինչպէս եւ Տէրն է. ասում. «Ով հաստատուած է Իմ մէջ, եւ Ես՝ նրա մէջ, նա շատ պտուղ է տալիս, որովհետեւ առանց Ինձ ոչինչ անել չէք կարող»‡: 19 Խոնարհութիւն է, երբ սիրտդ զայրանում է, դու արգելում ես ցասումը եւ քեզ արժանի չես համարում ընդդիմանալ եղբօրը, ինչպէս ասում է Սողոմոնը. «Խոնարհամիտը միայն ողոքիչ խօսքերով է աղաչում, իսկ հպարտը յանդուգն պատասխան է տալիս»‡‡: 20 Խոնարհութիւն է՝

* Առակ. ԺԶ 3
** Բ Կոր. ԺԲ 13
† Գրիգոր Աստուածաբան, Մաս ԾՁՁդեան. տե՛ս *կակուղ*, ՆԲՀԼ, հ. Ա, էջ1036:
†† Բ Թագ. Է 18
‡ Յովհ. ԺԵ 5
‡‡ Առակ. ԺԸ 23

երբ սիրում ես ոչ միայն նրանց, որ փառաւորուած են մարդկանցից, այլ խոնարհւում ես աղքատների առջեւ եւ մխիթարում պանդուխտներին, ինչպէս Տէրն էր անում: 21 Պիղատոսը խօսում էր, եւ Նա պատասխան չէր տալիս, իսկ աւազակի հետ գթառատութեամբ խօսում եւ պարգեւներ էր տալիս. երբ կոյրերը աղաղակում էին, կանգ առաւ եւ դիպչելով նրանց աչքերին՝ բացեց: 22 Խոնարհութիւն է՝ որ միշտ քո կամքով չես գործում, այլ վարդապետներից եւ առաջնորդներից խրատ ես վերցնում, ինչպէս Մովսէսը, որ չանտեսեց Յոթորի խրատները, այլ ընդունեց եւ բոլորը կատարեց: 23 Խոնարհութիւն է՝ որ [մարդ] բոլոր դրժելի իրերից զարհուրում, զգուշանում եւ չի հպարտանում՝ ասելով. «Ո՞վ ինձ կյաղթի», որի մասին Սողոմոնն ասում է. «Սպառնալիքները փշրում են իմաստունների սրտերը, իսկ հպարտն, ինքն իրեն ապաւինելով, որոգայթի մէջ է ընկնում»*: 24 Խոնարհութիւն է՝ երբ առաքինութիւն ես կատարում, չես խորհում, թէ՝ «Իմ անձով եւ զօրութեամբ կատարեցի, այլ՝ Աստծու օգնականութեամբ», ինչպէս ասում է առաքեալը. «Ո՛չ ես, այլ Աստծու շնորհը, որ իմ մէջ է»**: 25 Խոնարհութիւն է՝ որ առաջ չես ձգտում եւ ունեցածիցդ աւելի բարձր աստիճան չես վերցնում, այլ առաջնորդների կողմից կանչուելով ես ընդունում, ինչպէս ասում է առաքեալը. «Ոչ թէ նա է ընտրեալ, ով ինքն իրեն է գովում, այլ ում Աստուած է գովում»†:

III. 1 Արդ, ողջ առաքինութեան հիմքը խոնարհութիւնն է, եւ բոլոր սուրբերը խոնարհութեամբ են հաճոյ եղել Աստծուն: 2 Ինչպէս Աբրահամն էր խոնարհւում եւ ասում. «Ես հող եմ ու մոխիր»††, դրա համար նահապետների գլուխ եղաւ: 3 Այսպէս եւ Դաւիթն էր ասում. «Ես որդ եմ եւ ոչ մարդ, նախատինք եմ մարդկանց համար»‡, դրա համար Աստծուց մարգարէութեան շնորհ ստացաւ եւ կանչուեց ժողովրդին թագաւորելու: 4 Այսպէս եւ Եսային էր ասում. «Վա՜յ ինձ,

* Հմմտ. Առակ. ԺԷ 10:
** Հմմտ. Ա Կոր. ԺԵ 10:
† Բ Կոր. Ժ 18
†† Ծն. ԺԸ 27
‡ Սաղմ. ԻԱ 7

որովհետեւ պիղծ շուրթեր ունեմ»*, դրա համար աստուածաբան կոչուեց մարգարէների մէջ: 5 Այսպէս եւ Կարապետն էր ասում. «Արժանի չեմ արձակելու Նրա կօշիկների կապերը»**, դրա համար արժանի եղաւ Քրիստոսին մկրտելու: 6 Այսպէս եւ Պետրոսն էր ասում. «Հեռո՛ւ գնա ինձանից, Տէ՛ր, որովհետեւ մեղաւոր մարդ եմ ես»†, դրա համար երկնքի [արքայութեան] բանալիները ստացաւ եւ Եկեղեցու հիմք եղաւ: 7 Այսպէս եւ Պողոսն էր ասում. «Արժանի չեմ առաքեալ կոչուելու»††, դրա համար երկինք թռաւ եւ դրախտը տեսաւ:

IV. 1 Արդ, քանզի խոնարհութիւնն է ողջ առաքինութեան գլուխը, ուստի մարգարէն ասում է. «Աստուած չի արհամարհում խոնարհ հոգին եւ սուրբ սիրտը»‡: 2 Եւ Եսային ասում է. «Ես որտե՞ղ բնակուեմ, եթէ ոչ հեզերի, խոնարհների մէջ»‡‡: 3 Եւ նոյն Ինքը՝ Տէրն ասում էր. «Ով խոնարհեցնում է [իր] անձը, կբարձրանայ»#: 4 Եւ Պողոսն ասում է. «Ամենայն խոնարհութեամբ միմեանց պէտք է աւելի լաւ համարել, քան ինքներդ ձեզ»##: 5 Եւ վարդապետներից անթիւ վկայութիւններ կան խոնարհութեան մասին, քանզի ոչ ոք Աստծուն այնպէս սիրելի չէ, ինչպէս նա, ով խոնարհ է եւ իրեն յետին է համարում յանուն Քրիստոսի, որովհետեւ Նրան վայել է փառք եւ իշխանութիւն այժմ եւ յաւիտեանս. ամէն:

* Ես. Զ 5
** Յովհ. Ա 27, Մարկ. Ա 7
† Ղուկ. Ե 8
†† Ա Կոր. ԺԵ 9
‡ Սաղմ. Ծ 19
‡‡ Ես. ԿԶ 2
# Ղուկ. ԺԴ 11
Փիլ. Բ 3

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ, ԶՂՋՄԱՆ ԵՒ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

I. [1] *Եւ որովհետեւ հասանք առաքինութեան սկզբին ու մօրը՝ խոստովանութեանը՝ զղջմամբ եւ ապաշխարութեամբ հանդերձ, որն Աստուծոյ սուրբ Եկեղեցու բարձրագոյն աշտարակն է եւ սուրբ Աւազանի բոլոր ծնունդների յոյսը, որը շատ է կամենում եւ սիրում Աստուած եւ գովում Հին եւ Նոր Կտակարաններով, եւ բոլոր սուրբերը [իրենց] գրուածքներով յորդորում են մեղաւորներիս՝ դառնալ, ապաշխարել եւ ընկնել Աստուծոյ առաջ:* [2] *Որովհետեւ Աստուած շատ է կամենում, սիրում եւ գորովով կանչում ամէն մէկին եւ ուրախութեամբ ցնծում մեղաւորի դարձի համար:* [3] *Եւ խիստ տրտմում է, երբ Իր անարատ ձեռքի ստեղծածն անզեղջ է մնում:*

II. [1] *Եկէ՛ք դարձեալ, ո՛վ աստուածասէր եղբայրներ, Աստուածաշունչ Գրքից քննենք այս անհուն ուրախութեան, երանութեան եւ կատարեալ բարեգործութեան գեղեցկութիւնը, որ Աստծուց օտարացածներին վերստին դարձնում է դէպի Աստուած եւ ժառանգորդներ դարձնում Նրա անհասանելի պարգեւներին:* [2] *Արդ, Աստուծոյ՝ մարդկանց համար ստեղծած բոլոր բարիքներից առաւել մեծ եւ զարմանալի են խոստովանութիւնը եւ զղջման յոյսը:* [3] *Եւ դո՛ւ, ո՛վ մարդ, մի՛ յուսահատուիր, թէ յանցանքներդ շատ են, որովհետեւ քո բազում չար գործերն ու մեղքերը չեն կարող յաղթել Աստուծոյ ողորմածութեանը:* [4] *Առաւել եւս համարձակ է խօսքս, քանի որ ինչպէս Աստուած է անբաւ եւ անսահման, մեծութեամբ՝ անճառ, վերագոյն, քան չար սատանան, որովհետեւ նրա Արարիչն ու Տէրն է եւ անշէջ հուրն է առաքելու նրան, այնպէս էլ Աստուծոյ գութը, ողորմածութիւնն ու մարդասիրութիւնը աւելի բարձր ու մեծ են, քան սատանայի չարութիւնը եւ մեղքը, որ գործել է տալիս մարդկանց:* [5] *Եւ ինչպէս թոյլ կրակը չի կարող վնաս պատճառել լայնածաւալ ծովին, այնպէս էլ մեղքերի բազմութիւնը, որ գործւում է աշխարհում, խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ անհետանում եւ ջնջւում է Աստուծոյ*

*ողորմածութեան առջեւ, կամ ինչպէս մոմը հալչում է կրակի առջեւ, եւ կամ նման է ծխի, որ անհետանում է**: [6] *Միայն հաւա՛տ ունեցիր քո հոգում, հեռացի՛ր մեղքերից, թո՛ղ դրանք եւ ճշմարտապէ՛ս հաւատա, որ Աստուած կարող է փրկել քեզ, քանի որ Իր Որդուն [իսկ] չխնայեց Իր թշնամիների համար, քանի որ առաւել եւս փրկում եւ ուրախանում է, երբ սիրելիներս ու բարեկամներս վերադառնում ենք Իր մօտ:*

[7] *Նայի՛ր եւ տե՛ս օրինակը եւ մի՛ յուսահատուիր դու, ո՛վ մարդ. աշխարհում չկային [այնպիսի] մեղքեր եւ չար անօրինութիւններ, որ չգործեցին նինուէացիները, բայց երբ զղջացին, քիչ օրեր անց արտասուքներով հանգցրեցին Աստուծոյ բարկութեան՝հուրը:* [8] *Մեծն Դաւիթը շնացաւ եւ սպանեց, բայց Աստուած ընդունեց նրա դարձը:* [9] *Իսրայէլի Մանասէ թագաւորը Յեսայիաս մեծ մարգարէին սղոցեց եւ Աստուծոյ ժողովրդին բռնութեամբ կռապաշտութեան դարձրեց, բայց երբ դարձի եկաւ եւ ապաշխարեց Բաբելոնում՝ շղթաների եւ բանտարկութեան մէջ, եւ զղջումով ասաց «Տէր ամենակալ»-ը, [Աստուած] ուրախացաւ նրա դարձով եւ վերստին թագաւորեցրեց նրան Երուսաղէմում***: [10] *Տե՛ս եւ Պետրոսի դառն արտասուքը, որ ջնջեց ուրացութեան թարախը*†: [11] *Նայի՛ր եւ տե՛ս Պօղոսի խոնարհութիւնը, որ յետին եւ հալածիչ անուանեց իրեն եւ բոլոր մեղաւորների գլուխ*††: [12] *Յիշի՛ր մաքսաւորին եւ մի՛ մոռանա նրա գործը, որովհետեւ գոչում էր տաճարում եւ ասում էր. «Աստուա՛ծ, ների՛ր ինձ, մեղաւորիս»*‡, *եւ ջնջուեց նրա ամբողջ չար անօրինութիւնը, եւ արդարացած իջաւ [տաճարից]:* [13] *Ա՛ռ եւ մտքո՛ւմդ պահիր աւազակի հաւատը, որը մի խօսքով ջնջեց մեղքերի թարախը եւ բացեց դրախտի փակուած դուռը:* [14] *Նրա հետ եւ դու ասա՛. «Յիշի՛ր ինձ, Տէ՛ր, երբ գաս Քո արքայութեամբ»*‡‡: [15] *Դու արա՛, ինչպէս անառակ որդին, որովհետեւ թէպէտ շատ հեռացաւ Աստծուց եւ մեծամեծ մեղքերով՝ միացաւ դեւերին, բայց յիշեց Հօր գութը, դարձաւ եւ ասաց. «Հա՛յր,*

---

* Տե՛ս Սաղմ. ԿԷ_3:

** Տե՛ս Բ Մն. ԼԳ 11-19:

† Տե՛ս Մատթ. ԻԶ 75, Մարկ. ԺԴ 72, Ղուկ. ԻԲ 62:

†† Տե՛ս Ա Կոր. ԺԵ 9:

‡ Ղուկ. ԻԳ 13

‡‡ Ղուկ. ԻԳ 13

մեղանչեցի երկնքի դէմ եւ Քո առջեւ»*, եւ Տէրը նախկին պատուին բարձրացրեց նրան:

III. 1 Գրուած է, թէ՝ «Ոչ ոք առանց մեղքի չէ, եթէ անգամ մէկ օր մնաց աշխարհում»**, եւ դարձեալ, թէ՝ «Ոչ մի կենդանի [մարդ] չի՛ արդարանայ Քո առջեւ»†: 2 Բայց ամէն ոք թող այս իմանայ, որ բացի այն, որ Աստուած Իր պատկերով ստեղծեց մեզ, եւ բացի այն, որ մեզ համար մարդ եղաւ եւ չարչարուելով մեռաւ խաչի վրայ, ունենք Աստուծոյ մեծ բարիքը՝ խոստովանութիւնն ու ապաշխարութիւնը, որովհետեւ այն որպէս երկրորդ Աւազան շնորհեց մեզ, որ դրա միջոցով նախկին պատուին բարձրացնի մեզ: 3 Որովհետեւ Աստուած գիտէր մեր՝ մարդկանց թոյլ եւ մեղսասէր բարքը, որ չէինք կարող պահել սուրբ Աւազանի շնորհները, [ուստի] պարգեւեց մեզ դիւրին [միջոց]՝ խոստովանութիւնը: 4 Քանի որ որքան էլ մեծ լինի մեղքը, խոստովանութեան բերուելով՝ սոսկ մեղք է կոչւում եւ արտասուքներով ջնջւում: 5 Իսկ առանց խոստովանութեան՝ մեղքը թէպէտ փոքր լինի, սակայն մահու չափ է, որովհետեւ անմահ տանջանքների է տանում նրան, ով ունի այն:

IV. 1 Արդ, եկէ՛ք, Ադամի որդիներ՛ը, օրհնենք Նրան, Ով Իր պատկերով ստեղծեց մեզ, եւ դարձեալ Ինքը սիրով հագաւ մեր պատկերը, եւ փառաւորենք Նրան, որ դարձեալ գթայ մեզ եւ ընդունի մեր դարձը: 2 Արդ, ծածկագէտ Աստուած, եթէ գտնէր անկեղծ զղջում կամ «մեղայ» սատանայի սրտում կամ Ադամի մէջ, Նոյի դարաշրջանում ապրողների, սոդոմայեցիների, փարաւոնի եւ կամ չար Յուդայի մէջ, մեծապարգեւ սիրալիր գթասրտութեամբ կընդունէր նրանց, քանզի անբաւ է Նրա ողորմածութիւնը: 3 Եւ այս անպատում չարիքներն ու նեղութիւնները չէին հասնի մարդկանց որդիների վրայ, եւ ոչ էլ Աստծուն հարկ կլինէր մարդանալ եւ մարմնով չարչարուել մարդկային ցեղի համար, որ կամովին յանձն առաւ, քանզի մարդասէր է եւ ողորմած: 4 Ահա՛ բարձր աշտարակ, ահա՛ հաստատուն հիմքով եւ անսասանելի սանդուղք, ահա՛ հեշտագնաց եւ դիւրանցանելի կամուրջ՝ սրտանց զղջումը: 5 Եկէ՛ք, Աստուծոյ սիրելինե՛ր, առնենք այս

* Ղուկ. ԺԵ 18

** Հմմտ. Յոբ ԺԵ 14:

† Տե՛ս Սաղմ. ՃԽԲ 2:

եւ բարձրանանք դէպի Աստուած, որ միշտ կանչում է մեզ՝ ասելով. «Եկէ՛ք Ինձ մօտ, բոլոր հոգնածնե՛րդ եւ բեռնաւորուածնե՛րդ, եւ Ես կհանգստացնեմ ձեզ»*: 6 Ամէն ոք գիտէ այս, որ երբ մեղաւորը խոստովանում է եւ ելնում խոստովանահօր [մօտից], այնժամ թեթեւանում է նրա խիղճը, հանգստանում է նրա հոգին, կարծես երկաթէ բեռներ վերցրեցին նրա թիկունքից:

V. 1 Արդ, Աստուած ուրախանում է, եւ հրեշտակները ցնծում են մարդկանց զղջումով, որ արտասուքներով եւ խոստովանութեամբ է լինում, ցնծում են եւ արդարների դասերը երկրի վրայ, երբ տեսնում են սրտանց եւ անկեղծ ապաշխարութիւնը: 2 Ո՛վ դու, մա՛րդ, մի՛ յապաղիր եւ մի՛ ասա, թէ՝ «Վաղը կելնեմ մեղքերից եւ կգնամ առ Աստուած»: 3 Մի՛ խորհիր այդ քո մտքում, որովհետեւ չար դեւն է սերմանում այն խորհուրդներիդ մէջ, որ յապաղես եւ յանկարծակի անյոյս մեռնես եւ իր հետ այրուես [յաւիտենական] հրում: 4 Եւ դարձեալ ասում է չար սատանան, թէ՝ «Տո՛ւր ինձ քո երիտասարդութիւնը եւ սրտանց կատարի՛ր իմ կամքը, իսկ երբ ծերանաս, Աստծուն տո՛ւր քեզ եւ բարւոք ապաշխարի՛ր»: 5 Ո՛վ դու, մա՛րդ, մի՛ խաբուիր նրա պատրանքներով, որովհետեւ անյայտ է մահուան [ժամանակը], չգիտես՝ ծերանալո՞ւ ես, թէ՞ ոչ: 6 Մահը ե՛ւ ծերերինն է, ե՛ւ երիտասարդներինը: 7 Որի համար Սողոմոն Իմաստունը՝ իմաստութեան մայրն ու աստուածայինը, գոչում է, թէ՝ «Յիշի՛ր քո Արարչին քո երիտասարդութեան օրերին»**, քանզի կարող ես այժմ ապաշխարել զօրաւոր մարմնով: 8 Աստուածային Պողոս առաքեալը գրել է. «Ահա՛ ընդունելի ժամանակը, ահա՛ փրկութեան օրը»†, քանի դեռ մարմնի մէջ ես եւ տէրն ես քո կամքի, ահեղ Դատաստանից առաջ, քանի որ այժմ Աստուած բազմել է ողորմածութեան աթոռին, եւ ամէն ոք, ով պարտական է մեղքերի համար, գնում է Նրա մօտ, մեղքերի թողութիւն խնդրում եւ ողորմութիւն ստանում Նրանից: 9 Իսկ ով յապաղում է եւ առանց ապաշխարելու մեռնում, Վերջին Օրը Աստուած նստում է դատաստանի եւ արդար իրաւունքների աթոռին եւ չի ողորմում, այլ՝ հատուցում ըստ գործերի: 10 Ապա արդարեւ է գոչում մարգարէն

* Տե՛ս Մատթ. ԺԱ 29:

** Տե՛ս Ժող. ԺԲ 1:

† Ա. Կոր. Զ 2

Աստուծոյ անունից եւ ասում. «Ձեմ կամենում մեղաւորի մահը, այլ՝ նրա ապրելը»: 11 *Մէկ այլ մարգարէ ասում է, թէ՝ «Խոստովանի՛ր դու քո մեղքերը, որ արդարացուես»***, *իսկ մէկ ուրիշն ասում է, թէ՝ «Կպատմեմ իմ անօրինութիւնները»*†, *քանզի՝ «Նեխեցին իմ հոգու վէրքերը»*†† *եւ՝ «Լաց եղայ իմ մահճում եւ արտասուքով թրջեցի անկողինս»*‡ *եւ՝ «Ողորմի՛ր ինձ, Տէ՛ր, քանզի հիւանդացայ հոգով»*‡‡ *եւ թէ՝ «Ողորմի՛ր ինձ, Աստուա՛ծ, ըստ Քո մեծ ողորմութեան»*# *եւ թէ՝ «Ողորմի՛ր ինձ, Աստուա՛ծ, քանզի ընդոտնեց ինձ մարդը, որ թշնամին է»*## *եւ դարձեալ՝ թէ. «Ողորմի՛ր մեզ, Տէ՛ր, քանզի Քեզ ապաւինեցինք»*§ *եւ՝ «Դու, Աստո՛ւած, ապաշխարողների յոյսն ես»*§§ *եւ՝ «Յո՛յց տուր ինձ Քո բարերարութիւնները» եւ բազում այլ այսպիսի բաներ, որ յոյս են տալիս մեղաւորներին:* 12 *«Եթէ քո եղբայրը բազում անգամ մեղանչի եւ ասի՝ զղջում եմ, ների՛ր նրան»****, *- այս խօսքերը Տէրն ասաց Պետրոսին: Եւ եթէ մարդը ներում է մարդուն, ապա տե՛ս, թէ Աստուած որքան առաւել է ներում [նրան], ով անկեղծօրէն դառնում է դէպի Նա:*

VI. 1 *Ահա՛, սիրելինե՛ր, այս ամէնը եւ բազում այլ [վկայութիւններ], որ կան Աստուածային Գրքում, թող օրինակ լինեն մեզ, որ առանց զղջումի չմնանք մեղքերի մէջ:* 2 *Քանի որ այն սիրտը, որը չի զղջում եւ ապաշխարում, նման է սատանայի սրտին, որը նման է դարբնի սալի:* 3 *Որ բոլոր սուրբերը, աստուածային խօսքերով՝ որպէս մտրակով յանդիմանում են նրան եւ զարկում, բայց [դրանք] ամենեւին չեն ազդում եւ հետք չեն թողնում նրա մէջ, ինչպէս փարաւոնի, Յուդայի եւ սոդոմայեցիների եւ Նոյի ժամանակակիցների սրտերում:*

* Տե՛ս Եզեկ. ԺԸ 23:
** Տե՛ս Ես. ԽԳ 26:
† Տե՛ս Սաղմ. ԼԱ 5:
†† Հմմտ. Սաղմ. ԼԷ 6:
‡ Տե՛ս Սաղմ. Զ 7:
‡‡ Հմմտ. Սաղմ. Զ 3:
# Սաղմ. Ծ 3
Տե՛ս Սաղմ. ԾԵ 2:
§ Հմմտ.Սաղմ. ԺԵ 2:
§§ Հմմտ. Սաղմ. Ղ 9:
*** Տե՛ս Ղուկ. ԺԷ 4:

4 *Այնքան կարեւոր եւ բարձրագոյն գործ են խոստովանութիւնն ու զղջումը, որ ոչ միայն Եկեղեցու վարդապետները եւ Աստուածային Գրքերն են գովում այն, այլեւ արտաքին իմաստասէրները սրա [համար] ասպարէզ մտան եւ յոյժ գովեցին [նրան], ով առաւել ունի այն:* 5 *Որովհետեւ թէեւ կռապաշտ էին, բայց այս բարւոք խորհեցին, քանզի Պիթագորասն ասում է, թէ՝ «Մի՛ ծածկիր քո մեղքերը, այլ յանդիմանի՛ր, որ բժշկուես»:* 6 *Տիմոսթենէսն ասում է, թէ՝ «Ով մարմնի ցաւերը թաքցնում է բժիշկներից, չի կարող առողջ լինել, նոյնպէս էլ, ով թաքցնում է մեղքերը, չի բժշկուի»:* 7 *Արիստոտէլն ասում է, թէ՝ «Ով հեզութեամբ խոստովանում է, հաւասար է լինում անմեղներին»:* 8 *Կլիտարքոսն ասում է, թէ՝ «Մի տախտակի վրայ հուրը հանդերձի հետ մի՛ դնիր, նոյնպէս եւ մի՛ պահիր մեղքերը քո սրտում»:* 9 *Թէոդիմոսն ասում է, թէ՝ «Աշխարհում կան մեղքեր, որոնք խափանում են Աստուծոյ բարերարութիւնը»:* 10 *Սրանցից մէկը նայում էր մարդկանց գործերին, լաց էր լինում եւ ասում. «Վա՜յ [ձեզ], քանզի իզուր էք կոծում ու խռովւում»:* 11 *Մէկ ուրիշը ծիծաղում էր մարդկային ցեղի վրայ եւ ասում. «Ցիրաւի ծաղրի էք արժանի, որովհետեւ հրճւում էք, ինչպէս երեխաներ»:* 12 *Նրանցից մէկ ուրիշը նայեց մի մեծագոյն քաղաքի վրայ եւ ասաց. «Ա՛յ շէն, ա՛յ շէն, թէ քանի՛ տէր ես փոխել դու», որ Սողոմոն Իմաստունը ունայն եւ սուտ է յայտարարում, եւ այս աշխարհի աւելորդութիւն:* 13 *Եւ սուրբերից մէկ ուրիշն ասում է, թէ՝ «Այս աշխարհը փոխակերպութեան եւ փոփոխման տեղ է»:*

VII. 1 *Ուստի պէտք է հասկանալ ասուածները, ատել այս աշխարհը եւ սրա կերպարանքը, անկեղծօրէն խոստովանել մեր մեղքերը, եւ Նա կթողնի, ինչպէս խոստացաւ Իր անսուտ բերանով:* 2 *Եւ մենք անդադար խնդրենք Աստծուց, որ անտեսի մեր յանցանքները, տայ մեզ զղջման հոգի եւ մեր միջից հանի քարեղէն սիրտը:* 3 *Ինչպէս նաեւ խնդրենք Աստծուց, որ անմեղ դարձնի մեզ եւ բոլոր հաւատացեալներին ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, Որին փառք յաւիտեանս. ամէն:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄՈՒՏՔ.....7
ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
Մարտիրոսների մասին
(թարգմ.՝ Մեսրոպ քահանայ Արամեանի)..... 9
ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
Յորդորակ խոստովանական ապաշխարութեան
(թարգմ.՝ Սեդա Ստամբոլցեանի) 13
ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ
«Հայր մեր» աղօթքի մասին
(թարգմ.՝ Խաչիկ Գրիգորեանի).....24
ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ
Թուղթ յանցաւոր վարքի խոստովանութեան մասին
(թարգմ.՝ Մեսրոպ քահանայ Արամեանի).....32
ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ
Թուղթ ապաշխարութեան մասին
(թարգմ.՝ Մեսրոպ քահանայ Արամեանի).....39
ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ
Թուղթ պահքի պնդութեան մասին
(թարգմ.՝ Մեսրոպ քահանայ Արամեանի).....46
ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ
Ընդունելի եւ անընդունելի աղօթքի մասին
(թարգմ.՝ Մեսրոպ քահանայ Արամեանի).....53
ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵՒԱՑԻ
Աստուծոյ կամքն ու երկիւղը ճշմարտութեամբ ծանուցող
սուրբ հոգեկիր վարդապետ Խոսրովի յոյժ օգտակար
եւ հոգեշահ խրատական պատգամները
(թարգմ.՝ Տիգրան Խաչատրեանի).....61
ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ
Քարոզ երկնքի արքայութիւնը փնտրելու մասին
(թարգմ.՝ Տիգրան Խաչատրեանի).....77
ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ
Խորհուրդների մասին
(թարգմ.՝ Սեդա Ստամբոլցեանի).....88
ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ
Խրատ խոնարհութեան մասին
(թարգմ.՝ Աշխէն Իւզբաշեանի).....91
ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԷՐ
Խոստովանութեան, զղջման եւ
ապաշխարութեան մասին
(թարգմ.՝ Մարթա Արաբեանի) 96

Խմբագիր Մեսրոպ քահանայ Արամեան
Տեխնիկական խմբագիր Արա Ստեփանեան
Վերստուգող սրբագրիչ Սեդա Ստամբոլցեան
Կազմը՝ Արեգ Ասատրեանի
Շարուածքը՝ ԳԱՆՁԱՍԱՐ
աստուածաբանական կենտրոնի
համակարգչային ծառայութեան